



ԶՄԻԱԾԻՆ

1981
Ը

AM 196



ԼԸ
ՏԱՐԻ

ԷԶՄԻԱԾԻՆ



ՊԱՇՏՈՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՒՅ
Ս. ԷԶՄԻԱԾՆԻ

Օգոստոս


1981



ՀՐԱՄԱՆԱԻ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐՔԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ





ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ԵՂԻՇԵ
ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐԺԸ, ԱՐԵՎՄՏՅԱՆ
ԵՎՐՈՊԱՅԻ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿ
Տ. ՍԵՐՈՎԲԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ ԵՎ
ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆԻ
ԴԻՎԱՆԱՊԵՏ Տ. ԾԱՀԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱԾԵՄՅԱՆԸ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Հայոց Հայրապետի հրավերով հուլիսի 22-ին, չորեքշաբթի օրը, երեկոյան, ուխտավորաբար Մայր Աթոռ ժամանեց Երուսաղեմի հայոց ամենապատիվ Տ. Եղիշե սրբազան պատրիարքը, ընկերակցությամբ Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ և Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի հայոց առաջնորդ Տ. Սերովբե արքեպիսկոպոսի, ինչպես նաև Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ և Երուսաղեմի հայոց Սուրբ Աթոռի դիվանապետ, Ժառանգավորաց վարժարանի և ընծայարանի տեսուչ Տ. Ծախե արքեպիսկոպոսի:

Հանուն Հայոց Հայրապետի, Երևանի օդանավակայանում Մայր Աթոռի բարձրատիճան հյուրերին դիմավորեցին և բարի գալուստ մաղթեցին Մայր տաճարի լուսարարապետ Տ. Հուսիկ արքեպիսկոպոսը, Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Արսեն եպիսկոպոսը, Մայր Աթոռի միաբաններ Տ. Ստեփանոս և Տ. Զատիկ արեղաները:

Օդանավակայանում հյուրերին դիմավորեց և բարի գալուստ մաղթեց նաև, հանուն ՀՍՍՀ Միմիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի, նախա-

գահի տեղակալ տիար Անդրանիկ Հասրաթյանը:

Մայր Աթոռի պատվարժան հյուրերը Վեհաբանում հանդիպում ունեցան Հայոց Հայրապետի հետ, որը ջերմորեն ողջունեց ժամանումը ու ներկայությունը Տ. Եղիշե սրբազան պատրիարքի, Տ. Սերովբե և Տ. Ծախե արքեպիսկոպոսների:

Այնուհետև, սիրալիր մթնոլորտում, տեղի ունեցավ ջերմ գրույց.

Մայր Աթոռի հյուրերը Վեհափառ Հայրապետի հետ հուլիսի 23—25 օրերին, հանգստացան հյուրականի «Հայկաշէն» հայրապետական ամստանոցում:

Հուլիսի 26-ին, Վարդավառ. Տոն Պայծառակերպության Տեառն մերոյ Յիսուսի Բերիստոսի:

Օրվա մեծ տոնի առիթով, Էջմիածնի Մայր տաճարում հանդիսավոր ա. պատարագ է մատուցում տ. Ծախե արքեպիսկոպոսը և քարոզում «Որ ի լերինն ալակերպեալ ցուցեր զաստուածային քո զօրութիւնը» Պայծառակերպության շարականի բնաբանով:

Ա. պատարագին ներկա էին Վեհափառ Հայրապետը, սրբազան պատրիարք հայրը և Տ. Սերովբե արքեպիսկոպոսը:

Հուլիսի 26-ին Մայր Աթոռի հյուրերը հյուրականի ամատանոցից տեղափոխվեցին Երևան, հայրապետական վիլլա:

Հաջորդ օրը Ս. Եղիշեն սրբազան պատրիարքը, Ս. Սերովբեն և Ս. Ծաֆեն սրբազանները այցելեցին Սևան:

Հուլիսի 29-ին, չորեքշաբթի օրը, Վեհափառ Հայրապետը, Ս. Եղիշեն սրբազան պատրիարքը, Ս. Սերովբեն և Ս. Ծաֆեն արքեպիսկոպոսները, ընկերակցությամբ Ս. Սիոն, Ս. Հուսիկ, Ս. Արսեն սրբազանների այցելեցին Գառնիի վերականգնված տաճար և ապա ուխտի գնացին Ս. Գեղարդ վանք, ուր սիրով և հարգանքով ընդունվեցին վանահայր Ս. Եղիշեն քահանա Սարգսյանի և Ս. Գեղարդ վանքի միաբանության անդամների կողմից: Վանահայրը Վեհափառ Հայրապետին, սրբազան պատրիարքին, նրանց ընկերակցող սրբազաններին կեսօրին պատվեց մասնավոր ճաշկերույթով:

Հուլիսի 30-ին, հինգշաբթի օրը, Մայր Աթոռի թանկագին հյուրերը այցելեցին Երևանի Ս. Սարգիս առաջնորդանիստ եկեղեցի, ուր ջերմորեն նրանց դիմավորեց Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ Ս. Արսեն եպիսկոպոսը, չրջապատված քահանայից դատով և թեմական խորհրդի անդամներով:

Նույն օրը սրբազան պատրիարք հայրը, Ս. Սերովբեն և Ս. Ծաֆեն սրբազանները քաղաքավարական այցելություն տվեցին Երևանում ՀՍՍՀ Միևհատրների խորհրդին առնթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ տիար Ռուբեն Պարսամյանին և ջերմորեն ընդունվեցին:

Նույն օրը, ավելի ուշ, Ս. Արսեն սրբազանը Վեհափառ Հայրապետի, պատրիարք

սրբազանի, Ս. Սերովբեն և Ս. Ծաֆեն սրբազանների պատվին Երևանի «ԴՎԻՆ» հյուրանոցի ճաշարանում տվեց ճաշկերույթ, որն անցավ ջերմ ընդունելությամբ:


Հուլիսի 31-ից օգոստոսի 8-ը Մայր Աթոռի հյուրերը հանգստացան Ջերմուկի առողջարանում, ընկերակցությամբ Ս. Արսեն սրբազանի:


Օգոստոսի 4-ին, երեքշաբթի օրը, ժամը 15-ին, Վեհափառ սեղանատանը ողջերթի ճաշկերույթ տրվեց ի պատիվ Մայր Աթոռի մեծապատիվ հյուրերի: Ընդունելության ժամանակ ողջերթի ջերմ խոսքեր արտասանեցին Վեհափառ Հայրապետը, Եղիշեն սրբազան պատրիարքը, Սիոն սրբազանը և ՀՍՍՀ Միևհատրների խորհրդին առնթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ռուբեն Պարսամյանը:

Մայր Աթոռ այցելության օրերին, Վեհափառնում, Հայոց Հայրապետի հետ խորհրդակցական հանդիպում ունեցան տ. Եղիշեն սրբազան պատրիարքը, տ. Սերովբեն և տ. Ծաֆեն արքեպիսկոպոսները, մի շարք եկեղեցական, թեմական, մշակութային և հրատարակչական հարցերի շուրջ: Այդ առթիվ ընդունվեցին համապատասխան որոշումներ:

Օգոստոսի 5-ին, չորեքշաբթի օրը, ժամը 12-ին, լավագույն տպավորություններով Ս. Եղիշեն սրբազան պատրիարքը, Ս. Սերովբեն և Ս. Ծաֆեն արքեպիսկոպոսները, հրաժեշտ տվին Վեհափառ Հայրապետից և մեկնեցին Մայր Աթոռից:

Օղանավակալանում հանուն Հայոց Հայրապետի Մայր Աթոռի թանկագին հյուրերին ճանապարհեցին Ս. Հուսիկ, Ս. Արսեն սրբազանները, Ս. Մասիս, Ս. Մովսիկ վարդապետները, Ս. Ստեփանոս արեղան:





ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Օգոստոսի 2-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա ս. պատարագ է մատուցում տ. Մովսիս վրդ. Սարգսյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ է խոսում «Երաւոր պատշաճ»-ի:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

..

Օգոստոսի 5-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհափառ Հայրապետը, շուրջ մեկամսյա ամառային հանգստի է մեկնում Կիսլավոդսկի «Կրասնիե կամնի» առողջարանում:

Այս առթիվ Վեհափառ Հայրապետին ուղեկցում էր Սբ. Հովհաննէ վանքի վանահայր Տ. Մասիս վրդ. Գալստյանը՝ որպէս գովազաւանակիր:

..

Նույն օրը Վեհափառ Հայրապետի հանձնարարությամբ ուխտավորաբար Մայր

Աթոռում գտնվող տ. Հովնան արեղա Տերտերյանը մեկնում է Բեյրութ, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի համար ուսանողների ընդունելություն կատարելու համար:

..

Օգոստոսի 9-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա ս. պատարագ է մատուցում տ. Ստեփանոս արեղա Զաքարյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «...և թող մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց» Տերունական աղոթքի բնաբանով:

..

Օգոստոսի 16-ին, կիրակի.—Վերափոխումն Ս. Աստուածածնի.

Այսօր Մայր տաճարում մեծ տոնի առիթով Ավագ խորանի վրա ս. պատարագ է

մատուցում Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ արքեպս. Սանթրոյանը:

Հավարտ ս. պատարագի կատարվում է «Օրհնութիւն խաղողոյ» կարգը՝ նախագահութեամբ պատարագիչ արքայանի:

Օգոստոսի 17-ին, երկուշաբթի.—Յիշատակ մենելոց. Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Խաչատուր քնն. Ֆրանգյանը:

Ձկնի սրբոյ պատարագի կատարի հոգեհանգիստ վասն համօրէն ննջեցելոց:

Նոյն օրը Միլանից ուխտավորաբար Մայր Աթոռ է ժամանում հայոց հոգևոր հովիվ Տ. Սարգսի քնն. Սարգսյանը:

Օգոստոսի 23-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Բարսեղ քնն. Ղազարյանը:

Օգոստոսի 26-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհափառ Հայրապետը Կիպովոդսկի «Կրասնի կամի» առողջարանում հանգրտանալուց հետո վերադառնում է Մայր Աթոռ: Վեհափառ Հայրապետին ողջեցում էր Տ. Մասիս վարդապետ Գալստյանը:

ԱՅՏՆԵԼՈՒԹՅՈՒՆ ԼԵՆԻՆԳՐԱԴ

Վերջերս, մի շաբաթով, Մայր Աթոռի Գերագույն Հոգևոր խորհրդի ատենապետ Տ. Սիոն արքեպ, Մանուկյանը՝ Լենինգրադի ոռոսաց Անտոնի միտրոպոլիտի հրավերով, այցելում է Լենինգրադ, ծանոթանալու համար տեղի հոգևոր, եկեղեցական կյանքին, ինչպես նաև դիտելու պատմական կոթողներն, հուշարձաններն ու թանգարանները:

Այս առթիվ Սրբազան հորը ողջեցում էին Մայր Աթոռի միաբաններ Տ. Ստեփանոս արք. Չաքալյանն ու Տ. Չատիկ արք. Ավետիքյանը:

Սրբազան հորը Լենինգրադի օղանավակայան, հանուն Անտոնի միտրոպոլիտի, դիմավորելու և քարի գալուստ մաղթելու էին եկել Միլիտոն արքեպիսկոպոսը և Եվգենի քահանան:

Օգոստոսի 27-ին, հինգշաբթի.—Այսօր Միլանից և հյուսիսային Իտալիայի այլ քաղաքներից Վեհափառ Հայրապետին են այցելում 39 զբոսաշրջիկներ, որոնց մեջ՝ երեք հոգևորականներ: Խմբի ղեկավարն էր Միլանի թեմի Էկոմենիկ հարաբերությունների բաժնի վարիչ դոկտ. Ֆրանկո Փիցցակալին:

Հայոց Հայրապետի և խմբի անդամների միջև տեղի է ունենում ջերմ հարցազրույց:

Հայաստանում գտնվելու օրերին այցելուներին ողջեցում էր Միլանի հայոց հոգևոր հովիվ Տ. Սարգիս քնն. Սարգսյանը:

Օգոստոսի 28-ին, ուրբաթ.—Այսօր հոգևոր ճեմարանում 1981—1982 ուսումնական տարվա համար, ճեմարանի տեսուչ Տ. Եզնիկ քնն. Պետրոսյանի նախագահությամբ և մի քանի դասախոսների մասնակցությամբ, տեղի են ունենում քանակոր և գրավոր ընդունելության քննություններ:

Օգոստոսի 30-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Նարեկ քնն. Մատարյանը և «Հայր մեր»-ից առաջ խոսում «հավիտ պատշաճի» քարոզ:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Այցելության օրերին Սրբազան հայրը, իր ողջեցիների հետ միասին, մի քանի անգամ ներկա է լինում ոռոս եկեղեցական արարողություններին, ինչպես նաև Սրբազան պատարագի արարողության Ալեքսանդր Նևսկի Մայր տաճարում:

Ռոսս եկեղեցական կյանքին մոտիկից ծանոթանալուն զուգահեռ, Սրբազան հայրը այցելում է նաև «Էրմիտաժ», «Պետրոպոլիտեց» ամստային պալատ, Եկատերինայի պալատ Պուշկին-Պավլովսկում, Պետրո-Պավլովսկ ամրոցն ու եկեղեցին, Ս. Իսահակի Մայր տաճար, Ռոսական թանգարան և այլուր:


Սրբազան հայրը այցելում է նաև տեղի հայոց եկեղեցին և հայկական գերեզմանատուն և «Հոգւոց» արտատանում հայ ննջեցյալների համար:

Տ. Սիոն արքեպիսկոպոսին, իր առաջնորդարանում ընդունում է Ամսոնգի մետրոպոլիտը, նախ բարի գալուստ է մաղթում հայ եկեղեցու բարձրաստիճան հյուրին և նրա ուղեկիցներին և ի պատիվ նրանց ճաշկերույթ կազմակերպում:

Ընդունելության ժամանակ Սիոն Սրբա-

զանը Ամսոնգի միտրոպոլիտին նախ փոխանցում է Հայոց Հայրապետի ողջուններն ու օրհնությունը և հետո շնորհակալություն հայտնում շատ ջերմ ընդունելության և հյուրասիրության համար: Սրբազան հայրը լավագույն տպավորություններով վերադառնում է Մայր Աթոռ:





ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊՍ. ԳՈՒՇԱԿԵԱՆ

ՏՕՆՔ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ
(Վերափոխման տօնի առիթով)

Ս. Կոսին անձը, իբրև գերագանց միջոց փրկագործութեան, անբաժան է Յիսուսի փրկական տնօրինութիւններէն: Այս պատճառաւ, Ուղղափառ եկեղեցին սկիզբէն երկիւղած մեծարանք ունեցաւ անոր յիշատակին հանդէպ, մանաւանդ Ե. դարէն յետոյ, երբ Եփեսոսի ժողովին մէջ դատապարտեցաւ Նեստորի մոլորութիւնը եւ վարդապետականօրէն հաստատուեցաւ եւ ընդունուեցաւ անոր **ծնող** և **մայր Աստուծոյ** լինելու իրողութիւնը, այսինքն **Աստուածածին** և **Աստուածամայր** կոչումը:

Աստուածածնի կեանքին պատմութենէն Աւետարանի մէջ կը յիշուին այն մասերը կամ կէտերը միայն, որոնք ուղղակի առնչութիւն ունին Յիսուսի կեանքին և փրկական տնօրինութեան հետ. անոր կենսագրութեան մնացեալ այսինքն մեծագոյն մասը կ'ամբողջացուի այն աւանդութիւններով զորս բոլոր հին եկեղեցիներն հասարակաբար ունին, և որոնք, այդ կերպով, այլ ևս տարրացած են եկեղեցական հնագոյն գրականութեան հետ:

Ըստ այդմ, Մարիամ Դայի ընդէն էր. իր ծնողքն էին **Յովակիմ** եւ **Աննա** Բեթղեհէմցիներ: Աննա ամուլ էր և ուխտով և աղօթքով յղացավ իր միամայր զաւակը, որ կոչուեցաւ **Մարիամ**: Թէ՛ն ծնաւ բնութեան օրինաց համեմատ, այսինքն ի հօրէ և ի մօրէ, բայց բարոյապէս գերծ' սկիզբէն իսկ՝ հասարակ մահկանացուաց աղամական արատաւորութենէն: Այս պատճառաւ, եկեղեցոյ

մէջ տօնելի եղաւ ոչ միայն իր **ծնունդը** այլ նաև **յղութիւնը**, զոր մենք եւ Յոյնք կը կատարենք դեկտեմբեր 9-ին, իսկ Լատինք՝ 8-ին:

Աստուածածնի երկրորդ տօնն է **ծնունդը**, զոր բոլոր եկեղեցիներ անփոփոխ կերպով կը կատարեն սեպտ. 8-ին: Պատմական մանրամասնութիւններ չունինք անոր ծնունդին պարագաներուն մասին. կարելի չէ ճշդել նոյնիսկ թէ ո՞ր ծնաւ անկա. Բեթղեհէմ թէ Նազարէթ, և ո՞ր թուականին:

Երրորդ տօնն է **«Երից ամաց ընծայումն ի տաճարն»**, որ բոլոր եկեղեցիներէն հաստատուն կերպով կը կատարուի նոյեմբեր 21-ին: Այս տօնին իմաստն այն է թէ որովհետեւ ուխտի զաւակ էր Մարիամ, իր ծնողքը տաճարին նուիրեցին զայն իր այն հասակին մէջ, երբ այլ ևս կարող էր ծնողքէն անջատ ապրիլ: Ըստ աւանդութեան, ժամանակ մը մնաց նա հոն, յետոյ վերստին դառնալով հոն, եօթնամեայ հասակին, խառնուեցաւ այրիներէ և կոյսերէ բաղկացեալ նուիրեալ կանանց այն խումբին, որոնք բարեպաշտական կեանք կ'ապրէին Տաճարին հովանիին տակ, եւ որոնցմէ էր Աննա մարգարէումին: Եօթը տարիներ ևս մնալէ վերջ անդ, խօսեցեալը եղաւ հիսուն Յովսէփին:

Աստուածածնի կեանքին յիշումը միւս դիպումները, զորս Աւետարանի պատմութիւնը կ'արձանագրէ, հաւասարապէս և նոյնիսկ արտելապէս կը պատկանին Յիսուսի

կենաց, իբրև մասն փրկագործական տնօրինությանց: Աստուծոյ Ստեղծութիւնը, որ մէկ կողմէ Բրիստոսի տնօրինութիւնն է, եւ միւս կողմէ Մարիամի կեանքին գլխաւոր պարագաներէն. Եղիաքեթի այցելութեան երթալը, զոր Լատինք առանձին կը տօնեն յուլիս 2-ին. Աստուածայայտնութիւնը, որ Մարիամի մայրութեան տօնն է. Բրիստոսի քառասնօրեայ ի տաճարն ընծայումը որ ուրիշներէն կը կոչուի նաև Սրբութիւն Մարիամով, վասնզի ծննդեան քառասներորդ օրը մայրերու սրբութեան օրէնքը կը կատարուէր: Իր կեանքին աւետարանական միւս մանրամասնութիւններն են. Յիսուսի տասներկու տարեկան եղած ատեն Երուսաղէմի մէջ անհետացած ատեն զայն փնտռելն ու գտնելը, Կանայի հարսանիքին ատեն՝ զինքի համար իր մօր միջնորդելը, Կաթաւնաւումի մէջ զայն փնտռելը, Գողգոթայի վրայ խաչին ոտքը լինելը, Համբարձումէ վերջ միշտ առաքելոց խումբին հետ լինելը: Աստուծոյ եւ ոչ միւս սակայն առանձին տօնական յիշատակութիւն ունի. ամենքն ալ խառնուած են Բրիստոսի տնօրինական յիշատակներուն: Իր աստուածային Որդւոյն համբարձումէն վերջ Մարիամի ունեցած կեանքին մասին աւանդութիւնը միայն կը խօսի. ըստ այդմ, անկախ Երուսաղէմի մէջ ապրած է միշտ իբրև 15 տարիներ, Յովհաննէս Աւետարանիչի որդիական խնամքներէն շրջապատուած. հոն մեռած, և թաղուած՝ Գեթսեմանիի իրենց ընտանեկան դամբարանի մէջ Յիսուսի մահէն շուրջ 15 տարիներ ետքը:

Այնու ամենայնիւ, եկեղեցւոյ կողմէ Աստուածածնի վերաբերմամբ յարգանքի ամենէն հանդիսաւոր արտայայտութիւնը կը կատարուի անոր մահուան յիշատակին առիթով, որուն տօնը հաւանաբար հնագոյնն է նաև Աստուածածնի տօններուն, և բոլոր եկեղեցիներէն կը կատարուի օգոստոս 15-ին անփոփոխ: Իսկ մենք հաւանաբար Շնորհալիի ծամանակէն է որ, եթէ ոչ դեռ անելի ետքը, 15-ի մերձաւորագոյն կիրակին սովորութիւն ըրած ենք կատարել զայն, ոչ միայն երեք՝ ինչպէս եղած է առաջ, այլ ինն օրեր երկարած գելով տօնին շարունակութիւնը: Աստուածածնի մահուան վերաբերմամբ եղած աւանդութիւնը, զոր բոլոր հին եկեղեցիները Գրեթէ նույնութեամբ կ'ընդունին, և որ համառօտուած է Կիրակոս վարդապետի յօրինած «Արևելք գերարփին» շարակամին մէջ հետևեալն է: Ս. Կոյսը 15 տարիներ Երուսաղէմ ապրելէ վերջ անդ կը կնքէ իր մահկանացու կեանքը: Բոլոր առաքելները, բացի Բարթողիմէոսէ, որ բացակայ էր այդ ատեն, մեծ հանդիսաւորութեամբ և ջահալոյց թափօրով կը կատարեն յուղարկարարութիւնը և

կը թաղեն զայն Գեթսեմանիի ձորակին կընտին:

Իր թաղումին վերջ երեք ցերեկ և երեք գիշեր հրեշտակային երգեր կը լսուին անոր գերեզմանին վրայ: Քիչ վերջը կը հասնի Բարթողիմէոս, որուն՝ Տիրամայրը վերջին անգամ մը տեսնելու փափաքին գոհացում տալ ստիպուելով, առաքելաւ կը բանան գերեզմանը, ուր չեն գտներ սակայն անոր մարմինը. որմէ կը հետևցնեն թէ անկախ չէր մեռած, այլ ի թուն էր լոկ, թէ հրեշտակներու երգաբանութիւնը զայդ միայն կը նշանակէր, թէ Յիսուս իր մօրը խոստացած էր արդէն վաղուց երկինք փոխադրել զինքը, և թէ Ս. Կոյսին մարմնոյն անգոյութիւնը իր գերեզմանին մէջ՝ այդ խոստումին կատարումը միայն կրնայ նշանակել, և այլն: Այս է պատճառը որ անելի ննջում քառով կ'որակուի անոր երկրաւոր կեանքին վախճանը, և ոչ թէ մահ քառով: Գալով անոր յերկինս փոխման գաղափարին, թէ և ամենահին ժամանակներէն կար անոր մտածումը՝ Ս. Կոյսին ձօնուած բանաստեղծական եւ խորհրդաբանական գրութեանքներուն մէջ, բայց անոր իբր վարդապետութիւն ընդունուիլը առ նուազն Թ. և առ առաւել ժ. Բ. դարուն էր միայն որ կատարուէցաւ, տօնը ևս կոչուելով այդ մտօք՝ Վերափոխում:


Աստուածածնի մահուան պատմութեան կից է իր պատկերին յիշատակը: Կ'աւանդուի թէ ի մխթարութիւն Բարթողիմէոսի՝ որ ներկայ չէր գտնուած Տիրամօր թաղման, իրեն տրուեցաւ նաև այն կենդանագիր պատկերը, զոր Ս. Կոյսը յետ օրհնութեան յանձնէր էր Յովհ. Աւետարանչի: Բարթողիմէոս, ըստ հայկական գրուցներուն, զայն բերաւ Հայաստան և դրաւ Անձնացեաց գաւառի Գարբնաց քար կոչուած տեղը, ուր կուսատան մը կանգնուեցաւ իսկոյն, այսինքն հաւատաւոր կոյսերու միաբանութիւն մը՝ ի պահպանութիւն և ի պատիւ Աստուածածնի պատկերին: Այդ կոյսերու մէջ իբր գլխաւորներ կը յիշուին Յուսիկ, Որմզդատ և Մաքովտուր անուն անձներու քոյրերը: Այս իսկ է Հոգեւոր կամ Հոգեաց վանք ըստածը, ուր մինչև վերջը կը շարունակէր պատկերին ուխտարարութիւնը, հակառակ որ չկար ան ի միջի. զի կ'աւանդէին թէ հալածողաց երեսն պահելու համար զայն՝ հիւսած էին պատին մէջ:


Տիրամօր մարմնական մատուցներու չգոյութիւնը հաւատացեալներու երկիրաւորութիւնը ուղղեց դէպի անոր սեփական իրեղենները, որոնք հալածանքի դարերուն թաքուցուած լինելով յետոյ երևան եկան: Աստուծոյ մէջ առաջինը, գօտին կամ կամարը, արևելեան կիներու զգեստին և նոյն ատեն արդ-

ուզարդին այս կարևոր մեկ մասը, Երուսաղիմի մէջ գտնուեցաւ Ե. դարուն Արկադէոս կայսեր օրով, և մեծահանդէս պատուով փոխադրուելով Կ. Պոլիս, զետեղուեցաւ Աստուածածնի նուիրում տաճարին մէջ, ուր լինելն կը յիշուի աճկէ կէս դար ետքն ալ, Լեւոն կայսեր Զոյի թագութիին բժշկութեան առթիւ: Երկրորդն է տուփը, կամ այն **փոքրիկ արկղը**, որուն մէջ կը պահուէր Ս. Կուսին **գլխանոցը**: Ասոր համար ևս կը պատմուի թէ Կ. Պոլսեցի երկու ազնուական եղբայրներ, Գալլիաս և Կանտիսաս, որոնք ոխտաւորաբար Պաղեստին եկած էին, Գալիլիական գիւղի մը մէջ, հաւանաբար Նազարէթ, կը նկատեն թէ մարդիկ ուխտի կ'երթան հրեայ այրի պառաւի մը տունը, ուր բժշկութիւններ կը կատարուին Մարիամու վերագրուած գլխադիրի մը առջև՝ որ արկղի մը մէջ պահուած է. հնարքով մը՝ նմանագործուած արկղ մը կը դնեն իսկականին տեղ, զոր իսկոյն կը փոխադրեն Կ. Պոլիս ուր մե-

ծահանդէս թափօրով կ'ընդունուի Աստուածածնի եկեղեցոյն մէջ: **Փօսոյ** և **տուփի** այս երկու **տօները** մեր մէջ մոտ գտած են Սիմէոն կաթողիկոսի տօնացոյցական կարգադրութիւններէն վերջ միայն. նախասիմէոնական տօնացոյցին մէջ իբր կամաւոր դրուած էին ստոնք. և Կերևի թէ Կ. Պոլսոյ եկեղեցիին միայն յատուկ մնացած էին երկար ատեն. քայք յետոյ Արևմտեայց մէջ ևս սկսան լաճախել ոչ միայն այս ալլ նաև Ս. Կուսին յատուկ նկատուած իրեղէն մասունքներու յարգն ու պաշտօնը, մասնաւորաբար ԺԳ. դարէն ետքը, երբ խաչակրութեանց միջոցին Կ. Պոլիս հաստատուած լատին կաթարութեան ատեն եկեղեցական քաղով հնութիւններ և սրբութիւններ փոխադրուեցան Բիզանդիայէ Երուսա:

Ստորջ և տօնք,
Երուսաղէմ, 1939, էջ 304—313





ԱԾՈՒ ՓՈՔՐ

Տօն Սրբոց Թարգմանչաց Վարդապետացն Մերոց

Քսանվեցեորոյ Տարեդարձ Գահակալութեան Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա.-ի:

Զի թէպէտ եւ եմք ածու փոքր եւ թուով յոյժ ընդ փոքրու սահմանեալ եւ զօրութեամբ տկար եւ ընդ ալլով յոյժ անգամ նուաճեալ թագաւորութեամբ, սակայն, բազում գործք արութեան գտանին գործեալ եւ ի մերում աշխարհիս, եւ արժանի գրոց յիշատակի:

Մ. ԽՈՐԵՆԱՏԻ

Աշխարհի մշակույթի մեծերուն եւ մեծագործություններուն հանդեպ գնահատանք եւ պաշտամունք ունենալը՝ մեկն է մեր ցեղին առաքինություններէն: Արժանիք մը որ կմղէ հայը իր սեպական տեղն ապահովելու, ընդհանուր քաղաքակրթության տարածքին վրա: Մերը Փոքր Ածու մըն է միայն ըստ Խորենացիի ճշգրիտ պատկերացումին:

Թե՛ն մենք փոքր ածու մըն ենք, եւ թիվով փոքրերու կարգին, եւ զօրությամբ ալ տկար, եւ շատ անգամ նվաճված ենք թագաւորությամբ, սակայն, բազմաթիւ արիական գործեր կատարված են մահ մեր երկրին մէջ, եւ արժանի են գիրով հիշվե-

լու (Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, 1827, էջ 30):

Թարգմանիչները հայոց քաղաքակրթության գետի թումբերուն վրա, Ե—ԺԲ դարերուն ստեղծագործ եւ թարգմանական նշանակելի գործ կատարեցին Ս. Սահակի առաջնորդությամբ: Անոնց կպարտինք հայ այբուբենքին գյուտը 404-ին, եւ ոսկեղեն թարգմանությունը Աստվածաբանչին, որոնք խարիսխ, ուղեցույց, միջոց եւ ներշնչող եղան հայկական ուրույն մշակույթի մը ստեղծումին եւ զարգացումին զանազան մարգերու մէջ:

Ս. Սահակի եւ Ս. Մեսրոպի շնորհիւ սքանչելի թափով մկսող հայ մշակույթը աղբյուր եղավ, գետ դարձավ, ածու կապեց հագեցնելու համար սերունդն սերունդ մշակույթի համար հայոց ունեցած քաղցն ու ծարավը:

Հայոց աշխարհն սկիզբ առնող Եփրատ եւ Տիգրիս գետերուն պէս հայկական մշակույթը օրհնություն դարձավ մեր բնաշխարհին չափով մը դրացի եւ ալ ժողովուրդներու համար ևս:

Թարգմանիչները հայկական մշակույթի եւ քաղաքակրթության հետ ստեղծեցին մահ հայ քրիստոնեական ազգային ոգի, մոր հայկականություն մը որ երթալով կաճի ու կզարգանա իրենցմով մոր մկարագիր եւ թափ առնող հայոց պատմության ընթացքին հետ, Ե դարեն ասդին:

ՄԵԿ ԱՎՆԱՐԱՌՎ

Հայկական մշակույթն իր առանձնահատկություններով կուսակալարվի Հայաստանյայց եկեղեցիին հովանիին տակ:

Հայոց փոքր ածուին օրհնակից բերքերն են հայերեն լեզուն, այբուբենը, Աստվածաշունչի ոսկեղեն թարգմանությունը՝ զուգընթաց հույն դասական հեղինակներու թարգմանության, առանց որուն անոնք կորսված սիտի մնային ընդհանուր մատենագրության համար, հայկական ճարտարապետությունը, մանրանկարչությունը, գրչությունը, երաժշտությունը: Ասոնց կարգին նաև ծաղկումը հայ ձեռագործ գեղարվեստներուն, խաչքար, ոսկերչություն, ստեղծագործություն:

Հայ մշակույթի կարկառուն դեմքերն Ա. Սահակեն գառ եկեղեցին առանձին կտունն միայն է—ԺԲ դարերուն փայլած հետևյալ դեմքերը, Սրբոց Թարգմանչացն Մերոց անունով:

Մեսրոպ Մաշտոց՝ աջ բազուկը Ա. Սահակ Պարթևի, ստեղծիչը հայ այբուբենի, առաջին ուսուցիչը հայերեն լեզվի և հայ դպրոցի, հեղինակ և երգահան, երգիչ ապաշխարության շարականներուն: Ե դար:

Եղիշե, հեղինակ Եղիշե-ի կամ «Վասն Վարդանայ և Հայոց Պատերազմին» դյուցազներգության, Այլակերպության ճառին, Խրատը Միանձանց, Տերունական Աղոթից, Արարածոց, Հեպա և Դատափորաց գիրքերուն մեկնություններուն:

Մովսես Քերթոզ, Խորենացի, բանաստեղծ, փիլիսոփա, պատմահայր, հեղինակ շարականներու, Խորենացի-ի՝ «Հայոց Պատմություն» ավանդական ծագումնն մինչև հայ Արշակունյաց կործանումը՝ 428 հ. Ք.: Անոր կվերագրվին «Պատմություն Հոգուց Վանքի Պատկերին», Հոփախմբանց ներքող և «Գիրք Պիտոյից», գուցե նաև «Աշխարհացոյց» և Կաղիսթենեսի «Պատմություն Մեծին Աղեքսանդրին»:

Դավիթ Անհաղթ, Հաքբացի, փիլիսոփա, գիտնական: Իր երկասիրություններն են՝ «Մահմանը Իմաստասիրության», «Վերթմունքին Թերաժութեան Պորփիրի», «Ստորոգությունը Արիստոտելի», «Մեկնությունը Ստորոգութեանց Արիստոտելի», «Պերիարմենիաս Արիստոտելի», «Թողթը Արիստոտելի», «Ներքողներ Ա. Ծննդեան» և «Ա. Խաչի»:

Գրիգոր Նարեկացի (+1003) մեծագույն հայ միապիքը, համարելով բանաստեղծ. գրած է Նարեկ—Ողբերգություն—ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ, «Մեկնությունը Երգ Երգոցի», Ներքողներ՝ «Ապա-

րանից Ա. Խաչի», «Առաքելոց, Ա. Աստուածածնի» և «Ա. Յակոբ Մծրնայ Հայրապետի», գանձեր՝ «Խաչի, Եկեղեցու և Ա. Հոգույն», տաղեր և մեղեդիներ:

Ընթերցալի՝ Ներսես Կալեցի (1102—1173) թագն ու պապը Արծաթե դարու, բանաստեղծ, երաժիշտ, երգահան, մեկնիչ, գործիչ և բարեկարգիչ: Իրեն կարտիներ մեծամասնությունը Ժամագիրքի ընտրելագույն երգերուն և աղոթքներուն, «Հատառով Խոստովանիք», Ա. Վարդանանց «Նորահրաշք», «Արիացեալքը» և այլ շարականներ, մեկնություններ՝ Ա. Մատթեոսի, և Կաթողիկայց, «Ողբ Եղեսիոյ», «Յիսուս Որդի», որուն ամփոփումն է «Այսօր Անճաղը», «Վիպասանութիւն տաղաչափեալ ամփոփումն հայոց պատմութեան», Հանելուկներ, «Յաղագս Երկնից» և «Զօրութեանց», և այլ գործեր, ամենքն ալ ընտիր հայերենով, ամենքն ալ լայն տեղ և ծավալ գտած իր հայրապետական գլուխ գործոց Ընդհանրական Թողթին պես, որ ԺԲ դարեն ի վեր իբր ուղեցոյց և օրհնակ կձուռայե եկեղեցական, դավանական, միջեկեղեցական, բարեկարգական և կարգապահական հարցերու և հարաբերություններու:

Մեր տոնելի թարգմանիչ տոքք վարդապետներուն անուններուն և միայն մատենագրական վաստակներուն ցուցակային այս թվումը թոռոցիկ՝ քափական է գաղափար մը կազմելու ու անոնց ինքնության և մեզի թողած գրավոր ժառանգության մասին:

Նշենք թե մատենագրական այս շարքին ամենն անգին և փայլուն գոհարներն են հայերեն լեզուն, այբուբենը, Աստուածաշունչին ոսկեղինակ թարգմանությունը, Եղիշեն, Խորենացին, Նարեկը, Ժամագիրքը և որոշ պարագաներու համար Ընդհանրականը:

Ասոնց յուրաքանչյուրը մեկ մեկ գանձ է անկորնչական, բարձր գիրք գործածական, որ Ավետարանի կողքին սերունդն սերունդ հոգեկան սնունդ ջամբած է մեր նախնիքներուն, ուստի և Ա. Գիրքի պես առարկա դարձած անոնց սիրույն և հոգածության, որպես աղբյուր կրոնական մարտը ներշնչումի և ազգասիրական ապրումի:

Այս գլուխ գործոցները՝ անմիջական օգուտն զատ՝ օտարներուն մոտ ալ ճանաչում գտած հայկական ճարտարապետության, երաժշտության, մանրանկարչության և ձեռագործ արվեստներուն հետ կկազմեն առանձնահատկությունը մեր փոքր ածուին, որ ուշագրավ տեղ մը կգրափն ընդ-

հանոր քաղաքակրթության եւ մշակույթի համատարած անդամատանին մեջ:

ԱԶԳ. ՍՈՒՐԲ, ԺՈՂՈՎՈՒՐԴ ՍԵՊԱԿԱՆ

Բայց դուք ընտիր ցեղ մըն եք, թագավորական քահանայություն մը, սուրբ ազգ մը, ժողովուրդ մը սեպական ստացությամբ, որպեսզի հոչակեք հրաշագործություններն Անոր՝ որ խավարեն կոչեց զձեզ իր սքանչելի լույսին (Ա. Պետ. Բ. 9):

Փոքր Ասիայի նորադարձ համայնքներուն ուղղված Պետրոս առաքյալի այս խոսքը կրնա պատշաճի հայ ժողովուրդին ալ, որ թարգմանչաց լուսավորչական գործունեությամբ կոնակ կղարձեն տգիտության եւ հեթանոսական խավարին, եւ Քրիստոսի լույսեն առաջնորդված՝ կօզտագործեն Ավետարանը իբր փրկության լուստակ՝ Ե. դարեն աստիճան զինք նվաճող քաղաքացի հորդանքերու դեմ, որ իրարու ետեւէ կխուծեն մեր երկիրը, կտորեն մեր ստացությունները, բայց երբեք չեն կրնար տիրապետել մեր սեպական հոգին, որ ինչպես Վարդանանց օրով, ամեն անգամ որ հարկ լինի կրացվի եւ վճռականորեն կը հայտարարե.

Յայսմ հաւատոց զմեզ ոչ ոք կարէ խախտել, ոչ հրեշտակք եւ ոչ մարդիկ, ոչ սուր, ոչ հուր, ոչ ջուր, ոչ ամենայն ինչ, եւ եմ դառն հարուածք: ...Ի քէն տանջանք, եւ ի մէջ յանձնառութիւնք, սուր քո եւ պարանոցք մեր: ... Զի ոչ եթէ ընդ մարդոյ է ուխտ հաւատոց մերոց... այլ անլուծութեամբ ընդ Աստուծոյ, որում չիք հնար քակտել եւ ի քաց եղանել, ոչ այժմ եւ ոչ յապա եւ ոչ յաիտեանս եւ ոչ յաիտեանս յաիտենից (Յիշե՛, Բ. Յեղանակ, Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, 1893, էջ 71—73):

Հայուն ընտիր ցեղ, սուրբ ազգ եւ սեպական նկարագիրով ժողովուրդ մը լինելուն գիտակցությունը, որ ոգի է եւ կեանք, կծնի, կհալտնվի հայ մշակույթին հետ եւ կգարգանա անոր զուգընթաց, հայոց ծաղկալից փոքր ածուխն մշակությամբ եւ պահպանությամբ:

Ծանոթ եմ հայ կյանքին փոթորկալից վիճակը, Արշակունեաց, Բագրատունեաց, Ռուբինեանց եւ Արծրունեաց հարստություններուն կարճ կյանքը, հայկական իշխանություններու եւ մեկիքություններու անփառունակ վախճանը, հայ ժողովուրդին հայրենի հողին վրա եւ օտար աստղերու տակ պարզած պառակտումները՝ տեղական, պետական, ազատական, աշխար-

հագրական, դավանական, կուսակցական եւ այլ շերտավորումներով:

Բայց իրողությունն է որ հակառակ այս տխուր երեւոյթներուն, աշխարհով մեկ ցրված հայերը իրենք զիրենք հայ կզգան եւ կաշխատին հայ ապրի...

Ամեն հայրորդ ինքզինք հայ զգալու եւ հայության մաս կազմելու այս երեւոյթը բնական է: Անիկա ճայնն է մեր արյունին եւ ավանդություններուն: Ան Ա. Ավետարանին լույսով եւ, հայեցի դաստիարակությամբ զմեզ ամենքս կկապեւ եւ կմիացնե իրարու: Անիկա նշան մըն է թե հայը՝ ուրիշ ինչ պիտակ ալ որ ունենա՝ հայ է, մեկ ցեղով, մեկ ազգությամբ, ռեքույն ժողովուրդ մը սեպական ստացությամբ եւ նկարագիրով:

Մեր ամենուս մեկությունը կամ միությունը թագուն՝ կարտայայտվի հայկական ոգով՝ ճառագայթումը հայ մշակույթին:

Արդար եւ փրկարար եմ Սրբոց Թարգմանչաց եւ անոնց թողած ժառանգության մասին այսպես գնահատանք եւ վերաբերմունք, մանավանդ արտասահմանի հայության համար՝ որուն կպակսին հայրենի հողին եւ պետության կովանները հաստատ:

Հայաստանյայց Եկեղեցին եւ այլ կազմակերպություններ ըստ կարելիւնի կը ջանան վառ պահել Ավետարանին լույսը, եւ հայրենի սրբությունները՝ լեզու, գիր, ծես, ավանդություն, սովորություն: Բայց այսքանը բավարար չէ մեր գոյությունն ապահովելու համար, անհրաժեշտ է առավելագույն չափով զորացնել այդ ճիգերը:

Քաղաքական, ընկերային եւ նյութական հարստությունները անցավոր են:

Մեծ ազգերուն եւ քաղաքակրթություններուն հետ քաղաքական եզրեր չեն հայ ժողովուրդն ու մշակույթը, քանի որ Խորենացիին ըսածին պես նվազ է մեր թիվը: Այսու հանդերձ աշխարհ չի կրնար անգիտանար կամ անտեսել զմեզ վասնզի «Բազմաթիւ քաջագործութիւններ կատարում են նաեւ մեր երկրին մէջ, եւ արժանի գիրքով յիշատակութեան» (Խորենացի, նույնը):

Խորենացիին ակնարկած՝ մեր երկրին մեջ գտնվող արիական գործերը առավելապես հոգեկան են, մշակութային:

Սուրբ թարգմանիչները ի պաշտոնե եւ իրավ հոգեվորականներ են. կաթողիկոս, եպիսկոպոս, վարդապետ, քահանա, ուսուցիչ:

Անոնց պես քրիստոնեական մտայնություն եւ դաստիարակություն ունին իրենց

ժամանակակից աշխարհականները՝ իշխան, զորական, քաղքենի եւ շինական:

Ամենքն ալ կգնահատեն հոգեւոր արժեքները, սերտորեն կգործակցին, իրարու հետ կմրցին ըստ կարի իրենց լուծան հընելու Աստուծո զանձանակը:

Անոնք, հակառակ ժամանակներու շարութեան եւ արհաւիրքին, հակառակ կյանքի պայմաններուն խտրության, աշխատանքի եւ նվիրումի ոգիով տոգորուն, սիրով կզինվորին, կամաւոր պահակ եւ մշակ կըլլան, թուր կկանգնեն, քրտինքով կոռոզեն, արջուն-արցոճներով կպարարեն հայոց այգին, որպեսզի թշնամին չաւրեզայն, որպեսզի առատ լինի քերքը վատակին, որպեսզի հայու սեղանը բաց լինի, նշխարքն ու բաժկին անպակաս, յուզն ու խունկը աննվազ, Ա, Բ, Գ, ի տախտակն ու քերականը պատրաստ, որպեսզի հայը

շարունակե ապրիլ և ստեղծագործել իբր «ազգ սուրբ, ժողովուրդ սնական»:

Ոչ մեկ խոսք այս նպատակներուն վսեմության եւ գեղեցկության դեմ: Մե՛րն ալ են անոնք: Մենք ալ կհասնինք անոնց Աստուծով՝ եթե շարունակենք Սրբոց Թարգմանչաց ոգիով աշխատիլ եւ զոհաբերել, եթե հավատարիմ մնանք Աստուծո հետ վարդանանց կնքած **ռխտին անդրձեղի**, եթե մտիկ ընենք եւ դրական արձագանք տանք Խորեն արքեպս. Նարայնի գրիչով մեզի ուղղված սրբազան կոչին.

— Հայ ապրինք եղբարք՝ մարդկութեան մէջը:

Հայ կնքել է մեզ պատմութեան էջը:


Հայ անուամբ զմեզ կ'ողջունեն երկինք:

Եղբարք, հայ ապրինք:

ԶԳՈՆ ԵՊՍԿ. ՏԵՐ-ՀԱԿՈԲՅԱՆ

Նյու Յորք





ՀՐԱԶԴԱՆԻ ԾՐՋԱՆԻ ԱԹԱՐԲԵԿՅԱՆ ԳՅՈՒՂԻ
ՆՈՐԱԲԱՑ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ
ՆԱՎԱԿԱՏԻՔՆ ՈՒ ՕԾՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Սույն թվականի օգոստոսի 18-ին, կիրակի օրը, Ս. Աստվածածնի Վերափոխման տոնին հանդիսավոր իրադրության մեջ՝ ձեռամբ Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Արսեն եպիսկ. Բերբերյանի, կատարվել է Հրազդանի շրջանի նորաբաց և Ս. Աստվածածին եկեղեցու օծման արարողությունը:

Եկեղեցու Նավակատիքը կատարվել էր շաբաթ օրը, երեկոյան ժամերգությունից հետո, գլխավորությամբ առաջնորդական փոխանորդի օգնական տ. Գարեգին աբեղա Ներսիսյանի, մասնակցությամբ Երևանի եկեղեցիների քահանա հայրերի:

Կիրակի օրը, ժամը 10-ին, Տ. Արսեն եպիսկ. Բերբերյանը հանդիսավոր ա. պատարագ է մատուցում և կատարում է Ս. Աստվածածին եկեղեցու օծման արարողությունը:

Եկեղեցին ու շրջափակը լցվել էր հավատացյալների խոռոներով բազմությամբ:

Հանդիսությանը ներկա էին վրահայոց թեմի առաջնորդ տ. Գևորգ եպիսկ. Սերայդարյանը, Երևանի քահանայից դասը, Արարատյան թեմի թեմական խորհրդի, Ս. Աստվածածին եկեղեցու հոգաբարձության անդամները, եկեղեցու օծման երկու

կնքահայրերը՝ Վազգեն Հովհաննիսյանն ու Հայկարամ Հովհաննիսյանը և այլ հրավիրյալներ:

Պատարագիչ Սրբազանը, հանդիսավոր մթնոլորտում, ըստ Մաշտոցի թեյադրության, կատարում է նախ չորս Ավետարանիչների անունով՝ եկեղեցու չորս պուրների օծումը՝ սրբալույս մեռնով, ապա օծում՝ ավագ սեղանը, պատերը, նկարները:

Եկեղեցու օծման արարողությունից հետո, շարունակվում է սուրբ պատարագը մինչև քարոզի պահը:

Պատարագիչ Սրբազանի քարոզի բնաբանն էր Առաքել վարդապետ Դավրիժեցու սքանչելի ու ճշմարիտ վկայությունը օրվա հանդիսության հոգևոր խորհուրդը բացատրող. «Ի վերայ Աջոյն և սրբոյ Էջմիածնի Ամենայն ազգն Հայոց կապեալ կայ»: Տ. Արսեն սրբազանը իր քարոզի մեջ գեղեցկորեն վեր է հանում հայ ժողովրդի կյանքում ա. Էջմիածնի և մեր եկեղեցու կատարած հոգևոր, մշակութային, ազգապահպանման և հայրենասիրական դերն ու առաքելությունը, ինչպես անցյալում, նաև մեր օրերում, որպես «ճշմարիտ մի վերածնունդ հայ ժողովրդի հոգևոր ու քարոջական ուժերի, որոնք լավագույն ձևով ար-



Հրազդանի շրջանի նորարաց Սուրբ Աստվածածին եկեղեցին



Մի պահ եկեղեցու օծման հանդիսությունից

տահայտվեցին քրիստոնեական հավատքի հայկականացած հոգևոր մշակույթի ճանապարհով:


Հավարտ ա. պատարագի կատարվում է ման «օրհնություն խաղողոյ» կարգը ա. Աստվածածնի տոնի առիթով:

Ժամը 14-ին, օրվա հանդիսության առիթով, Հրազդանի ճաշարաններից մեկում տրվում է պաշտոնական ճաշկերույթ, որի ընթացքում բոլոր ներկաները բաժակ են բարձրացնում Հայոց Հայրապետի կենաց արևատության, Մայր Աթոռ ա. Էջմիած-

նի անասանության, Հայ Եկեղեցու պայծառության, հայոց վերածնված հայրենիքի հետագա բարգավաճման և հայ ժողովրդի՝ որ ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի, բարօրության և երկրագնդի վրա կայուն և հարատև խաղաղության համար:

Արարատյան Հայրապետական թեմի գործունեության պատմության մեջ օգոստոսի 18-ը արձանագրվում է ման որպես կարևոր ու պատմական մի իրադարձություն:





ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ԱՖՐԻԿԱՅԻ
ՀՈՒՆԱՑ ՊԱՊ ԵՎ ՊԱՏՐԻԱՐԺ ՆՈՐԻՆ
ՍՐԲՈՒԹՅՈՒՆ Տ. ՆԻԿՈՂԱՅՈՍ ՎԵՑԵՐՈՐԴԸ
ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

1981 թվականի հուլիսի 20-ից 30 օրերին, Նորին Սրբություն համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Բ-ի հրավերով, Թբիլիսի՝ վրաց Կաթողիկոսարան այցելեց Ալեքսանդրիայի և համայն Աֆրիկայի հունաց Պապ և Պատրիարք Նիկողայոս Զ-ը:

Այս պատմական հանդիպմանը հրավիրված էր նաև, իբրև Հայ Եկեղեցու ներկայացուցիչ, վրահայոց թեմի առաջնորդ Տ. Գևորգ եպս. Մերայդարյանը, որը հանդիպման ընթացքում, հուլիսի 26-ին, հանդես եկավ հետևյալ ողջույնի խոսքով.

ԳԵՎՈՐԳ ՍՐԲԱԶԱՆԻ ԽՈՍՔԸ

Ձերդ Սրբություն համայն վրաց Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Բ,

Ձերդ Սրբություն Ալեքսանդրիայի և համայն Աֆրիկայի հունաց Պապ և Պատրիարք Նիկողայոս Զ,

Միտցյալ հոգևոր եղբայրներ, մեծահարգ կրոնից նախարար և թանկագին հյուրեր,

Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի և Վրաստա-

նի հայոց թեմի անունից ուրախությամբ ողջունում ենք երկու Հայրապետներիդ՝ Նորին Սրբություն Իլիա Բ Կաթողիկոս-Պատրիարքի և Նորին Սրբություն Նիկողայոս Զ Պապ-Պատրիարքի պատմական հանդիպումը Վրաստանի օրհնյալ հողի վրա:


Օգտվելով առիթից, հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը Նորին Սրբություն Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Բ-ին՝ Վրաստանի հայոց եկեղեցիների նկատմամբ իր տաժաժ հայրական սիրո և ուշադրության, ինչպես նաև այս պատմական հանդիպման սիրավիր հրավերի համար:

Ձերդ Սրբություն Նիկողայոս Զ,

Հայ Եկեղեցին և հայ ժողովուրդը ուրախությամբ հիշում են, 1974 թվականին Ձեր կատարած այցելությունը ի Սուրբ Էջմիածին:

Մեզ համար մեծ պատիվ է և ուրախություն ողջունել Ձեզ՝ Ալեքսանդրիայի Ս. Մարկոս ալեուսարանչի պատմական Աթոռի Գահակալիդ:

Ալեքսանդրիայի Աթոռը հանդիսացել է հզոր կովանը համայն քրիստոնյա աշխարհում՝ վճռական դեր կատարելով եկեղեցու պատմության մեջ: Այդ Աթոռի գործունեու-



Համայն Արամտանի կաթողիկոս-Պատրիարք Գրիգոր Բ-ը և Համայն Աֆրիկայի Ռուսաց Պապ և Պատրիարք Գրիգոր Բ-ը Թբիլիսիի վրաց կաթողիկոսարանի դահլիճում

թյունն ու անունը ամրապնդել են Ալեքսանդրիայի Եկեղեցու նշանավոր հայրերը, ինչպիսիք են Կղեմեսը, Գիոնեսիոսը, Ռիզենեսը, Մեծն Աթանասը, Ս. Կյուրեղ Ալեքսանդրացին և ուրիշներ:

Բ դարում Ալեքսանդրիայում հիմնվել է քրիստոնեական առաջին աստվածաբանական ուսումնական կենտրոնը, որի գիտության լույսը Գ—Ե դարերում հասնում է մինչև Հայաստան:

Մեր Եկեղեցին, իբրև արևելյան հնագույն Եկեղեցիներից մեկը, հարազատ ըզգացմունքներ է տաժում դեպի օրթոդոքս Եկեղեցիների մեծ ընտանիքը, որոնք մոտ են մեզ, սուրբ խորհուրդներով և ավանդություններով:


Մեր օրերին քրիստոնյա բոլոր Եկեղեցիները պարտավոր են իրենց ոգեկան ողջ կարողությամբ պաշտպանել Քրիստոսի խաղաղության պատգամը:


Մենք՝ Հայ Եկեղեցու սպասավորներս, գոհումնակությամբ նշում ենք, որ Ձերդ Սրբ-

բությունը Ս. Էջմիածին այցելության ընթացքում, Նորին Սրբություն Վազգեն Ա Ծալրագույն Պատրիարք-Աթոռակոսի հետ վկայել է, որ քրիստոնյա բոլոր Եկեղեցիների սեպում պարտքն է՝ գոհացում տալ մեր ժամանակների աշխարհային հարցերին, մանավանդ հանգեցնել պատերազմի օջախները, պահպանել և ամրապնդել աշխարհի խաղաղությունը և կենսագործել եղբայրությունը, համագործակցությունը և սոցիալական արդարությունը ժողովուրդների միջև:

Ընդունեցեք մեր շնորհակալությունները, մեր ջերմագին սերը և սրտագին բարեմաղթությունները: Ձեզ բազատողություն, բազում տարիների կյանք և զանակալություն՝ Ալեքսանդրիայի պատմական սուրբ Աթոռի վրա:

Վստահ ենք, որ Վրաստանի հիասքանչ բնությունը և վրաց ժողովրդի հյուրընկալությունը Ձերդ Սրբության հիշողության մեջ կթողնեն անփնչելի տպավորություններ:





ՄԱՐԴՈՒ ՍՏԵՂԾՄԱՆ ՀԵՏ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՐՑԵՐ

Վեցերորդ օրը մարդու ստեղծումովը Աստծու ստեղծագործությունը հասնում է իր լրման: Նախորդ բոլոր ստեղծագործությունների ընթացքում Աստված հրամայել էր. «Եղիցի՛ լոյս... և եղև այնպէս»: Մարդն ստեղծելիս, սակայն, Աստված նախ հայտնում է իր մտադրությունը. «Հորինենք մարդիկ մեր պատկերի նմանության համաձայն»¹:

Զարմանալի է թվում այն, որ Աստված հիշյալ նախադասության մեջ հոգնակի է խոսում և ապա «մարդ» (եբրայեցերեն—Ադամ) բառը առանց որոշիչ հոդի, անորոշ ձևով է հանդես գալիս:

Հարց է ծագում, թե ինչո՞ւ Աստված հոգնակի է խոսում, կամ ո՞ւմ հետ է նա խորհրդակցում: Ըստ ոմանց սրանից բազմաստվածություն է բուրում: Բաբելոնյան առասպելներում էլ աստվածները նախքան մարդն ստեղծելը՝ միմյանց հետ են խորհրդակցում:

Քրիստոնյան պիտի ասի՝ այստեղ քողարկված կերպով առկա է ս. Երրորդության խորհրդող:

Ոմանք պիտի պնդեն, թե Աստված՝ թագավորների հատուկ հոգնակի ոճն է գործածում (*pluralis majestatis*): Ուրիշներ պիտի ասեն սա այն հոգնակի ձևն է, երբ մարդ ինքն իր հետ խորհրդակցելիս օգտագործում է այս հոգնակի ձևը (*pluralis deliberationis*):

¹ Ի տարբերություն «Բարա» ստեղծել բայի՝ վերոհիշյալ նախադասության մեջ գործածվում է «ասահ» հորինել, շինել, կառուցել բայը: Գրաբար բնագիրը թե «բարա»-ն և թե «ասահ»-ն ստեղծել է թարգմանել:

Արդի աստվածաբաններից ոմանք պիտի հաստատեն, թե Աստված մարդն ըստեղծելիս աստվածային բոլոր գործությունների, ներառյալ հրեշտակների, մասնակցությունն է հրավիրում, քանի որ ստեղծվող մարդը հիշատակված մյուս բոլոր արարածներից տարբեր է. նա օծոված է բանականությամբ և մանավանդ իշխելու կարողությամբ:

Առաջին վարկածը, թե բազմաստվածությունը հետքեր է թողել Ս. Գրքի սույն համարում՝ հերքվում է նրանով, որ Ծննդոց գրքում պատմվող ամբողջ ստեղծագործությունը բացահայտ կերպով «դիստանց» է պահում արևելյան հին առասպելներից, մանավանդ երբ շեշտվում է միաստվածությունը: Վերջապես քահանայական գրիչը², որն ուսուցողական բնույթ ունի, չի կարող հանդուրժել որևէ հիշատակման, որը բազմաստվածության հետ կապ ունի: Եբրայական մտածելակերպն էլ Աստծու (Էլոհիմ) կողքին այլ աստված չի ճանաչում: Մյուս կողմից վերոհիշյալ համարը նախ եզակիով է սկսվում. «և առաց Աստուած. Յօրինենք...»:

Երբ ակնարկվում է Ս. Երրորդության մասին՝ պետք է ասել, թե սա քրիստոնեական հավատքի հատուկ մի բացատրություն է, որը խորթ է եբրայական տեսակետին, որովհետև վերջինիս պակասում է Ս. Երրորդության ճանաչումը:

² Քահանայական գրիչն կամ աղբյուրին է պատկանում Ծննդոց գրքում հանդես եկող ստեղծագործության առաջին պատումը: Գոված շուրջ 580 թ. ճ.Ք.:

Թագավորների հոգնակի ունին էլ քահանայական գրիչը ծանոթ չի կարող լինել, որովհետև սույն plural majestatis-ը ավելի ուշ շրջանի է պատկանում և պարսկական մտածելակերպի արդյունքն է, որի օրինակը առաջին անգամ լինելով հանդիպում ենք Եզրաս գլուխ Բ-ի 26-րդ համարում:

Թեև վերջին երկու վարկածներն էլ իրենց կողմնակիցներն ունեն արդի աստվածաբանների մեջ, սակայն նախապատվությունը տրվում է երրորդին, որովհետև եբրայական մտածելակերպին խորթ չէ աստվածային գործությունների, ինչպես նաև հրեշտակների՝ գոյությունը: Այս մասին Ծննդոց Թ, 22-րդ համարի մեջ գրված է, թե «ամա Ադամը մեզանից մեկի նման եղավ՝ ճանաչելով բարին ու չարը», այսինքն՝ նա նմանվեց հրեշտակներից մեկին և իր անկումից հետո էլ բարուն հետևելով՝ կարող է լինել մի հրեշտակ: Գ. թագ. ԻԲ, 19-րդ համարում Միքիա մարգարեն ասում է. «Արդարև տեսա Իսրայելի Տեր Աստվածը Իր աթոռի վրա նստած և երկնային ամրոջ զորքերը աչ և ձախ կողմերից նրա շուրջը»: (Այս մասին տես նաև Յովթի Ա գլխում և հատկապես Եսայի գլխի 2):

Ինչ վերաբերում է «աղամ», «մարդ» բառին՝ այն առանց որոշիչ հոդի է հանդես գալիս և նրանով՝ Ս. Գիրքը նկատումիս ամբողջ մարդկությունը: Մարտին Լուտերը սույն բառը ուղղակի հոգնակի ձևով «մարդիկ» է թարգմանել:

Պետք է ասել թե անոնիկ շրջանի գրականության մեջ Ս. Գիրքն է առաջինը, որ պատասխանում է այն հարցին, թե ո՞վ է մարդը: — Մարդն Աստծու պատկերին նմանությունն է:

Սակայն «մեր պատկերի նմանության համաձայն»՝ արտահայտությունը չի նշանակում ուղղակի Աստծու պատկերով: Պատկերը ինքնին մի պատճենն է, իսկ պատկերի նմանությունը՝ պատճենի պատճենը: «Նմանությունն համաձայն» արտահայտությունը տկարացնում է մարդու Աստծոն պատկերի հետ ունեցած նույնությունը:

³ Հայերեն գրաբար օրինակը թեև եզակի ձևն ունի, սակայն եբրայական բնագիրը պահել է հոգնակին, որտեղ սույն համարը համապատասխանում է Եզր. Գ, 18-ին և այսպես թարգմանվում, «Ենթ լիցում ձեր գիրքը»: Գրաբարն ունի, «Ինչ գրում ձեր նամակը»:

⁴ Եբրայեցիներն «հաղամանու կաղամոբանու» հայերենում թարգմանվում է. «մեր պատկերի նմանության համաձայն»:

Սակայն ի՞նչ է Աստծոն պատկերի նմանությունը և ինչո՞ւմն է կախում դրա հետ մարդու ունեցած նմանությունը:

Իծրախտարար Ծննդոց գիրքը պարզապես հաղորդում է մեզ տվյալներ ստեղծագործության մասին՝ առանց որևէ մեկնաբանության: Դրա համար էլ այնտեղ ոչ մի ակնարկություն չկա հիշյալ հարցերի լուծման առնչությամբ:

Եբրայեցիներն «պատկեր» (սլլըմ) բառը նշանակում է մի իսկական պատճեն, ինչպես որևէ անձին քանդակը կամ արձանը նրա իսկական պատճենն է: Արևելյան ազգերի տեսակետից մանավանդ, երբ որևէ մեկի պատկերը գծվում կամ քանդակվում է՝ այն ստանում է նաև տվյալ անձի էությունից ինչ-որ մի բան, ինչպես օրինակ Օրթոդոքս եկեղեցիների իկոնների պարագան է: Այս իսկ պատճառով Հին Կտակարանում արգելվում է Աստծու պատկերը կամ արձանը հորինելը (տես Ելից Ի, 4, ԼԴ, 17):

Կարելի է ասել, թե մարդու բնական երևույթը նման է Աստծու, մանավանդ որ Ծննդոց Ե, 3-րդ համարում կարդում ենք թե Ադամը մի Սեթ անուն որդի ծնեց նման իր պատկերին, կերպարանքին (խոսքը բնական երեկության մասին է):

Հարցի պատասխանը «ոչ» է: Համաձայն պրոֆ. Հ. Գրոս-ի՝ Հին Կտակարանում ոչ մի տեղ կարելի չէ գտնել Աստծոն մարմին ունենալու մասին մի ակնարկություն՝ չնայած Աստծոն վերաբերյալ մարդակերպ պատկերացումը ներկայացնող հատվածների առկայությանը: Ինչ վերաբերվում է Ծննդոցի հինգերորդ գլխում եղած արտահայտությանը՝ պետք է ասել որ սույն նմանությունը, իհարկե, բնական երևույթի մասին է, որովհետև ի տարբերություն աստվածային ստեղծագործության՝ մարդը ծնվում է իր տիպարի ստեղծագործության հետևանքով:

Մյուս կողմից, սակայն, բավարար չի ասելը, թե Աստծու պատկերի նմանությունը կախում է մարդու ունեցած քանակականության կամ հոգու մեջ, որն ավելի արևմտյան մտածելակերպի արդյունք է, այլ այդ նմանությունը Աստծու Տիրությանը կամ իշխանությանը բաժնեկից լինելու մեջ է կախում: Ավելի պարզ ասած.—Մարդն Աստծոն նման իշխելու կարողություն ունի. նրա քանակականությունը նրան զանազանում է մյուս ստեղծագործություններից և նրանով միայն կարելի չէ նմանեցնել նրան Աստծուն, սակայն նրա ունեցած

⁵ H. Gross, Lex Tua Veritas էջ 91:

իշխելու ունակությունը համապատասխանում է աստվածայինի հետ: Եթե լրիվ ընթերցենք Ծանոց Ա, 26-րդ համարը՝ կտեսնենք թե Աստված իշխելու է կոչում մարդը. «և նրանք թող իշխեն ծովի ձկնների, երկնի թռչունների և անասունների, նաև ամբողջ երկրի և նրա վրայ սողացող սողունների վրայ»: Իսկ Սաղմոս Ը 5—6-րդ համարները կարելի է վերոհիշյալի լավագույն արտահայտությունը նկատել.

«Ո՛վ է մարդը, որին դու հիշես
կամ մարդու որդին, որին դու այցելես,
— Աստծուց փոքր ինչ նվազ ստեղծեցիր
փառքով և պատվով նրան պսակեցիր»:

Վուլգատան և Եօթանասնիցը «Աստված» բառի փոխարեն «հրեշտակ» ունեն, սակայն եբրայական բնագրում «Աստված» է: «Փառքով և պատվով նրան պսակեցիր» արտահայտությունը ինքնին ցույց է տալիս, թե Աստված ինչ իշխանությամբ է օժտում մարդը: Այսպիսով նա դառնում է Աստուծո պատկերի նմանությունը:

Հիմնադրում, երբ մի գորավար մի քաղաք գրավելու լինե՞ր՝ կկանգնեցնե՞ր աշտեղ նաև իր արձանը, որպեսզի ժողովուրդն իմանար, թե այդ շրջանի իշխողը ինքն է. այսպիսով, երբ երկրի վրա հաստատվում է արարիչ Աստծու պատկերի (նմանության) մարդը՝ նշանակում է թե մարդն է այստեղ իշխողը, սակայն նրա այդ կարողությունը բարեբախտաբար Աստծու կարողության մի նմանությունն է լինի:

Քանի մարդը մասնակից է աստվածային արժանիքի, դրա համար էլ որևէ դեպքում չի կարելի խոցել նրա մարդկային արժանիքը, իսկ ով այդ բանը կատարի՝ պետք է պատժի ենթարկվի: Այս է պատճառը երբ քահանայական գրչի հատուկ մի ուրիշ հատվածում գրված կա. «Ով մարդկային արին թափի՝ նրա արեան փոխարեն իր արինը թող թափուի» (Ծանոց. Թ, 6):

Քրիստոնեական տեսակետից Քրիստոսն է Աստծու կատարյալ պատկերը (Եբր. Ա, 3): Քրիստոնյան պետք է ջանք թափի կատարելագործելու իր աստվածային պատկերը (Պողոս. Գ, 8—10)՝ այսինքն ձգտելու բարուն և աստվածայինին:

Աստված սեռական տարբերությամբ է ստեղծում մարդկանց, միաժամանակ թե՛ մարդը և թե՛ կինը Աստծու պատկերի նմանությամբ են ստեղծվում. սրանով կարելի է նաև բացատրել թե ֆիզիքական նմանություն գոյություն չունի մարդու և Աստծու միջև, որովհետև Աստված վեր է սեռականությունից և եբրայական մտածե-

լակերպին բացարձակ խորթ է Աստծու կին կամ զավակ ունենալը:

Վերջում Աստված օրհնում է նրանց, այսինքն՝ մարդկանց ասելով «Աճեցե՛ք և բազմացե՛ք ու ձեզանով լցրե՛ք երկիրը և այն ձեզ հպատակեցրե՛ք: Նաև իշխեցե՛ք ծովի ձկների, երկնի թռչունների...»:

«Օրհնությունը» ի տարբերություն անեծքի՝ կյանքի գորացման, պողաբերության և երկարաձգման մաղթանք է, սա արտահայտվում է նաև օրհնությունը բնորոշող խոսքերով:

Ի տարբերություն հեթանոսական մտածելակերպի, որի համաձայն սերնդագործությունը կամ պողաբերությունը վերագրվում էր պողաբերության դիցուհուն՝ ինչպես օրինակ քանանացիների մոտ Աստարտ-ին, հայերի մոտ Անահիտին, Ս. Գրքում պողաբերությունը ուղղակի Աստուծո օրհնության արդյունքն է: Սերնդագործությունը ինչքան էլ հրաշալի լինի, ինչքան էլ անքննելի լինի՝ մնում է Աստծու օրհնության և հրամանի արդյունքը: Այս իսկ պատճառով ամուսնացյալ մարդկանց պարտականությունն է ստեղծագործելը, Աստուծո պատվերին հնազանդելը, դրա համար էլ սուրբ և պատվական է ամուսնության խորհուրդը:

Այնուհետև Աստված մարդուն, ինչպես նաև կենդանիներին, բուսականությունը տալիս է որպես սնունդ: Մարդկանց սննդի ցուցակում կենդանիների միսը գոյություն չունի. չի ակնարկում կենդանի սպանելու կամ արյուն թափելու մասին: Վերջապես երկունս էլ, մարդն ու կենդանին, միմյանց սեղանակից են: Այս պարագան այն դրախտային երևույթն է մատնանշում, երբ դեռևս երեք արյուն չէր թափված, երբ դեռևս մարդու, Աստծու և ստեղծագործության միջև եղած ներդաշնակությունը մեղքի հետևանքով չէր խախտված:

Պիտի հաստատվի՝ արդյոք վերստին դրախտային այդ ներդաշնակությունը. այս մասին մենք քրիստոնյաներս լավատես ենք և հույս ունենք, որ Եսայի մարգարեի խորհրդանշական խոսքերը իրականության են վերածվելու.

«Այն ատեն գալլը գառի հետ պիտի
բնակուի,

ինձը ուլի հետ պիտի մակաղի,
հորթն ու առիծը միասին պիտի

արածեն,
նրանց վրայ կարող կլինի հսկել մի
պատանի:

Կովն ու արջը իրար հետ պիտի
ընկերանան

ու նրանց ձագերը իրար հետ պիտի
 շրջեն:
 Առիծը եզան նման յարդ պիտի օտարակի,
 և ծծկեր երեխան իծերի քնի առաջ պիտի
 խաղայ
 ու նա իր ձեռքը օձերի այդ քնի մեջ
 պիտի երկարի:
 Մարդն ալևս պիտի չմեղանչի,
 և իմ սուրբ լերան բովանդակ տարածքի
 վրայ
 ոչ մի ունիւր նա պիտի գործի.
 որովհետև Աստուծոյ անաշուղտութեամբ
 լցուեց ամբողջ երկիրը
 այնպէս, ինչպէս ջուրը ծովն է լցրել»:
 (Եսայի ԺԱ, 6—9. քարգմանութիւնը
 համաձայն էրր. քնագրի):

Ջրհեղեղից հետո քահանայական միւս-
 նույն գրչին պատկանող հատվածում, Աստ-
 ված կենդանիներն էլ մարդկանց համար
 սահմանում է որպէս կերակուր (Ծննդոց.
 Թ-րդ գլուխ): Սրանով մարդը լինում է
 քաղաքական իշխանը կենդանական աշ-
 խարհի վրա:

Մյուս կողմից այստեղ հայտնի է դա-
 նում նաև, որ Աստված սկզբից ի վեր,
 նույնիսկ մարդու անկումից հետո, երբեք
 իր գորգորոտ խնամքից չի անտեսում
 մարդուն՝ տալով նրան այն ամենը ինչ որ
 հարկավոր է նրա ապրուստի համար:
 Դրա համար էլ մարդու գոյության քաղաք-
 ձակ նպատակն ու իմաստը պետք չէ լինի
 ապրուստի հոգը: Քրիստոսն ասում է. «21-
 որ կեանքն աւելին է, քան կերակուրը, և
 մարմինը՝ քան զգետը» (Մատթ. 2, 25), և

վերստին մատնանշելու համար Աստու-
 խնամքը՝ ասում է. «Այսուհետև հոգ մի ա-
 րեք ու ասեք՝ ինչ պիտի ուտենք կամ ինչ
 պիտի խմենք կամ ինչ պիտի հագնենք,
 որովհետև հեթանոսներն են այդ բոլորը
 որոնում. քանի որ ձեր երկնաւոր հայրը
 գիտէ, թէ այդ բոլոր ձեզ պետք է: Եւսի՝
 խնդրեցէք Աստուծոյ թագաւորութիւնը և
 նրա արդարութիւնը, և այդ բոլորը ձեզ
 աւելիով տրուի» (Մատթ. 2, 31—33): Այս
 նշանակում է, թե Աստված ապրուստի
 համար տվել է մարդուն պետք եղածը:
 Մարդուն կմնա խելացիորեն օգտվել այդ
 բարիքներից: Իսկ թե աշխարհի ինչ-
 ինչ անկյուններում սույից մարդիկ են մա-
 հանում՝ այդ չի նշանակում թե Աստված նը-
 րանց համար ապրուստի քաժին չի հաճել:
 Մարդն է այստեղ մեղավորը, մարդու ըն-
 չաքաղցությունը խլում է նաև աղքատի
 քաժինը կամ նրան չի տալիս զարգանալ և
 տնտեսությունը զորացնելու հնարավորու-
 թյուն: Սրա լավագույն օրինակը մեզ տվե-
 ցին զաղութարարները՝ կողոպտելով թե-
 րաճ երկրների հումքերը և շահագործելով
 խեղճ քնակչությանը: Կա նաև ավելի սար-
 սալելին, գերարտադրության հետևանքով
 չիջեցնելու համար շուկայի գները՝ մարդիկ
 նույնիսկ դիտմամբ փչացնում են արդյու-
 նաբերության մի զգալի մասը, իսկ կան
 նաև սցնպիսիք, ովքեր շուայում են ամեն
 ինչ, մսխում են և վատնում առանց նկա-
 տի առնելու աղքատության մեջ տառա-
 սյող մարդկանց:

ՀԱԿՈՒ ՎԱՐԴԱՊԵՏ ԳԸԸՆԾՅԱՆ





ԱՐԹՈՒՆ ՀԱՏԻՏՅԱՆ

ԱԼԵԿՍԱՆԴՐԻԱՅԻ ԵԿԵՂԵՑՈՒ ՄԵԾ ՀԱՅՐԱՊԵՏՆԵՐԸ Բ—Ե ԴԱՐԵՐՈՒՄ

Ընդհանրական եկեղեցու պատմության, քրիստոնեական մշակույթի ու գիտության, հավատքի ուղղափառ պաշտպանության բնագավառում, Բ դարից սկսած մինչև Ե դարի վերջերը, փառավոր ծառայություններ են մատուցել Ալեքսանդրիայի Աթոռի մեծապատակ հայրապետներն ու եկեղեցական հայրերը:

Ալեքսանդրիայի առաքելական ու պատմական Աթոռը հաստատվել է Ա դարում Մարկոս Ավետարանչի քարոզության և նահատակության վրա: Այդ Աթոռը համարվել է քրիստոնեական քարոզության, առաքելության և հավատքի ուղղափառության կարևորագույն սյուներից ու ամբողջներից մեկը բովանդակ քրիստոնեական աշխարհի համար, Աթոռ՝ որը այնքան նշանավոր ու վճռական դեր է կատարել մանավանդ Բ—Ե դարերում իր սուրբ և մեծահոշակ հայրապետներով, եկեղեցական հայրերով ու քրիստոնեաշունչ գիտնականներով, հակառակ անցյալում եկեղեցական տարեգրության մեջ հաճախակի պատահած ողբերգական ու տխուր իրադարձությունների:

Ալեքսանդրիայի եկեղեցին անլուր նահատակությունների գնով, դարերով շարունակել է իր առաքելությունը, իր գոյության բոլոր հանգրվաններում, հավատարիմ մնալով հոգևոր, մշակութային, քարոզչական իր ավանդություններին:

Սուրբ Մարկոսի առաքելական այդ Աթոռը այսօր էլ հանդիսանում է ավանդապահը քրիստոնեական մշակույթի ու

գիտության, արևելյան ուղղափառ պատմական եկեղեցիների մեծ ընտանիքում¹:

Ըստ պատմական վկայությունների Գ դարից սկսած Հայաստանի եկեղեցին բարեկամական կապեր է պահպանել Ալեքսանդրիայի այս մեծ Աթոռի հետ: Այս մասին հանգամանորեն կխոսվի ստորև:

Ընդհանուր եկեղեցու պատմության մեջ Բ—Ե դարերը «իրենց նշանակությամբ վերին աստիճանի մի հետաքրքիր շրջան են ներկայացնում: Հույն-Հռոմեական կայսրության արտաքին դրության մեջ Դ դարի ըսկզբից առաջ եկած հիմնական փոփոխությունը եկեղեցու ներքին կյանքի համար ամենահաջող հետևանքն ունեցավ, լիակատար հնարավորություն տալով նրա անդամներին, հոգու բոլոր ուժերը եկեղեցու ներքին հարցերի լուծման վրա կենտրոնացնելու: Գոյության համար մղած արտաքին կոիվները չկարողացան ջլատել եկեղեցուն և այն սկսեց լիակատար կյանքով ապրել»²:

¹ Ալեքսանդրիայի եկեղեցու հիմնադիր և առաջին եպիսկոպոս Մարկոս Ավետարանչի մասին կարդալ Գործք Առաքելոց ԺԲ 12—25, ԺԳ 13, ԺԷ 37—39 Ա Պետր. Ե. 13. Կողս. Դ. 10. Բ. Տիմոթ. Դ. 11. Տես նաև Շնորհք արք. Գալուստյան, «Աստուածաշնչական սուրբեր», Իսթանբուլ, 1977, էջ 193—194:

² Պրոֆ. Ն. Սագարդա, Հույն-արևելքի հին եկեղեցական աստվածաբանական գիտությունը, ռուս. թարգմ. Արտակ վարդապետ Սմբատյան, Վաղարշապատ, տպարան Մայր Աթոռ ու. Էջմիածին, 1910, էջ 3:

Գ դարի սկզբից եկեղեցական գրականությունը ապրում է իր զարգացման բուռն շրջանը: Միաժամանակ եկեղեցին ջատագովական ու հակա-ճատական պայքար է մղում գաղափարական հողի վրա իր հակաակորդների դեմ:

Գ—Դ դարերում «քրիստոնեական» համայնքը առանձին թափով երևան է գալիս աստվածաբանական գիտության զանազան ճյուղերի մեջ... Սույն ժամանակի աստվածաբանական երկերը ուղեցույց են ծառայում ընդհանուր քրիստոնեության հաջորդ սերունդների համար»² և՛ Արևելքում և՛ Արևմուտքում³:

Այս ժամանակահատվածում, և մասնավորաբար Ալեքսանդրիայի եկեղեցու ծոցում հրապարակ են իջնում մեծ դավանաբաններն ու ջատագույները, ինչպիսիք էին Կղևմես Ալեքսանդրացին (150—215), Ռիգիենսը (185—254), Մեծն Դիոնիսիոս Ալեքսանդրացին (190—265), Սուրբ Աթանասը (Դ դար), Կյուրեղ Ալեքսանդրացին, Տիմոթեոս Կուգ (V դար) և ուրիշներ:

Բ—E դարերում եկեղեցու ամբողջ ուշադրությունը կենտրոնացել էր քրիստոնեական հավատքի և դավանության մեծ հարցերի վրա: Այս շրջանի հետ, որը կլասիկ և վճռական նշանակություն է ունեցել, եկեղեցու կյանքում և պատմության մեջ ո՛չ մի շրջան համեմատվել չի կարող⁴:

Ալեքսանդրիայի Աթոռը և մանավանդ Բ դարից նրան առընթեր բացված աստվածաբանական բարձրագույն դպրոցը առաջինն էր որ քրիստոնեական աստվածաբանական գիտության կենտրոն հանդիսացավ, առիմանեց եկեղեցական-պիտական աստվածաբանության հիմնական սկզբունքներն ու մեթոդը, և դասական հին գիտությունն ու փիլիսոփայությունը «եկեղեցականացնելու» առաջին վճռական քայլն առավ, ձգտելով հաշտեցնել «գիտությունը քրիստոնեական հավատքի հետ, հին քաղաքակրթությունը՝ Ալեքսանդրիայի հետ, եկեղեցական վարդապետության հողի վրա, «փիլիսոփայություն հիմնավորելու և արդարացնելու համար քրիստոնեությունը», բազմապատկերով հավատքի ճշմարտության՝ ներքին կապը, գիտության միջոցով⁵:

Ալեքսանդրիայի աստվածաբանական դպրոցը, որը հիմնվել է առավելագույն քրիստոնեական քարոզության նպատակով փոխադարձ հասկացողություն ստեղծելու համար կրթված հեթանոսի և նոր կրոնի հավատացյալների միջև, ունեցել է կանոնավոր շրջանների բաժանված դասընթացներ, ուսուցման որոշ եղանակ ու ծրագիր, թե՛ հեթանոս ուսանողների և թե՛ բարձրագույն գիտության հետևող նորադարձ քրիստոնյա ուսանողության համար: Սույն «դպրոցը բնականաբար դարձավ քրիստոնեական համար ուսուցիչներ պատրաստող դպրոց, այն ինչ նրա գլխին կանգնած մարդիկ քրիստոնեության ամենանշանավոր գիտնականներն էին»⁶:

Մեր թվականությունից առաջ 331 թվականին Ալեքսանդր Մակեդոնացին հիմնադրում է Ալեքսանդրիա քաղաքը, որը շուտով դառնում է Արևելքն ու Արևմուտքը միացնող ամենափայլուն կենտրոնը կայսրության մտավորական կյանքի:

Ալեքսանդրիայում է որ տեղի է ունեցել Աստվածաշնչի «Եօթանասնից հոմարեն» թարգմանությունը մ. Ք. 285—247 թվականներին, Պտղոմեոս թագավորի օրով 70 եբրայագետ և հունագետ գիտնականների միջոցով:

Ալեքսանդրիան խառն բնակչություն ունեցող քաղաք էր: Այստեղ իրար էին հանդիպում չրեկեյան, եգիպտական, հունական, հրեական և ապա առաջին դարից սկսած նաև քրիստոնեական մշակույթները, կրոններն ու փիլիսոփայական բնորոշումները:

Քրիստոնեության և հին աշխարհի կարևոր իմացական աղբյուրների և մանավանդ Ալեքսանդրիայի կյանքի հոգևոր բնավորությունից և նրա մեջ տիրապետող կրոնական-փիլիսոփայական հոսանքների պայքարի արդյունքն է լինում Ալեքսանդրիայի քրիստոնեական աստվածաբանական դպրոցի հաստատումը⁷:

Այս դպրոցը միաժամանակ «հանդիսանում է հնագույն կենտրոնը սրբազան գիտության, քրիստոնեության պատմության, որի մշակած գրականության որոշիչ նկարագիրն է լինում քրիստոնեական հավատքի բովանդակության բնագավառական ուսումնասիրությունը, մեծ հավում դեպի Պատուհի փիլիսոփայությունն ու Աստ-

² Մագարդա, նույնը, էջ 3—4:

³ Մագարդա, նույնը:

⁵ Մագարդա, նույնը, էջ 17—18—27: Տես նաև Դավիթ Ամհաթը, երկեր, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունը Ս. Ս. Արևշատյանի, Երևան, 1980, էջ 4:

⁶ Ընդհանուր եկեղեցական պատմություն, Երվանդ վարդապետ Տեր-Մինասյանց, ս. Էջմիածին, 1908, էջ 140—141:

⁷ Մագարդա, նույնը, էջ 17—27:

վածաշնչի ալյաքանական մեկնությունը և Հայտնության գիտական բացատրությունը»⁸:

ԿՂԵՄԵՍ ՀԱՅՐԱՊԵՏ ԱԼԵԿՍԱՆԴՐԱՑԻ
(150—215)

Բ դարի առաջին հիսնամյակում Ալեքսանդրիայի եկեղեցին ամրապնդել էր իր դիրքերը և ջատագովական-հակաճառական պայքարի մեջ էր մտել իր գաղափարական հակառակորդների դեմ:

Այդ պայքարի առաջին մեծ ներկայացուցիչը համարվում է Տիտոս Ֆլավիոս Կղեմես Ալեքսանդրացի Հայրապետը, որը ըստ մատենագիրների վկայության, հանդիսանում է գիտական աստվածաբանության հիմնադիրն ու նահապետը: (Տես Վիլյամ Ս. Սահակյան, պատմություն փիլիսոփայության, անգլերեն, 1968, ԱՄՆ, էջ 86):

Կղեմեսը ծնվել է 150 թվականին Աթենքում, կրթված ու բարեկեցիկ հեթանոս ընտանիքի հարկի տակ: Աթենքում է որ ըստացել է իր առաջին գիտական, փիլիսոփայական լուրջ կրթությունը: Ոչինչ հայտնի չէ նրա քրիստոնյա դառնալու թվականի, և շարժառիթների մասին:

Կղեմեսը քրիստոնյա դառնալուց հետո ծնողների հովանավորությամբ ճանապարհորդություններ է կատարում դեպի հարավային Իտալիա, Սիրիա ու Պաղեստին, ծանոթանալու այդ շրջանի քրիստոնյա մեծ ուսուցիչների հետ, և մանավանդ աշակերտելու նրանց: Այդ մասին նա վկայում է որ «իմքը բարի պատեհությունն ու առանձնաշնորհն է ունեցել լսելու դասախոսություններն ու քարոզությունները օրհնյալ և ճշմարտապես նշանավոր քրիստոնյա մտածողների»:

Կղեմեսի ուսումնասիրական ուղևորությունների վերջին և կարևորագույն հանգրվանն է հանդիսանում Եգիպտոսը, ուր նա աշակերտում է 180 թվականին, ըստ Եվսեբիոս Կեսարացու վկայության⁹, Ալեքսանդրիայի աստվածաբանական դպրոցի առաջին ու նշանավոր ուսուցիչ Պանտենոսին, հրապուրվում՝ նրա բովանդակալից ու անսպառ գիտությամբ դասախոսություններով և Ալեքսանդրիան դառնում է նրա կրթության երկրորդ հայրենիքը:

Կղեմեսը իր նշանավոր ու ամենահարգի

ուսուցչի մասին վկայում է. «Երբ ես եկա այս վերջին ուսուցչիս մոտ, ես հանգիստ գտա: Նա, սիցիլիական այս ճշմարիտ մեղուն, մարգարեների և առաքյալների մարգագետինների ծաղիկներից ծծելով, ծնունդ էր տալիս իրեն լսողների հոգիներում գիտության անմահ տարերքի»:

Պանտենոսը ստոյիկյան նախնի փիլիսոփա էր, ծնված Սիցիլիայում: Նա հետագայում քրիստոնյա է դառնում և «շնորհիվ հերետիկոսների ու հույն փիլիսոփաների հետ ունեցած հարաբերության, կարիք էր զգացել քրիստոնեական վարդապետությունն ու նրա ճշմարտության ապացույցները գիտական հետազոտության ենթարկել»:

Ըստ Կղեմեսի և Եվսեբիոս Կեսարացու վկայությունների, Պանտենոսը իր ժամանակակից քրիստոնյա ուսուցիչների, մտածողների և գիտնականների մեջ, վաշտում էր «Տիեզերահոյակ համբավ»:

Պանտենոսը Ալեքսանդրիայի աստվածաբանական դպրոցը մեծ արդյունավորությամբ և ձեռնահաստքեն ղեկավարում է 180—200 թվականներին, մինչև իր մահը: Նրա մահից հետո, Ալեքսանդրիայի Աթոռի և դպրոցի ղեկավարությունը հանձնվում է Կղեմեսին, որպես նրա հաջորդի, գործակցի ու տաղանդավոր աշակերտի: Կղեմեսը, սակայն, իր ծանր ու պատասխանատու պաշտոնի վրա երկար չի մնում:

Սեպտիմոս Սեվերոս կայսրի (193—211) հալածանքներից երեք տարի հետո Կղեմեսը ստիպված հեռանում է Ալեքսանդրիայից, 203 թվականին և ապաստան է գտնում Կապադովկյան Կեսարիայում, իր աշակերտ Ալեքսանդրի մոտ, որը հետագայում դառնում է Երուսաղեմի Աթոռի եպիսկոպոսը:

Կղեմես Ալեքսանդրացու կյանքի հետագա տարիները մնում են անհայտ: Կապադովկիայում էլ, 215 թվականին Կղեմես Ալեքսանդրացի Հայրապետը մահանում է:

ԿՂԵՄԵՍ ԱԼԵԿՍԱՆԴՐԱՑՈՒ
ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ՎԱՍՏԱԿԸ

Կղեմես Հայրապետը կոչվում է «վարդապետ եկեղեցու» և Որիգենեսից հետո համարվում է Ալեքսանդրիայի աստվածաբանական դպրոցի գլխավոր ներկայացուցիչը, որպես իր ժամանակի քրիստոնյա ամենամեծ գիտնականներից մեկը և «հայեցողական, տեսական աստվածաբանության հիմնադիրը»:

Կղեմեսի հելլենիստական կրթությունը մղել է նրան քրիստոնեական հավատքին

⁸ Johannes Quasten, patrology, vol. II, էջ 2—3: Պատմի փիլիսոփայության և դիալեկտիկայի մասին տես Ծախան Ռ. Պերպերյան, «Պատմություն իմաստասիրության, Ամթիլիս, 1977, էջ 132—133:

⁹ Պատմություն եկեղեցու, 1877, Վենետիկ, ղեկավարություն Ե և 2:

ու վարդապետությանը հաղորդելու աստվածաբանական բնույթ՝ գիտական հիմքով, և արտաքին, աշխարհիկ կրթությունն ու փիլիսոփայությունը ծառայեցնելու հավատքին: Կղեմեսի մատենագրական վաստակը, այս առումով տոգորված է եղել անտիկ, հույն փիլիսոփայության, գրականության և բնական գիտությունների տրված լայնքով:

Եթե Կղեմեսի կենսագրության մասին առհասարակ քիչ բան է ծանոթ, ապա նրա մատենագրական արժեքավոր վաստակը ատիժ է բնծայել հետակ պատկերացում կազմելու նրա մեծ ու բացառիկ անձնավորության, գիտնականության, հմտության մասին:

Կղեմեսը համարվում է քրիստոնեական գիտնականության ռահվիրան: Նրա մատենագրական ժառանգությունը ցույց է տալիս որ նա ունեցել է խորը հմտություն և հասկացողություն փիլիսոփայության, բանաստեղծության, հենարանության, դիցարանության, գրականության, մարդաբանության, բուսաբանության և արտաքին գիտությունների մասին:

Զարմանահրաշ ու լիակատար է եղել նրա հմտությունը քրիստոնեական գրականության, Աստվածաշնչի, ինչպես նաև ետ-առաքելական և հերետիկոսական գրականության մասին: Նա իր մատենագրական վաստակի մեջ Հին Կտակարանից 1500, իսկ Նոր Կտակարանից հմտորեն և տեղին 2000 մեջբերում է կատարում:

Կղեմեսը նշում է որ եկեղեցին չի կարող մարդկության հանդեպ իր պարտականությունը կատարել որպես ազգերի ուսուցիչ, առանց մրցակցելու հեթանոս փիլիսոփայական գաղափարախոսության հետ: Նրա հելլենիստական կրթությունը նրան հնարավորություն է բնձնել քրիստոնեական հավատքը վերածելու գիտական հիմքով մտածման մի կոտ սխառնի: Նա ապացուցել է որ հավատքն ու փիլիսոփայությունը, Ավետարանն ու աշխարհիկ կրթությունը թշնամիներ չեն, դրանք լրացնում են միմյանց:

Ըստ Կղեմեսի աշխարհիկ կրթությունը աղայինն է աստվածաբանության: Քրիստոնեությունը թագն ու պսակն է բոլոր ճշմարտությունների, ճշմարտությունների, որոնք հիմնվել են տարբեր փիլիսոփայական վարդապետությունների վրա:

Կղեմեսի մատենագրական վաստակի հետևյալ երեք աշխատությունները մի տրիլոգիա են կազմում և վստահելի վկայություններն են հեղինակի աստվածաբանա-

կան հասկացողությունների ու սխառնի: Այդ երեք աշխատություններն են.

1. Բան յորդորական առ Հելլենա:

Սույն աշխատության նպատակն է եղել հեթանոսներին և կոսապաշտներին բացատրել ու ապացուցել որ նրանց հեթանոսական հավատալիքները մոլո, անհասկանալի «խորհուրդներ» (սխառնիա) հիմարություններ են, սխալ ու վնասակար: Միակ ու ճշմարիտ կրոնը, դա քրիստոնեությունն է, հիմնված Բանին (Լոգոս) Մարդկության, աստվածային բարձրագույն Հայտնության և քարոզության վրա:

2. Դաստիարակ—paedagogus. Կղեմեսի

այս աշխատությունը ևս տրիլոգիա է, բաղկացած երեք գրքերից: Այն համարվում է անմիջական շարունակությունը նրա «Բան յորդորական առ Հելլենա» գործի: Հեղինակի նպատակն է եղել հեթանոսությունից քրիստոնյա դարձաներին դաստիարակել նոր կրոնի հավատքի ու քարոզականության մեջ: Բանը (Լոգոս) առաջին Ռուսցիչն է, Դաստիարակը նորադարձ քրիստոնյաներին, Որը ցույց է տվել իր լուսավոր վարդապետությամբ և փրկագործական կյանքով թե ինչպես պետք է ապրել քրիստոնեական օրինակելի կյանքով, վարք ու բարքով: Քրիստոնե է միակ «Ճանապարհ»-ը որը քրիստոնյային առաջնորդում է դեպի բարձրագույն իմաստություն: Կղեմեսը նշում է, որ Քրիստոսի «նպատակն է կատարելագործել մարդկային հոգին, ոչ դաստիարակել, նրան առաջնորդել դեպի առաքինի, և ոչ թե դեպի մտավորական կյանք»:

Կղեմեսը «մանկավարժությունը» սահմանում է որպես «երկխոսություն» (շմկրտված քրիստոնյա) ուսուցում: Իսկ որո՞նք են ըստ Ավետարանի «Որդիք Աստուծոյ» կոչվածները: Բոլոր նրանք որ փրկված են ու վերստին ծնված մկրտությամբ: «Մկրտվելով մենք լուսավորվում ենք՝ լուսավորվելով՝ դառնում՝ որդիներ, որդիներ դառնալով՝ կատարյալ ենք լինում և կատարյալ դառնալով՝ դառնում ենք անմահ»: Հիմնական սկզբունքը, որով Բանը դաստիարակում է իր որդիներին՝ գուրն է և սերը, և ոչ թե Հին Ռիտի երկյուղը:

Կղեմեսը իր սույն աշխատության մեջ սահմանում է նաև նորադարձ քրիստոնյայի ապրելու կերպի քարոջական կանոնը, թելադրում է նորադարձ քրիստոնյաներին խուսափել աշխարհիկ զվարճություններից, աղյասերող երաժշտությունից և պարկոյց, լինել չափավոր տոնելու, խմելու մեջ, հագնվել համեստ, ապրել չարքաշ, առօրյա կյանքի հարցերով, քարոջական սկզբունք-

ներով, ժուժկալ լինել ամուսնական կյանքում:

Սույն գիրքը գրվել է նորադարձ քրիստոնյաներին բացատրելու նոր կրոնի բարոյական օրենսգիրքը, քրիստոնեական օրինակելի կյանքով ապրելու պայմաններն ու հրահանգները:

Կղեմեսը իր սույն աշխատության մեջ ներկայացնում է նաև իր ժամանակի Ալեքսանդրիա քաղաքի հանապազօրյա ցույ ու շուալ կյանքի, անատոլիոյությունների, բաժողայական անկումների, գեղությունների, հասարակական մոլությունների նկարագրությունը: Թելադրում է որ այդ քաղաքում ապրող քրիստոնյան սակայն, պետք չէ իրեն հեռու պահի մշակույթի վերանորոգիչ, վերադաստիարակող բարիքներից, չորանա աշխարհը, «աշխարհի մեջ, բայց ոչ աշխարհից», և աղքատության ուխտ չկատարի: Նա թելադրում է նույնպես Ալեքսանդրիա քաղաքի մշակութային կյանքը առողջացնել, բարձրացնել, իմաստավորել ու վերանորոգել քրիստոնեական շնչով ու բարոյական, մարդասիրական գաղափարախոսությամբ:

Կղեմեսի սույն գիրքը ավարտվում է Բրիտանիան՝ որպես մարդկության և աշխարհի Փրկչին ուղղած գոհաբանական, փառաբանական մի երգով ու աղոթքով:

3. Ստորմատա, կամ կապերտներ. Կղեմեսի տրիլոգիայի վերջին մասն է սույն աշխատությունը, որը կոչվում է հունարեն Ստորմատա, կամ «վասն ճշմարիտ փիլիսոփայության պատմությունը յիշատակյաց գիտնականացն», կամ «կապերտներ»:

Ժամանակի ոգուն համապատասխան և օրվա փիլիսոփաներից ընդունված գրական մի նոր ժանր էր սույն գիրքը, որի մեջ քննության էին առնվել բազմապիսի հարցեր, առանց տրամաբանական ծրագրի ու կարգի: Հեղինակը մեկ հարցից անցնում է մի այլ հարցի, առանց սխառնատիկ մշակման ու խորացման, ինչպես գուցե գուցե թելերով հյուսված կապերտը: Այդ իմաստով է գիրքը կոչվում «կապերտներ»:

Սույն աշխատությունը բաղկանում է ութ մասերից: Գրքի նպատակն է եղել գլխավորապես զբաղվել աշխարհիկ ուսման, գիտության, հունական փիլիսոփայության հետ քրիստոնեական կրոնի ունեցած առնչություններով:

Կղեմեսը շեշտում է որ աստվածային նախախնամության տնօրինությամբ փիլիսոփայությունը Աստծուց շնորհվել է հույներից ինչպես օրենքը՝ հրեաներին: Փիլիսոփայությունը նույնպես օգտակար կարող է լինել քրիստոնյային, եթե նրա նպա-

տակն է գիտություն ձեռք բերելը հավատքի բովանդակության համար: Մյուս կողմից, փիլիսոփայությունը երբեք չի կարող աստվածային Հայտնության տեղը բռնել: Փիլիսոփայությունը կարող է միայն հող պատրաստել հավատքի ընդունման համար: Աստվածային հանի (Լոգոս) հայտնությունը բարձրագույն խորհուրդների ու ճշմարտությունների աղբյուրն է:

Աստուծո մասին գիտությունը ձեռք է բերվում միայն հավատքի միջոցով: Ուրեմն, հավատքն է հիմքը բոլոր գիտությունների: Աստվածային ճշմարտության սերմերը կարող են գտնվել նաև փիլիսոփայական տարբեր վարդապետությունների մեջ: Հույները Հին Կտակարանի մարգարեներից քաղում էին բազում մտածումներ և վարդապետություններ, օրինակ, Պլատոնը իր օրենքների մշակման մեջ ընդօրինակում էր Սոփեստ Մարգարեին:

Կղեմեսը թողել է այլ բազում մեկնողական, դավանաբանական, քարոզչական, նամակագրական աշխատություններ:

Եվսեբիոս Կեսարացին, իր «Պատմություն եկեղեցույ» աշխատության դպրութիւն 2-ը նվիրել է ամբողջությամբ Կղեմես Ալեքսանդրացու մատենագրական վաստակի քննությանն ու գնահատմանը¹⁰:

Կղեմես Հայրապետի մեզ հասած կամ կորած գրական արժեքավոր ժառանգության, նրա աստվածաբանական վաստակի, հանի (Լոգոս) վարդապետության, եկեղեցաբանության, վախճանաբանության, հաղորդության, մեղքի ու ապաշխարության, մայրության և կուսության մասին տես Quasten, նույնը, էջ 15—35, Encyclopedia Americana, vol. 7, էջ 49, Երվանդ վարդապետ Տեր-Մինասյանց, նույնը, էջ 141—144, պրոֆ. Մազարդա, նույնը, էջ 16—29:

Կղեմես Ալեքսանդրացի Հայրապետի մատենագրական վաստակից հայերեն թարգմանությամբ ոչինչ չի հասել մեզ մինչև այսօր:

ՄԵԾՆ ԴԻՈՆԵՍԻՈՍ ՀԱՅՐԱՊԵՏ

Ա.Լ.Ե.Ք.Ս.Ա.Ն.Դ.Բ.Ա.Ց.Ի

(190—267)

Գ. դարի Ալեքսանդրիայի Աթոռի նշանավոր և բազմադյուն հայրապետներից մեկն է Դիոնեսիոս Ալեքսանդրացին, որը 248—265 թվականներին եղել է Ալեքսանդրիա քաղաքի եպիսկոպոսն ու տեղի

¹⁰ Եվսեբիոս Կեսարացի, նույնը, դպրություն 2:

աստվածաբանական հռչակավոր դպրոցի ղեկավարը:

Իրոնեսիոսը Հնդհանուր եկեղեցու պատմության մեջ անցել է որպես «Մեծ Հայրապետ և պատրիարք Ալեքսանդրիայի»¹¹, առաքելական, քարոզչական, վարչական, «աշակուրջ և եռանդուն իր գործունեության համար»: Նա իր նամակներով միշտ կապ է պահպանել Եգիպտոսի և նրա սահմաններից դուրս Արևելքի և Արևմուտքի բոլոր եկեղեցիների հետ, անդրադարձել՝ ժամանակի եկեղեցական, աստվածաբանական կարևոր հարցերին:

Իրոնեսիոսը ծնվել է 190 թվականին Ալեքսանդրիայում, հեթանոսի, կրթված բնատաճիկում: Նա այնտեղ ստացել է հունական, փիլիսոփայական կրթություն: Այդ կրթությունն ու նրա ընթերցասեր քննադատությունը, նրա քաղաքային ընթերցումները, ու մանավանդ ճշմարտության որոնումը նրան առաջնորդել են, իր իսկ նամակների վկայությամբ, դեպի քրիստոնեական հավատքը, ինչպես այդ մասին վկայում է Եվսեբիոս Կեսարացին իր պատմության մեջ:

Իրոնեսիոսի քրիստոնյա դարձի վրա ուժեղ ազդեցություն են գործել մանավանդ Պոդոս առաքյալի դավանաբանական և հովվական թղթերի ընթերցումները:

Իրոնեսիոսը քրիստոնյա դառնալուց ու մկրտվելուց հետո աշակերտում է Ալեքսանդրիայում Որիգենեսին և նրա թեկադրությամբ 232 թվականին քահանա է ձեռնադրվում:

Դենոս կայսրի (250—253) հրատարակած հրովարտակը 250 թվականին առաջին պետական, ընդհանուր կարգադրություն էր հալածանք սկսելու քրիստոնեության դեմ: Ըստ այդ հրովարտակի կայսրության բոլոր քրիստոնյա հպատակները, պարտադիր կարգով, առանց հասակի և սեռի խտրության, մասնակցելու էին պետական աստվածների պաշտամունքներին և կատարվող հեթանոսական զոհադրություններին: Սուրբ Գրիգոր Նյուսացին վկայում է որ կայսրության մեջ ամեն տեղ խտրազույց պատիժների սպառնալիքով հրամայված էր հսկել կայսերական հրովարտակի գործադրության վրա: Հալածանքը ուղղված էր մանավանդ եպիսկոպոսների դեմ: Նրանցից ոմանք սիրով և համարձակությամբ ընդունում էին նահա-

տակության լուսապսակը: Իսկ Դիոնեսիոսը, Կարթագինի Կիպրանոս եպիսկոպոսը, Ս. Գրիգոր Սրանչեկագործը, քաղաքային, կարողացան ազատվել ստույգ վտանգից:

Դաժան հալածանքների ժամանակ քրիստոնյաներից շատերը ուրացան իրենց հավատքը: Հաջորդ տարիներին էր մեղմացավ հալածանքի մրրիկը, Արևելքի ու Արևմուտքի եկեղեցիների համար շատ մեծ ու կարևոր հարց դարձավ ուրացողներին «ապաշխարությամբ» կրկին անգամ եկեղեցու ծոցը ընդունելու և չընդունելու հարցը:

Այդ հարցով հանգամանորեն զբաղվում է նաև Ալեքսանդրիայի Դիոնեսիոս Հայրապետը: Ուրացողներին եկեղեցու գիրկը ընդունելու կամ չընդունելու հարցը «ըսկեզրունքային նշանակություն» ունեցող խնդիր էր եկեղեցու համար:

Այդ հարցը Գ. դարում հանդես եկող աղանդների աշխուժացման և եռանդուն գործունեության պատճառ էր դարձել:

Դիոնեսիոս Հայրապետը այդ հարցի առիթով 248 թվականին նամակ է գրում «այնուսիկ որ էին ի Հալաստան, որոց յայնժամ եպիսկոպոս էր Մեհրուդան», «Վասն ապաշխարութեան» նրա կարծիքը ևս ունենալու համար:

Այս մասին վկայում է Եվսեբիոս Կեսարացին իր «Պատմություն եկեղեցու» աշխատության մեջ¹²:

Հայ և Ալեքսանդրիայի եկեղեցիների այս առաջին հարաբերությունների մասին Եվսեբիոսի վերոհիշյալ վկայությունը շատ կարևոր մի փաստ է: Հայ եկեղեցին, հաջորդ դարերում ևս, և մինչև Ե դարի վերջերը, ի Քրիստոս եղբայրական հարաբերության մեջ է եղել Ալեքսանդրիայի եկեղեցու հետ:

Դիկոսի հալածանքների ժամանակ ձերբակալվում է նաև Դիոնեսիոսը: Բայց քրիստոնյա գյուղացիներն ազատում են նրան ու քաղցնում: Վալերիանոս կայսրի օրոք՝ 260 թ. նա կրկին արստրվում է, քայքալաբով ապստամբ է գտնում Լիբիայի անապատում վանականների մոտ:

Դիոնեսիոսը արտոքից հետո վերադառնում է կրկին իր Աթոռը, քայքալաբի Ալեքսանդրիայի Աթոռի ծոցում ծագած հակամարտությունները, քաղաքական պայքարները,

¹¹ Encyclopedia Americana, vol. VII էջ 59:

¹² Երվանդ վարդապետ Տեր-Մինասյան, նույնը, էջ 141:

¹³ Եվսեբիոս Կեսարացի, նույնը. Տես նաև Մադարիա արքեպ. Օրմանյան, Ազգապատմ. Ա. հատոր, մասն Ա. Բեյրութ, 1959, էջ 61—62:

համաճարակը և այլ դժվարություններ ըստիպում են նրան հեռանալ իր Աթոռից:

Դիոնեսիոսը մահանում է 267 թվականին իր բնական մահով, բայց հիվանդության պատճառով:

ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ՎԱՍՏԱԿԸ

Դիոնեսիոս Ալեքսանդրացին եկեղեցու մեծ հայրապետներից մեկն է հանդիսանում, իր եկեղեցական շատ փայլուն գործունեության, իր խիզախության, հաստատակամության, դժվարություններ հաղթահարելու իր վճռականության և անհողորդող կամքի համար:

Նրա անունը, եկեղեցական գործունեության հուշակն ու ազդեցությունը տարածվել էին Եգիպտոսից դուրս, Արևելքի ու Արևմուտքի բոլոր եկեղեցիներում:

Նա նույնպես Գ դարի մեծ մատենագիրներից մեկն է: Թողել է հարուստ մատենագրական փաստակ, որը արժեքավոր է եկեղեցու կյանքի համար, իր գործնական և վարդապետական նշանակությամբ:

Նրա մատենագրական փաստակի մեջ մեծ արժեք է ներկայացնում մանավանդ նրա ճամականին: Դիոնեսիոսը իր ճամականերով գործուն և եռանդագին մասնակցություն է բերել ժամանակի բոլոր եկեղեցական, դավանաբանական, ջատագոգովական և հակաճառական հարցերի մեջ, որպես մեծ աստվածաբան և հմուտ մատենագիր:

Դժբախտաբար, սակայն, նրա հարուստ մատենագրական ժառանգությունից մեզ հասնակտորներ են հասել, Եվսեբիոս Կեսարացու միջոցով: Եվսեբիոսը իր «Պատմություն եկեղեցու» աշխատության «Դրպրություն եթերոդոքս»-ը ամբողջությամբ նվիրել է Դիոնեսիոսի մատենագրական փաստակին:

Դիոնեսիոսի մատենագրական փաստակի մեջ առանձնապես նշվում են նրա ճաները՝ «Յաղագս բնութեան», «Ի վերայ խոստման», «Հերքումն և ջատագովություն» և ճամակաները:

Ալեքսանդրիայի հայրապետները մինչև Թ դարը սովորություն են ունեցել, ամեն տարի Զատնի տոնին, հովվական ճամականեր գրել բոլոր եկեղեցիներին, մեծ պահոց և Հարության տոնի առիթով: Դիոնեսիոս Ալեքսանդրացին նույնպես ճամականեր է հղել բոլոր եկեղեցիներին, որոնցում նա էլ քննության է առել նաև ժամանակի կարևոր եկեղեցական հարցերը, հոգուտ եկեղեցիների միության և համագործակցության:

ԴԻՈՆԵՍԻՈՍ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՑՈՒ ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ՎԱՍՏԱԿԻ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Քրիստոնեության երրորդ դարու մեջ ապրած է սուրբ Հայրապետը: Իր անունով ի մեր դարության գտնված ճանիցն ինչուան հիմա սկզբնագիրք երևցած չեն: Հայ թարգմանության ժամանակն ալ չենք կրնար որոշել՝ ոմանք ի հմտից՝ հինգերորդ դարու կվերագրեն» (Մատենադարան հայկական թարգմանությանց նախնյաց, դար Դ—ԺԳ, Վենետիկ, 1889, էջ 279—381):

Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան ձեռագրաց Մատենադարանի հետևյալ համարների ներքո հիշվում են Դիոնեսիոս Ալեքսանդրացու ճաները. այլ հայրապետների ճաների հետ. Զեռագրաց ցուցակ, Երևան, Ա հատոր, 1965:

871. Ժողովածու, 1680, Նոր-Ջուղա, գրիչ՝ Սիմեոն Ջուղայեցի, ճառք, էջ 429:

996. Ծառընտիր, 1442. Սերկևիլի գյուղ, գրիչ՝ Ոհաննես միայնակյաց. ճառք, էջ 455—456:

3782. Ծառընտիր, ԺԲ դար, գրիչ՝ Գրիգոր:

Զեռագրաց ցուցակ Բ հատոր, Երևան, 1970:

7441. Ծառընտիր, 1322, գրիչ՝ Վարդան, Արքախան քահանա, ճառք, էջ 533:

7489. Ծառընտիր, 1725—1729, Երուսաղեմ, Կ. Պոլիս, ճառք, էջ 543—545:

7729. Ծառընտիր (Մշոյ), 1200—1202, Ավագ վանք (Երզնկա), գրիչ՝ Վարդան քահանա, էջ 597—599:

Դիոնեսիոս Ալեքսանդրացու հայերենի թարգմանված ճաներից հայտնի են հետևյալները.

1. Ի հակաճառէն Պաղոսի Սամոստացոյ, «Գրեալ է թէ այնպէս սիւեաց Աստուած զաշխարհ զի գորդին իր Միածին առաքեաց: Քանզի եղև մեզ Աստուած Յիսուս Քրիստոս, այն որ ամենայնի է Աստուած և Տէր»:

264—265 թվականներին Անտիոքում գտնարվում է տեղական մի ժողով, որ քննվում և դատապարտվում է քաղաքի Պողոս Սամոստացի եպիսկոպոսի խոհրությունը: Ժողովում սահմանվում են «Կանոն Անտիոքոյ գլուխք ԻԵ (25)», «Յետ բազում ժամանակաց անցանելոյ դարձեալ բորբոքեցաւ աղանդն Արտեմուսայ, վասն ամենասուրբ տօնից այլափոխումն առնել և լաւելումն արտաքոյ կանոնեալ սուրբ ընթերցումոց և ի սուրբ առաքելոցն աւանդեցաւ եկեղեցոյ սրբոյ» (Կանոնագիրք հայոց, Ա. աշխատասիրությամբ

Վազգեն Հակոբյանի, Երևան, 1964, էջ 202—223 և 586—589):

Դիոնեսիոս Ալեքսանդրացին իր հիվանդության պատճառով չի կարողանում ներկա լինել Անտիոքի ժողովին և Պողոս Սամատացու դեմ մեղադրական մի նամակ գրում, դատապարտելով հերետիկոսի մոլորությունը:

Արտեմոնը ըստ ավանդության 7 տարի եղել է Հովհաննես Ավետարանիչի աշակերտը, Քրիստոսի Համբարձումից հետո, այնուհետև հեռացել է նրանից և կազմել է իր ամուսնը կողմ հերետիկոսական մի խմբի ընդեմ ամենատարբեր մոլորության. «Բաժանել զմի Քրիստոսն յերկուս ընդ թիմնս, յերկուս որդիս» (Արարատ ամսագիր, 1896, էջ 50):

2. Մեծի ուրբաթին սրբոյն Դիոնեսիոսի Ալեքսանդրացու Հայրապետի ճառ. «Կույան գՔրիստոս Հրեայքն, զի ինքն կամեցաւ: Զայս երանելին Երեմիաս յառաջագոյն ասաց թէ ունելով կալան զիս թշնամիք իմ որպէս ճնճողուկ»:

3. «Յարեաւ այսօր ի մեռելոց կենդանին յախտեանից Քրիստոս և տեսեալ կանանց զյարութիւն նորա ընթացեալ պատմելին առաքելոցն: Զայս Եւայի Մարգարէն յառաջագոյն ասաց:

4. Եհան զաշակերտսն մինչև ի Բեթանիա և ամբարձեալ զձեռս իր օրհնեաց զնոսա և ընդ օրհնելն վերացաւ յերկինս: Զայս կանխաւ գուշակեաց երանելին Դաւիթ թէ՛ համբարձաւ Աստուած օրհնութեամբ և Տէր մեր ձայնի փողոյ:

5. Նորին հատուած մի փոքր, չէ մարդ որ խաչեցաւ, այլ սուրբ Միածինն, Բանն և Որդին Հօր: Տես, զի զԲանն ասաց կախեալ չխաչէն և ոչ սուկ մարդ»:

Դիոնեսիոս Հայրապետի ճառերի այս հինգ հատվածները «հայերեն հին թարգմանությամբ և ի լատին նոր փոխադրությամբ հրատարակված են ի Փարիզ, 1883-ին (Մատենադարան, նույնը, էջ 379—381: Տես նաև «Կնիք հաւատոյ, ս. էջմիածին, 1914 հրատարակություն Կարապետ Էպիսկոպոսի (Տեր-Մկրտչյան), էջ XXXVII):

6. Ի գալուստն Փրկչին յերուսաղէմ. «Ի վերայ առանակի նստաւ Փրկիչն մեր Քրիստոս, և մտեալ Երուսաղէմ՝ դղրդեցաւ քաղաքն ամենայն»:

7. Ի Բանն, Հայր, եթէ հնար իցէ: Արդ, եկայք եղբարք իմ սիրելիք, տեսցուք ճշմարտութեամբ թէ վասն է՞ր Տէրն մեր Յիսուս Քրիստոս որ յաղագս ամենեցուն փրկութեան եկեալ, ընդունել զարշարանս և մեռանել. «Մատենադարան, նույնը, էջ 381):

«Կնիք հաւատոյ» ժողովածուում հրատարակվել է նաև երկու հատուկադր Դիոնեսիոս Ալեքսանդրացու ճառերից, «Երանելոյն Դիոնեսիոս / Էպիսկոպոսապետին՝ Գ. թղթոյն, որ առ Քուստոս Էպիսկոպոսապետ Հոռմայ, և նորին Դիոնիսի՝ ի լուծմանէ քանէն, որ առ Սամատացին Պաղոս. էջ 104—105):

Ալեքսանդրիայի Աթոռի հայրապետները վճռական ու առաջնորդող դեր կատարեցին առաջինը՝ Սուրբ Աթանաս Հայրապետ Ալեքսանդրացին Դիկիայի Տիեզերական, ժողովում 325 թվականին (տես այս մասին «Սուրբ Աթանաս Հայրապետ» (295—373), «Էջմիածին» ամսագիր, 1977, փետրվար, էջ 20—30) և Եփեսոսի Տիեզերական ժողովում Սուրբ Կյուրել Ալեքսանդրացին, 431 թվականին (տես այս մասին, «Սուրբ Կյուրել Հայրապետ» (375—444), «Էջմիածին» ամսագիր, 1977 մարտ, էջ 9—17, ապրիլ, էջ 34—39):

Ալեքսանդրիայի այս երկու հայրապետների օրով էլ շարունակվում են Ալեքսանդրիայի Աթոռի և Հայ Եկեղեցու հարաբերությունները, որոնց մեծագույն և անհերքելի ապացույցն են հանդիսանում նրանց մատենագրական հարուստ ժառանգության հայերեն թարգմանությունները (տես «Էջմիածին» ամսագիր, նույնը, փետրվար, էջ 27—30, մարտ-ապրիլ, նույնը, էջ 34—39):

Ալեքսանդրիայի և Հայ Եկեղեցիների հարաբերությունների մասին, մի այլ արժեքավոր վկայություն է հաղորդում Մովսես Խորենացին իր «Պատմություն Հայոց» աշխատության մեջ (Մ. Խորենացի «Պատմություն Հայոց», 1913, Թիֆլիս, էջ 344):

Ինչպես հայտնի է, 431 թվականի Եփեսոսի ժողովից հետո, երբ հայրենիք է վերադառնում մեր թարգմանիչ վարդապետների առաջին խումբը, Ս. Սահակ Պարթևն ու Ս. Մեսրոպ Մաշտոցը, աշակերտների երկրորդ խումբը ուղարկվում են Ալեքսանդրիա, «Ռուման աղագաւ», մանավանդ հունարեն, «պանծալի լեզուն սովորելու», և իսկական ճեմարանում կատարելագործելու համար իրենց ատվածաբանական, մեկնողական ուսումը:

Այդ թվականին Ալեքսանդրիան համարվում էր քրիստոնեական, ատվածաբանական մտքի և ուղղափառ միաբնակության ամրոցն ու սյունը:

Խորենացին պատմում է որ ինքն իր ուսումնակից ընկերների հետ, նախ հասնում են «հարավային կողմերը շրջագայելով Եդեսացոց քաղաքը, ...այնտեղից անցանք սուրբ տեղերին (Երուսաղեմ) երկրպագելու և կարճ ժամանակ պաղեստինացոց ուսմամբ պարապելու»:

Այնուհետև ապագա թարգմանիչ հայ վարդապետների խումբը հասնում է Ալեքսանդրիա: Խորենացին նախ նկարագրում է «որոշ մանրամասնություններով Եգիպտոսի բնությունը, Նեղոսը, և նրա բարիքները, Ալեքսանդրիա քաղաքի բնական դիրքն ու կլիման», ինչպես նաև քաղաքի մշակութային, կրոնական կյանքն ու այնտեղ «տեղի ունեցած արմատական փոփոխությունները... Կործանվել և կործանվում էր եգիպտա-բյուզանդական հեթանոսական մշակույթը, որի տեղը թունել էր քրիստոնեական եկեղեցական աստվածաբանությունը... Մարկոսը ավետարանական քարոզչությամբ... չկան վիշապի ցեղից դյուցազունների գերեզմաններ, այլ վայելչանում են սրբերի վկայարանները... ոչ էլ Տուրի ամսի քսանևհինգին խեղաթուրված տուն է կատարվում... այլ նույն Տուրի ամսի տասն և մեկին աստվածահայտնության տուն է կատարվում... գովում են հաղթող նահատակներին... Այնև չեն զոհում Սառայիս չար դևին, այլ Քրիստոսի արյունը պատարագ են մատուցում» (Խորենացի, նույնը, էջ 345—346, տես նաև Մ. Մկրյան, Մովսես Խորենացի, Երևան, 1970, էջ 8—9):

Մեր թարգմանիչ վարդապետները իրենց ուսումնառության տարիները անցկացնում են հեթանոսական կրոնի, անտիկ փիլիսոփայության նահանջի և եկեղեցու հաղթանակի շրջանում. «Ժրանային, տքնէին, աշխատէին ուսանելով..., հարցասէրք էին, քանասէրք, ընթերցասէրք» (Հայկական հին դպրոթեան պատմություն, Դ—ԺԳ դար, Վենետիկ, 1886, էջ 265):

Իրենց ուսումը կատարելագործելուց հետո մեր վարդապետները Ալեքսանդրիայից անցնում են Հոմ, Կ. Պոլիս և վերադառնում հայրենիք:

Հայ և Ալեքսանդրիայի եկեղեցիների հարաբերությունները շարունակվում են Ե դարի մինչև վերջին երեսնամյակը: Դրա պայծառ ապացույցը Ալեքսանդրիայի Հայրապետ Տիմոթեոս Էլուրոսի (Կուզ) նշանավոր աշխատության՝ «Հակաճառություն

առ սահմանեալսն ի ժողովոյն Քաղկեդոնի», հայերեն թարգմանությունն է Դվինում կատարված Հովհան Մանդակունի կաթողիկոսի հսկողությամբ, 480—485 թվականներին:

Սույն նշանավոր աշխատությունը բաղկանում է երկու մասից: Ա մասը գրվել է լատիներեն, և ամբողջությամբ կորած է համարվում, իսկ երկրորդ մասը գրվել է հունարեն և միայն հայերեն թարգմանությամբ է ծանոթ ընդհանուր եկեղեցու մատենագրության մեջ:

Տիմոթեոս Կուզի «Հակաճառություն» հայերեն թարգմանությունը հրատարակել են Էջմիածնի տպարանից Մայր Աթոռի միաբաններ Կարապետ Ծ. վարդապետ (Տեր-Մկրտչյան) և Երվանդ վարդապետ (Տեր-Մինասյան) 1908 թվականին, (Տիմոթեոս եպիսկոպոսապետի Աղեքսանդրոսայ «Հակաճառություն առ սահմանեալսն ի ժողովոյն Քաղկեդոնի»):

Գրքի հրատարակիչները իրենց «Յանաջաբան»-ում նշում են, որ Տիմոթեոս Կուզի «Հակաճառություն»-ը «Հայոց Եկեղեցու դավանաբանական գրականության մեջ դարագլուխ է կազմել և առաջնորդ ու օրինակ հանդիսացել՝ Հայ դավանաբանների համար իբրև զինարան Քաղկեդոնի վարդապետության դեմ կռվելու համար: Այդ է պատճառը որ Տիմոթեոսի Հակաճառությունը այնքան վաղ թարգմանվել է հայերեն: (Նույնը, «Յանաջաբան» էջ VI, և XXI: Այդ մասին տես նաև «Ժողակաթ» Ս. Էջմիածնի, հայագիտական ժողովածու, գիրք առաջին, 1913, Հրաչյա Աճառյան «Տիմոթեոս Կուզ և Ս. Գրքի նորաբեր թարգմանությունը, էջ 1—22. Գալուստ Տեր-Մկրտչյան, «Հայ մատենագրության հնագույն թվականները» նույնը, էջ 154—163. Մ. Աբեղյան «Հայոց հին գրականության պատմություն, գիրք առաջին, Երևան, 1944, էջ 613—618):

Տիմոթեոս Կուզի «Հակաճառություն» հայերեն թարգմանությամբ էլ փակվում է Ալեքսանդրիայի և Հայ Եկեղեցիների հարաբերությունների պատմության էջը:



4. ԲԱՄՊՈՒՔՏԱՆ

ՀԱԿՈՐ ՊԱՏՐԻԱՐԷ ՆԱԼՅԱՆ (1706—1764)

Ծննդյան 275-ամյակին առթիվ

Ներկա տարվույս մեջ կրանա ծննդյան 275-ամյակը ԺԸ դարու հայ եկեղեցական մատենագրության մեծագույն դեմքին՝ խորիմաստ ու քաղմահմուտ աստվածաբան, քանաստեղծ ու աշխարհագիր, երջանկահիշատակ **Հակոբ Պատրիարք Նալյանի**։

Մեր այս հոդվածով պիտի ջանանք ներկայացնել իր քաղմաքեղուն կյանքին գլխավոր անցքերը՝ և իր տպագրյալ ու անտիպ գործերը, օգտվելով մեր կողմն պատրաստության մեջ եղող, ըստ քաղականի ընդարձակ մեծագրությունն մը։

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆԸ

Հակոբ Պատրիարք Նալյան ծնած է Ակնա կամ Տիվրիկի Ջիմատա գյուղաքաղաքը։ Ըստ Սարգիս դպիր Սարրաֆ-Հովհաննեսյանի (1730—1805), վախճանած է 63 տարեկանին, հետևաբար ծնած է 1701-ին¹։ Իսկ Մաշտոցյան Մատենադարանի թիվ 4575 ձեռագրին համեմատ (թղ. 12 ք), վախճանած է 58 տարեկանին, հետևաբար ըստ սույն աղբյուրին ալ ծնած է 1706-ին։

Երկրորդ աղբյուրը ավելի վավերական կթվի մեզ, նախ սա պատճառով որ, անունը անձանոթ հեղինակը իր աշակերտը եղած է։ Հետևաբար Սարգիս Դպրեն շատ ավելի լավ պետք է որ ճանչցած ըլլա զինքը։ Երկրորդ՝ եթե 1701-ին ծնած ըլլար, 27 տարեկանին վարդապետական աստիճան

ստացած պիտի ուլար, ինչ որ նվազ հավանական է Նալյանի նման քաջատիկ իմացականության տեր եկեղեցականի մը համար։

Նալյանի հայրը եղած է Մահտեսի Պողոս Նալոյի, իսկ մայրը՝ Մահտեսի Թամամ։ Ծնողքը մեռած են նախ քան 1745 թվականը։ Որովհետև սույն թվին տպված «Մեկնութիւն Նարեկի» գրքին հիշատակարանին մեջ հանգուցյալ կհիշվին։ Ունեցած է Տիրուհի անունով քույր մը, որ նույնպէս մահտեսի եղած է։ Նույն աղբյուրին մեջ Նալյան զայն «մայրախնամ» կանվանե, ինչ որ կհայտնէ թե՛ մայրը կանոխեն կորսնցուցած է։ Ունեցած է նաև անունը անձանոթ եղբայրներ, որոնցմէ մին իր վախճանած ատեն դեռ ողջ էր։ Որովհետև Մաշտոցյան Մատենադարանի թիվ 4575 ձեռագրին մեջ (թղ. 12 ք), հետ մահու իր եղբոր և քրոջ տասը քսակի չափ ստացվածք թողած ըլլալը նշված է։

Ըստ Հարություն Մամբրյանի (1860—1926), Նալյան մինչև չորեքտասնամյա հասակը իր ծննդավայրը մնացած՝ և այնուհետև ուսույնանկի մը հովանավորությամբ Սեբաստիոն ճամբով Պոլիս եկած է²։ Քաղաքս հասնելէն ետք ընդունված է երանաշնորհ Հովհաննէս Կոլոտ Պատրիարքի (1678—1741) կողմն Սկյուտարի մեջ քաղված Դպրատունը, ուր իր գլխավոր ուսու-

¹ «Վիպագրություն Կոստանդնուպոլիս մայրաքաղաքին», Երուսաղեմ, 1967, էջ՝ 40ք։

² «Ատվերք հին դեմքերու», Պոլիս, 1907—1908, էջ՝ 19։

ցիչը եղած է Սեբաստացի Գասպար Դպիր (+1751):

Նալյան Պատրիարքի արեղա ձեռնադրության թվականը անձանոթ կմնա: Սակայն մտերմին և փոխանորդին՝ Հարություն արք. Պալատեցիի (+1752) նման, 1726-ին և կամ 1727-ին ձեռնադրված ըստ կրոնական եմթադրել: Իսկ վարդապետական աստիճանը ստացած է 1728-ին, ըստ կնիքին վրաի թվականին և այլ աղբյուրներու: Նույն կամ հաջորդ տարին ալ, Կարապետ կաթողիկոսի (1661—1729) օրով, էջմիածնի մեջ, Աղեքսանդր արք.ի (այս կաթողիկոս, +1755) խարտավիականությամբ եպիսկոպոս ձեռնադրված է, ըստ «Մեկնություն Նարեկի» հատորին հիշատակարանին:

1731-ին, երբ Սարգիս վրդ. Սարաֆյան (1699—1773) իբր առաջնորդ Կեսարիա կմեկնի, ի շարս այլոց իրեն կողեկցի նաև Նալյան՝ և մի քանի ամիս ետք Պոլիս կվերադառնա³:

1732-ին Երուսաղեմ գացած և Գրիգոր Շոթայակիր Պատրիարքի սիրելի դարձած է՝ Աղավնունի եպսկ. ալ 1733-ին եղբայրներուն հետ Երուսաղեմ երթալը և հոն հիշատակներ թողած ըստ կարճագրքի⁴:

1734 տարվո մարտ ամսուն, Հովհաննես, Պողոս և Լազար վարդապետներուն հետ միասին, Կոլոտ Պատրիարքի կողմն ղրկված է, Հաննա արք.ի (1680—1733) մահվան Շոթայակիր Պատրիարքի պատճառած վիշտը ամոքելու համար: Այս առթիվ անկե ստացած է ծայրագույն վարդապետական աստիճանը և «Աստուածաբան» կոչումը, և նշանակված է նաև միաբան և իրեն հանձնված է՝ Ս. Սթողին Պոլսո գործերը⁵: Ց հոկտ. 1734-են առաջ Պոլիս վերադարձած է:

Ըստ Հ. Մ. Չամչյանի (1738—1823), 1735-ին Մովսես վրդ. Ծիրինյանի մահվնեն ետք, Գաղատիո առաջնորդ ընտրված է: Սակայն Կոլոտ Պատրիարք զինքը իր մոտ պահելով, իբր անոր փոխանորդը, Գաղատիո հայերու կողմն ընտրված, Երուսաղե-

մի միաբան՝ Գաղատացի Պետրոս վրդ. Պահատությանը հոն ղրկած է՝

6 հունվար 1736-ին դարձյալ Երուսաղեմ ժամանած՝ և 15 հունվարին Ս. Կարապետի տոնին օրը Երուսաղեմն մեկնած է, պաշտոնական թուղթեր միասին տանելով: Նախ հասած է Աքքա և անկե ալ Պոլիս գալու համար կիպրոս մեկնած է⁶:

1736 տարվո հուլիս ամսուն, Գր. Շոթայակիր Պատրիարք Պոլիս եկած ատեն, դիմավորելու նպատակով Կոլոտ Պատրիարքի կողմն Գլխաբան ղրկված է Հարություն, Սահակ և Պալատեցի Հակոբ վարդապետներու հետ⁷:

1737-ին Կոլոտ Պատրիարքի կողմն Կեսարիո Ս. Կարապետ վանքը ղրկված է ըստուգելու համար թե՛ Ս. Հովհաննես Մկրտչի աճյունները իրոք հոն կգտնվի՞ն թե ոչ: Նալյան տեղվույն վրա հետազոտություններ կատարած միջոցին, երևան կհանեն հին կնիք մը, որ այս պարագան կհաստատեն: Կնիք մըն ալ ինք կորոշմե և դրան վրա գետեղել կու տա վիմագիր անթվակիր արձանագրություն մը, որ ներկայիս կգտնվի Մայր եկեղեցվո քակր:

Գր. Շոթայակիր Պատրիարք, 25 օգոստ. 1740-ին քաղաքես մեկնելե առաջ, Կոլոտ Պատրիարքի հավանությամբ Նալյանը Երուսաղեմի Պատրիարքության փոխանորդ կկարգեն:

Հովհաննես Կոլոտ Պատրիարք 12 փետր. 1741-ին վախճանելե ետք, ըստ վերջնույս կտակին, իրեն կհաջորդեն Նալյանը: Պատմական աղբյուրները համաձայն չեն թվականի մասին: Սակայն պետական հանդիսության 15 փետրվարին կատարված ըլլալը ընդունելի է:

Առաջին պատրիարքությունը կտևե մինչև 26 մարտի 1749, Զատկվա օրը, երբ Երուսաղեմի միաբան Պրոխորոն վրդ. Սիլիստրեցի, Նալյանի դեմ դառնացած իշխաններու, ամիռաներու դավադրությամբ և զինվորականներու պաշտպանությամբ, իբր պատրիարք Մայր եկեղեցի կառաջնորդվի: Ասոր վրա Նալյան կստիպվի եկեղեցիեն հեռանալ և արքունի ժամագործապետ Խոնա Յուսուֆի (+1750) տունը ապաստանի⁸: Այնուհետև իբր առաջնորդ Պրոսպ կղրկվի: Սակայն ըստ Տերոյեանցի (1801—1888), 1741—1751 թվականներուն, Երու-

³ Հ. Գր. Տ. վրդ. Գալեմքարյան, «Կենսագրություն Սարգիս արք.ի Սարաֆյան», Վիեննա, 1908, էջ՝ 19:

⁴ Հր. Ասատուր, «Կ. Պոլսո հայերը և իրենց պատրիարքները», Պոլիս, 1901, էջ՝ 138:

⁵ «Միաբանք և այցելութ Հայ Երուսաղեմի», Երուսաղեմ, 1929, էջ՝ 828:

⁶ Տ. Մավադանյան, «Պատմություն Երուսաղեմի», Երուսաղեմ, 1931, հտ, Բ, էջ՝ 713:

⁷ «Պատմություն Հայոց», Վենետիկ, 1786, հտ. Գ, էջ՝ 813:

⁸ «Սիոն», 1972, թիվ. 11—12, էջ՝ 474 և 476:

⁹ «Սիոն», 1886, էջ՝ 125բ:

¹⁰ Հ. Մ. Չամչյան, Աջ. աշխ., էջ՝ 862—863: Նաև «Ազգապատում», գլ. 2029:

սաղեմի նվիրակ Գաբրիել եպսկ. տեղվույն առաջնորդը եղած է¹¹:

Շղթայակրի մահվանը հաջ. 13 ապրիլ 1749-ին Երուսաղեմի պատրիարք կրնտրվի: Պոլսեն դեպի Երուսաղեմ կանկնի հոկտեմբերի վերջերը և կամ նոյեմբերի սկիզբները: Նախ կհասնի Իզմիր, ուր կմնա շուրջ երեք ամիս: Այնուհետև Հոպպե կծամանե և անկե ալ՝ Երուսաղեմ:

1752-ին Երուսաղեմ կհրավիրե մտերիմ բարեկամը եղող՝ արքունի վաճառապետ Յաղուպ Աղա Հովհաննեսյանը (+1752): Իրեն փառավոր ընդունելություն կկատարե: Հետո ալլագզիներու բռնություններեն զանգատելով, իրեն կխնդրե որպեսզի զինքը կրկին Պոլստ պատրիարք կարգե: Ան ալ Երուսաղեմեն մեկնած ատեն, զինքը միասին Պոլիս կբերե՝ և Ղափանցի Գևորգ Պատրիարքը (+1756) հրաժարեցնելով, Պոլստ Պատրիարքական Աթոռը կրազմեցնե: Ըստ Հր. Ասատուրի (1862—1928), արքունական վավերացման պաշտոնական հանդիսությունը տեղի ունեցած է 16 մայիս 1752-ին¹²: Այս թվականը քիչ մը կասկածելի կթվի, որովհետև Մխիթարյան Հ. Զաքարիա վրդ. ի 1 հուլիս 1752 թվակիր նամակեն, այդ միջոցին Յաղուպ Աղայի հետ, Երուսաղեմեն դեռ նոր վերադարձած ըլլալը հայտնի կդառնա¹³:

1763-ին Նալյան Պատրիարքի առողջական վիճակը կսկսի վատթարանալ: Ըստ Հ. Իգնատիոս վրդ. Խաչատուրյանի, Պոլսեն Մեղգոնյան Աբրահմոր ուղղյալ 18 մայիս 1757 թվակիր նամակին, հիվանդությունը թոքախտ եղած է¹⁴: Կազդուրվելու նպատակով կփոխադրվի Սկյուտարի Երուսաղեմատունը: Վերջին պատարագը մեծ դժվարությամբ Մայր եկեղեցվո մեջ կկատարե 11 ապրիլ 1764-ին: Հաջորդ ամսույն 13-ին, Մայր եկեղեցվո մեջ զոմարված հանդիսավոր ժողովի մը ընթացքին, Պատրիարքական Աթոռը պաշտոնապես կփոխանցե Գրիգորի վրդ. Պասմաճյանի (1715—1791): Կվախճանի 19 հուլիս 1764-ին Գոմգարուի Երուսաղեմատունը: Հաջորդ օրը, Մայր եկեղեցվո մեջ, Պասմաճյան Պատրիարքի նախագահությամբ և 12 եպիսկոպոսներու մասնակցությամբ, մեծահանդես կերպով կկատարվի հուղարկավորությունը: Անյունները կամփոփվին Բանկալթիի հայոց երեքնի գերեզմանատունը: Օծումը կկատարե

Հարություն եպսկ. Բասենցի (1696—1796), իսկ դամբանականը կխոսի Սարգիս եպսկ. Սարաֆյան: 1940-ին, հիշյալ գերեզմանատան ապստեփականացման ատեն, իր մեծազանգված տապանաքարը կփոխադրվի Օիշի և կզետեղվի եկեղեցականաց թաղը:

ԳՈՐԾԵՐԸ

Հակոբ Պատրիարք Նալյան թողած է 9 տպագրված և 15 անտիպ երկեր, որոնք կարուացույն իր աստվածաբանական, կրոնագիտական, համայնագիտական և լեզվական խոր հմտությունը: Նախ ատորև կենդանացնենք տպագրվածները:

1. «Գիրք կոչեցեալ վեմ հաւատոյ», Պոլիս, 1733, տպ. Աստվածատուր Դպիր, 660 էջ:

2. «Գիրք կոչեցեալ քրիստոնէական ուսանելի և կամ քրիստոնէից վարժիչ», Պոլիս, 1737, տպ. Աստվածատուր Դպիր, 429 էջ: Բ. տիպ. Պոլիս, 1747, 429 էջ, Գ. տիպ. Պոլիս 1806, 434 էջ:

3. «Գիրք մեկնութեան աղօթից Սրբոյն Գրիգորի Նարեկացոյ», Պոլիս, 1745—1746, տպ. Սեբաստացի Տիրացո Գաբրիել Բարսեղյան, 1136 էջ:

4. «Գրքուկ կոչեցեալ հոգեւան երկուց ճառից Սրբոյն Յովնանու Ոսկերեւանին լանդրիանդեալ գրքոյ երրորդ և չորրորդ ճառիցն ոտանատրեալ», Պոլիս, 1746, տպ. Հովհաննես Սարկավազ «Զնչին Յովաննէս», 76 էջ:

Բ. տիպ. Նոր Նախիջևան, 1794, տպ. Հ. Արդուրյանց, 72 էջ:

5. «Գրքուկ կոչեցեալ ճրագ ճշմարտութեան», Պոլիս, 1756, տպ. Հովհաննես Աստվածատուրյան, 368 էջ:

6. «Գիրք կոչեցեալ զեն հոգևոր», Պոլիս, 1757, տպ. Հովհաննես Աստվածատուրյան, 192+424: 616 էջ:

ԾԱՆՈԹ. Բ և Գ մասերը հայատառ թուրքերեն է:

Բ. տիպ. Պոլիս, 1787, տպ. Հովհաննես և Պողոս Արապյան, 192+424: 616 էջ:

Գ. տիպ. Պոլիս, 1820, տպ. Պողոս Արապյան, 312 էջ:

Դ. տիպ. Պոլիս, 1844, տպ. Պողոս Արապյան, 4+373: 377 էջ:

7. «Գիրք կոչեցեալ զանձաբան ծանուցմանց», Պոլիս, 1758, տպ. Հովհաննես Աստվածատուրյան, 8+504+336: 848 էջ:

8. «Գիրք աղօթից ամենայն անձանց հարկաւոր», Պոլիս, 1760, տպ. Հովհաննես Աստվածատուրյան, 192 էջ:

9. «Տարակ զոմարութենէ կենցաղոյս, ոտանատրեալ ի հոգեկոյն Յակօբ Աստուա-

¹¹ «Երևակ», 1859, թիվ՝ 68, էջ՝ 231—232:

¹² Նշ. աշխ. էջ՝ 141:

¹³ Հ. Ղ. վրդ. Տաթև, «Մայր Դիվան Մխիթարյանց Վեներկո», Վեներկոյ, 1930, էջ՝ 148:

¹⁴ Անդ, էջ՝ 322:

ծաքան պատրիարք Կոստանդնուպոլսոյ, և այլն», Պոլիս, 1805, տպ. Մայր Դպրատուն, 48 էջ:

ԾԱՆՈԹ. Ըստ Հր. Ասատուրի, Նալբանի վերաբերյալ մասը 10 էջ կորսվել և գիրքը Կաղզվանցի Պողոս քահանայի կողմէ հրատարակված է:

Իսկ անտիպ աշխատություններն ալ այբուբենական կարգով հետևյալներն են:

1. «Ասացումք փիլիսոփայից», ձեռագիր թիվ 3318 և 6592 Մաշտոցյան Մատենադարանի:

2. «Աստուածաբանական կրթութիւն», հնագույնները Մաշտոցյան Մատենադարանի թիվ 3764 և 6595 ձեռագիրներն են, որոնք կկրեն 1754 թվականը և հաջորդաբար կբաղկան 412 և 613 թերթեր:

3. «Գիրք եօթն խորհրդոց Եկեղեցւոյ», ըստ Նոր Զուղայի թիվ 481 և 489 ձեռագիրներուն, սույն աշխատությունը ավարտած է 10 հունիս 1754-ին: Թիվ 489 ձեռագիրը կկրէ «Գիրք որ կոչի Կրթութիւն Աստուածաբանական զխորհրդոցն Եկեղեցւոյ Սրբոյ» անունը, որմէ հայտնի կդառնա թե նախորդին հետ նույնն է: Որովհետև նույն օրը երկու տարբեր գործ ավարտած ըլլալը ընդունելի չէ:

4. «Համաբարբառ Նաբեկի», այս աշխատասիրության միակ օրինակը, Ղալաթի Ազգային Մատենադարանի թիվ 28 անթվակիր օրինակն է, որ կբաղկանա 234 էջեր:

5. «Մեկնութիւն բարոյական փիլիսոփայութեան», այս երկասիրության հինգ օրինակն ալ կգտնվի Մաշտոցյան Մատենադարանը «թիվ» 1014, 1015, 1016, 4863 և 9782»:

6. «Մեկնութիւն Հայր Մերի», սույն աշխատությունը, Մաշտոցյան Մատենադարանի թիվ 8128 ծողովածուին վերջին մասը կկազմէ:

7. «Մեկնութիւն Յեսուայ որդւոյ Սիրաքայ» այս երկին 1764 թվականը կրող հնագույն օրինակը, Երուսաղեմի թիվ 106 ձեռագիրն է: Սույն գործը «Մեկնութիւն բարոյական փիլիսոփայութեան Յեսուայ որդւոյ

Սիրաքայ» և «Էկլեսիաստիկոս» անուններով ալ նշանակված է: Հետևաբար թիվ 6 աշխատության հետ նույնը պիտի ըլլա:

8. «Նամականի», այս հատորին երկու օրինակները մեզ ծանոթ են: Առաջինը Երուսաղեմի թիվ 1002՝ իսկ երկրորդն ալ Սեբաստիո Ս. Նշան վանքի թիվ 225 ձեռագիրն է:

9. «Ներքող հրեշտակաց», 16 էջէ բաղկացած սույն տաղաչափյալ գործին միակ օրինակը Մաշտոցյան Մատենադարանի թիվ 9904 ձեռագիրն է:

10. «Ողբ կամ կտակ Ասագ Ռոբարթոս», կամ «Կտակ չարչարանաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի», մոտավորապէս 30—40 էջերէ բաղկացած այս աշխատասիրութեան, բազմաթիվ օրինակներ գոյություն ունի զանազան մատենադարաններուն մէջ:

11. «Փոքր քարոզգիրք», Կյուլեսերյանի կողմէ կարգ մը համոզիչ փաստերով Նալբանի վերագրված այս հատորին միակ օրինակը, Ղալաթի Ազգ. Մատենադարանի թիվ 54 ձեռագիրն է, որ կբաղկանա 80 էջեր:

12. «Քարոզգիրք Կիրակեից», Նալբանի սույն գործը առավելագույն չափով ընդօրինակվածն է: Միայն Երուսաղեմի մէջ նվազագույն 30 օրինակներ կան: Ծարարված է 1755—1758 թվականներու միջև: Ղալաթի օրինակը կբաղկանա 856 էջեր:


13. «Քարոզգիրք արտաքոյ Կիրակեից», սույն գործեն ալ երեք հատոր մեզ ծանոթ է: Առաջինը Ղալաթի Ազգ. Մատենադարանի թիվ 37՝ երկրորդը Երուսաղեմի թիվ 1747 Ա՝ և երրորդն ալ Անկյուրիո թիվ 15 օրինակն է:

14. «Հաւաքումն թարգմանօրէն ի միհաննումայէն», սույն թարգմանած գործին միակ օրինակն ալ, Ղալաթի Ազգ. Մատենադարանի թիվ 60 ձեռագիրն է:

15. «Հաւաքումնք պիտոյական իրաց», այս անծանոթ աշխատությունը միմիայն Մաշտոցյան Մատենադարանի թիվ 4575 ձեռագրին մէջ հիշված է (թղ. 11 ք):

Ստանապոլ, 24 մարտի 1981





ՍՈՒՐԲ ԾՈՂԱԿԱԹԻ ԿԱՄ՝ ՄԱՐԻԱՆԵ ԿՈՒՅՍԻ ՎԱՆՔԸ

Պատմական Վաղարշապատի հնագույն եկեղեցիներից մեկն է մահ Ծողակաթի կամ Սուրբ Մարիանի վանքը:

Սույն վանքը գտնվում է Էջմիածին քաղաքի կենտրոնական մայրուղու աջ կողմում, պատմական Հռիփսիմն տաճարից ոչ հեռու: Վանքը իր ճարտարապետական պարզությամբ գրավում է այցելուի ուշադրությունը: Ըստ հայր Ղևոնդ Ալիշանի այսպես է որոշվում այս երկու վանքերի հետափոխությունը՝ ... «Իբրև երկու քարքնկեցի ի բացեալ յարեւելից կուտ վանաց մեմաւոր կուսին՝ կայ հռչակաւոր վանքն Հռիփսիմեալ»:

Վանքը կառուցվել է, ըստ Ագաթանգեղոսի վկայության, Հռիփսիմյաց կույսերից մեկի՝ Մարիանե կույսի մահաբանության վայրում: Մայր Աթոռի միաբան և պատմաբան Հովհաննես Խախկուպոս Ծախաթունյանցը այդ մասին գրում է ... «Մարիանե անուն լինել սրբոյ կուսին թէպէտ չունիմք տեղեկութիւն ինչ ի գրոց, զի տկար այն է հիւանդ և եք գրեն հեղինակք պատմութեանց, այլ աւանդութիւն բնակչաց կողմանց հասեալ առ մեզ՝ ստուգել լինել նոյն, որպէս և անուն միոյն ի սրբութեանց՝ որ ի մէջ վերի այգի կոչեցելոյն մահատակեալ կոչի (թումիան) և այժմ»...

Այս վկայարանն էլ, ինչպես Ս. Հռիփսիմի և Ս. Գալանի վկայարանները, քակոքնական շրջանում եղել են «կարի ցածր և մթին շինութեամբ» Ս. Գրիգոր Լուսավորչի և Տրդատ թագավորի կողմից:

Պատմական աղբյուրները քիչ բան են հաղորդում մեզ, վանքի շինության մասին, բացի Ագաթանգեղոսի մի քանի տողերից: Այս մասին որոշ տեղեկություններ կան

մահ, բացի Ագաթանգեղոսից, Ծախաթունյանցի, Հայսմափորքի մեջ, ինչպես մահ հայր Ղևոնդ Ալիշանի «Այրաճատ»-ում:

... «Մի ի նոցանէ, զոր աւանդութիւնն Մարիանէ կոչէ, տկար գոյով և ոչ կարելով հետեւել նոցա, եկաց մնաց և մահատակեցաւ ի սմին տեղոջ. ի ներքո ի հնձանին, որ էին վանք նոցա»...

Այստեղ անհրաժեշտ է հիշատակել մահ «հիվանդ» կամ «տկար» կույսի վերջին աղոթքը մահաբանությունից առաջ հնձանի մեջ. ըստ Ագաթանգեղոսի՝

«Գոհ եմ Քեզանից քարերաւ Տեր, որով հետեւ ինձ ևս չգրկեցիր, ևս հիվանդ էի, չկարողացա գնալ իմ ընկերների հետևից և հասնել նրանց»:

Հետագայում այս պատճառով էլ վկայարանը կոչվել է հիվանդ կույսի եկեղեցի ըստ Ագաթանգեղոսի:

Ս. Գրիգոր Լուսավորչի հրաշալի տեսիլքից հետո, որի ժամանակ երկնքից, ճաճանչափորված լուսեղեն փայլատակությամբ չորս սյունների ձևով, լույսը իջել էր կույսերի մահաբանության վայրերում, Լուսավորիչը կանգնեցնել է վկայարաններ, որոնցից մեկն էլ «Տաճար ի հիւսիսոյ կողմանէ քաղաքին»... Ավելի ուշ աղոթքի այս տունը կոչվեց մահ ԾՈՂԱԿԱԹ՝ կապված Ս. Գրիգոր Լուսավորչի պատմական տեսիլքի հետ:

«Քանզի ի մմա շող աստուածեղէն ի Հօրէ լուսոյ ծագեաց»:

Սուրբ Ծողակաթ եկեղեցու պատմությունը այսպես սկսվում է Դ դարից: Ավելի ուշ այդ վկայարանի տեղում կանգնեցվում է մի քարակերտ մատուռ-եկեղեցի (603)՝ հետևյալ արձանագրությամբ. «Շինեցաւ հնձանեաց մատուռս ի թուին ԶԺԳ»:

1694 թվականին, Նախապետ Եղեսացի կաթողիկոսի օրով, Աղամալ անունով մի հարուստ իշխանի բարերարությամբ, կառուցվում է մի հույակապ ճարտարապետական ընդունակ մաքրությամբ եկեղեցի, «հնձանեաց» մատուռից ոչ հեռու: Վերջի-

Ալբերդիոսի, Ագաթանգեղոսի, Աղեքսանդրոսի և սրանց փոքր եղբոր Խարիսիմոսի, այլև դատրերի՝ Նույնգարային, Ասանեթի և Նանակույի հոգիները: Ովքեր մեզ բարության կհիշեն Տիրոջ առաջ թող արժանի լինեն Նրա տեսության:



Ս. Ծողակաթ եկեղեցու ընդհանուր տեսքը

նիս ավերակները մինչև օրս էլ պահպանվել են:

Սուրբ Ծողակաթ եկեղեցին ունի երկու դուռ՝ արևմտյան և հարավային կողմերում:

Ս. Մարիամնե կույսի տապանաքարը գտնվում է տաճարի հարավային խորանում:

Արևմտյան մուտքի դուռն վերևի մասում, սրբատաշ քարի վրա, գետնից բաց է հետևյալ արձանագրությունը:

Աստուծո Միածին Որդոյ Ջորհներով Ծողակաթ անունով սույն տաճարը կանգնեցվում է, մեր հայկական հազար հարյուր քառասուններե թվականին. Սուրբ Էջմիածնի Նախապետ սրբազան հոր հայրապետության օրոք. բարեպաշտ Աղամալի նվիրատվությամբ, որը Նախիջևան քաղաքից էր, կառուցեց իբրև հիշատակ փրկելու իր հոր՝ Աղաջանի, մոր՝ Նանակույի, նաև իր կենակցի՝ Մարիամի, և իր որդիների՝


Սուրբ Ծողակաթ եկեղեցին ունի նաև ոչ ընդարձակ մի գավիթ փոքրիկ զանգակատնով՝ արևմտյան ճակատի լայնությամբ, որի հարավային և հյուսիսային կողմերում ամփոփված են Նախապետ Եղեսացի և Աբրահամ Կրետացի կաթողիկոսների աճյունները:

Եկեղեցու արևելյան պատի տակ, մի փոքրիկ միաքանակյան գերեզման կա՝ հետևյալ տապանագրերով.

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԲՈՅԱԶՅԱՆ-ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՇՏԱՐԱԿԵՑԻ ՎԱՆԱՀԱՅՐ ՍՈՒՐԲ ԾՈՂՈԿԱԹԻ 1888—1908 18 ԱՊՐԻԼԻ

ԴԱՄԲԱՐԱՆ ԳԵՎՈՐԳ ՔԱՀԱՆԱ ԳԱՍՊԱՐՅԱՆԻ ՎԱԽԾԱՆՅԱՆ 1899 Թ. ԲԱԾԱՊԱՐԱՆՑԻ

ՍՏԵՓԱՆՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԱՆԱՀԱՅՐ ՍՈՒՐԲ ԾՈՂԱԿԱԹԻ ԾՆՅԱՆ 1817 ԹԻՎ




Ա. Շողակաթ եկեղեցու զանգակատունը

17-րդ դարում եկեղեցին շրջապատված է եղել բարձր քարակերտ պարսպով, չորս անկյունային բուրգերով և կենտրոնական հսկա դարպասով, որի տակ մտնելոցի օրերին դրվում էին խաչ և Ավետարան, որպեսզի մարդիկ համբուրեին դրանք քաղաքային գերեզմանատուն գնալու ճանապարհին:

Վանքը ունեցել է այլ շինություններ, վանատուն, ստորգետնյա պահեստներ, ջրհոր, հսկայական տարածությամբ այգիներ, խաղողի և պտղատու ծառերով: Եկեղեցին ունեցել է ման ընդարձակ մի գավիթ (ժամատուն), որը փլուզվել է 1807 թվականին, ուսուպարսկական պատերազմների շրջանում: Ռուս-պարսկական պատերազմներից առաջ և հետո վանքի վանահայրն էր Հուռանենց Հակոբ եպիսկոպոսը, մաշառ աշխատասեր և շինարար վանահայր է եղել, որի վանահայրության ժամանակահատվածում վանքը ապրում է իր լավագույն տարիները:

1939 թվականին Վեհափառ Հայրապետի գլխավորած ճարտարապետների հանձնաժողովը մի գեղեցիկ եկեղեցաշեն ծրագիր ընդունեց, Ա. Շողակաթ վանքում էլ վերանորոգման աշխատանքները սկսելու մասին:

Շողակաթ վանքի վերանորոգման ծրագրերը իրագործվեցին հաղեպարմակ քա-



Ա. Շողակաթ եկեղեցի. Նոր երկցատուն—Գրառնյակ. 1931

րերարներ տեր և տիկին Սուրեն և Ծաքե Գալեաներյանների նվիրատվություններով: Վերակառուցվեց Ս. Ծողակաթի պարիսպը, վարդագույն արթիկ տուֆից բազալտե խարիսի վրա: Վերակառուցվեց եկեղեցու ներսի հատակը, դրսից եկեղեցին շրջապատվեց սև տուֆի սալիկներով: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի գլխավոր ճարտարապետ Արծրուն Գալիկյանի նախագծով կառուցվեց նոր Ավագ սեղան ֆիզիոն սրբատաշ քարից: Հիմնովին վերանորոգվեց եկեղեցու տանիքը: 1960 թվականի հոկտեմբերի 15-ին, ձեռամբ ազգիս Հայրապետի կատարվել է Ս. Ծողակաթ եկեղեցու նորակառույց Ավագ սեղանի օծումը: Օծման արարողությանը ներկա են եղել Մայր Աթոռի միաբանությունը, հոգևոր ձեռնարանի ուսանողությունը, ինչպես նաև եկեղեցու բարերարներ տեր և տիկին Սուրեն և Ծաքե Գալեաներյանները և հավատացյալ բարեպաշտ ժողովուրդը:

Հաջորդ օրը, կիրակի, հոկտեմբերի 16-ին, Վեհափառ Հայրապետը առաջին ս. պատարագն է մատուցում նորած Սուրբ Սեդանի առջև: Պատարագի վերջավորությամբ Վեհափառ Հայրապետը քարոզում է հետևյալ բնաբանով... «Սրբեա, լուսաւորեա և պայծառացո վերստին զտաճար քո և զսեղանս, զի հանգիցէ աստուածութիւն քո ի տեղուքս յայսմիկ հաճապագ»:

Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ 1980—1981 թվականներին շարունակվեցին եկեղեցու բարեկարգումները. կառուցվեց երիցատուն՝ իր հարմարություններով, բարեկարգվեց նաև եկեղեցու ներսը, կախվեցին ջահեր, անցկացվեց ստորգետնյա էլեկտրական լարեր, մեր բարեպաշտ և բարերար ժողովրդի օգնությամբ ձեռք բերվեցին գորգեր, ուղեգորգեր, քշոցներ, եկեղեցական հանդերձանք և այլն:


Կանաչապատվեց և ծառապատվեց եկեղեցու շրջապատը:


Սուրբ Ծողակաթ եկեղեցում անխափան կատարվում են ծամերգություններ, կիրակի և տոն օրերին մատուցվում է ս. և անմահ պատարագ, ինչպես նաև Հայ Եկեղեցուն հատուկ բոլոր խորհուրդները (պսակ, մկրտություն) և այլն:

«Թող միշտ կանգուն, շեն ու պայծառ մնան մեր պատմական բոլոր սրբավայրերը և թող անոնցմե միշտ լույս և երկնային շքանորհներ տարածվին հաշոց աշխարհին և մեր հավատավոր ազգի բոլոր զավակներուն վրա: Ամեն»:

Վազգեն Ա Վեհափառ Հայրապետի սրբատառ Կոնդակից, գրված 1960 թվականի դեկտեմբերի 1-ին:

ՂԵՎՈՆԴ ԲԱՀԱՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Վանահայր





ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱԶՆԻՎ ԲԱՐԵԿԱՄԸ

Վերջերս Սոֆիայի պետական հիվանդանոցում, կարճատև հիվանդությունից հետո վախճանվել է Բուդաբ Օրբոդոքս եկեղեցու ծանոթ ու հարգված եկեղեցական, Սոֆիայի Հոգևոր Մեմարանի դասախոս և ապա տեսուչ՝ տ. Նիկոլա եպիսկոպոս Մակրոբիոսյանին:

Հանգուցյալը եղել է հայ և բուդաբ ժողովուրդների և եկեղեցիների դարավոր բարեկամության ջերմ ջատագույլ, հայ եկեղեցու և մեր մշակույթի ազնիվ բարեկամ:

1965 թվականին տ. Նիկոլա եպիսկոպոսը արժեքավոր ուսումնասիրություններ է հրատարակել «Հոգևոր մշակույթ» բուդաբական ամսագրում, հայ եկեղեցու և հայ ժողովրդի մասին:

1974 թվականի մայիսին հանգուցյալը այցելել է Մայր Աթոռ Ս. Էջմիածին, որպես Բուդաբիայի Նորին Արքեպիսկոպոս Ս. Մաքսիմ պատրիարքի պատվիրակության անդամ և հանգամանորեն ծանոթացել հայ ժողովրդի կյանքի, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և հայ եկեղեցու կատարած հոգևոր, մշակութային ու հայրենասիրական առաքելության, անցյալում և ներկայիս:

Սոֆիա վերադառնալուց հետո, տ. Նիկոլա սրբազանը նույն տարին, կազմակերպել է ա. Ներսես Շնորհալու մահվան 800-ամյակին նվիրված հոբելյանական հանդիսությունը Սոֆիայի Հոգևոր Մեմարանում և հմտալից մի ուսումնասիրություն է հրատարակել բուդաբական «Եկեղեցական մամուլ»-ում Շնորհալու եկեղեցական, մատենագրական հոգևոր ու հարուստ ժառանգության մասին:

Այլ առիթներով ևս հայ եկեղեցու մեծ բարեկամ տ. Նիկոլա սրբազանը արտա-

հայտել է իր սերն ու համակրանքը հայ եկեղեցու, նրա պատմական կենտրոն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, և Ամենայն Հայոց Հայրապետ Ս. Ս. Վազգեն Ա-ի նկատմամբ:

Ստորև «Էջմիածին» ամսագրի ընթերցողների ուշադրությանն ենք ներկայացնում բաղվածաբար 1974 թվականին տ. Նիկոլա հանգուցյալ եպիսկոպոսի գրած մեկ նամակից հատվածներ, որպես և քաղաքական հարգանք նրա բարի ու ազնիվ հայասեր հիշատակին:

«Այս օրերին ստացա Նորին Արքեպիսկոպոս Ս. Ս. Վազգեն Ա. Ամենայն Հայոց կաթողիկոսի սիրալիր գիրը, որով ինձ մայիս ամսին հրավիրում էր ա. Էջմիածին այցելության:

Իմ բարեկամական կապերը հայ ժողովրդի և հայ առաքելական եկեղեցու հետ ավելի քան քառասուն տարիների պատմություն ունեն: Դեռ ուսանող՝ ես կապեր էի հաստատել, այն տարիների Բուդաբիայի հայոց առաջնորդ տ. Ստեփանոս արքեպիսկ. Հովակիմյանի հետ: Հանգուցյալ սրբազանը ֆիզիկապես ու հոգևոր իմաստով քացատիկ մի անձնավորություն էր: Հաճախ կայցելեի նրա գերեզմանը, արտահայտելու համար իմ մասնավոր հարգանքս նրա անձին նկատմամբ, մի անձնավորություն, որ դեռ Բուդաբիա չեկած մեծ բարեկամ էր մեր ժողովրդին:

Ամեն տարի Հոգևոր Մեմարանի ուսանողությանը առաջնորդում էի Սոֆիայի հայոց տարբեր և առաքելական եկեղեցիների համար հայկական պատարագը, որը ես թարգմանել էի բուդաբերեն և որպես ուսումնասիրություն հրատարակել՝ Մեմարանի տարեկան տարեցույցի մեջ:

Կան բազմաթիվ այլ հայեր ևս, որոնց

երբեք չեն կարող մոռանալ բուլղարները: Ահա հայոց Մկրտիչ Խրիմյան պատրիարքը, որը անձամբ Կ. Պոլսում ներկայացել է մեծ փոփոխ Ալի փաշային և բարեխոսել որ բուլղարները իրավունք ունենան Կ. Պոլսում բանալու իրենց անկախ եկեղեցին: Ահա Գերոգ ծայրագույն վարդապետ Ռուսնուգյանը, անդամ Փլովտիվի թոքական մեջլիսին, որը շատ անգամներ բարեխոսել է թուրքերի մոտ, ի նպաստ բուլղար հոգևորականների ու հեղափոխականների և հաջողել է փրկել նրանց՝ ստույգ վտանգից: Ինչպես կարող ենք մոռանալ թաթար Բազարճըզ քաղաքի կայսրանապետին, որ 1877 թվականի դեկտեմբերի 27-ին, վտանգելով իր կյանքը, փրկել է քաղաքը հրդեհից և բուլղար բնակչությունը՝ ստույգ մահից: Ահա և Խաչեր Վարդապարմյանը, որը 1876-ին փրկել է կյանքը մեր երիտասարդ բուլղար կալանավորների:

Բալկանյան պատերազմին Անդրիանապոլսում Կարապետ Դավթյանը փրկում էր կյանքը 105 բուլղար ուսուցիչների և հոգևորականների, նրանց ուտելիք հասցնելով, հակառակ ամենախիստ արգելքների, պատերազմի ամենատաք և վտանգավոր պահին. Իսկ ժամանակի հայոց տ. Հովակիմյան առաջնորդը, Ադա-Բազարի 2000 բուլղար գերիների կյանքը փրկում էր հա-


մոգելով թուրք զինվորականը, որ Զատիկի տոնին նրանց ազատ արձակի:


Իսկ ի՞նչ կարող ենք ասել մի շարք կրթության մշակների մասին, որոնք եկան մեր երկիրը, մեր ազատության արշալույսից հետո, ինչպիսիք էին Տաճատ Բեյլերյանը, Սիմոն Քյուչուկյանը, Հակոբ Մավյանը, Խաչարանապետ, Թադեոս Դիվինյանը, դոկտ. Եագուպյանը՝ որը կամավոր կերպով տրամադրել էր իր ուժերը բուլղար բանակին:

Ինչպե՞ս որակենք հայկական կամավորական ջոկատի գործունեությունը Բալկանյան պատերազմին, որը առասպելական հերոս գորավար Անդրանիկի առաջնորդությամբ, խիզախության ու հերոսության բացառիկ էջեր արձանագրեց բուլղար բանակի կողքին:

Ինչպես իմացել եմ, Մաքսիմ պատրիարքի գլխավորությամբ կազմվել է բուլղար եկեղեցու բարձր մի պատվիրակություն՝ այցելության գնալու ս. Էջմիածին, Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա-ին:

Սույն ձեռնարկը կրկին, մի նոր արտահայտությունն է հանդիսանում երկու եղբայրական ժողովուրդների՝ բարեկամության և պատվաբեր մի քաջ խաղաղության՝ աշխարհի բոլոր ժողովուրդների համար:





ՎԻԿՏՈՐ ՄԵԱՅԱԿԱՆԻ ՊԵՏՐՈՍՅԱՆՑ

ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՊԱՇՏՊԱՆ ՀԱՅ ԿԱՆԱՅԷ

ԿԱՏՐԱՆԻՔ

Հայոց թագոմի Կատրանիդեն Սյունիքի Վատակ Ա թագավորի դուստրն է, Բագրատունի Գագիկ Ա թագավորի կինը:

Բագրատունի շինարար ու լուսամիտ թագոմիներից մեկն է Կատրանիդեն: Իր նախորդների նման նա ևս շինարարական լայն գործունեություն է ծավալել, եկեղեցիներ է կառուցել ու նվիրատվություններ կատարել վանքերին:

Կատրանիդե թագոմու շինարարական գործունեության պատկը Անիում կառուցված Մայր տաճարն է:

Տաճարի հիմնաքարը դրվել է Սմբատ Բ թագավորի իշխանության վերջին տարում՝ 989 թվականին: Տաճարի շինարարությունը շարունակել ու 1001 թվականին ավարտել է Սմբատ Բ թագավորի հարսը՝ նրա Գագիկ եղբոր կինը: Տաճարի հիմնադրման, կառուցման ու նրան տրված զարդերի մասին մեզ տեղեկացնում է այդ դեպքերի ժամանակակից պատմիչ Ասողիկը: Նա գրում է.

«...Կատրանիդե թագոմի բարեպաշտոմի եղեալ... շինեաց զհիմնարկեալ եկեղեցիս Սմբատայ ամենապաշտո վաղելոյթեամբ, բարձրաբերձ կամարօք գմբեաւորեալ խորան երկնամեման, և զարդարեաց ի զարդ ծիրանեմաղիկ, ոսկեթել նկարագործ անկումածոց, արծաթեղէն և ոսկեղէն անօթից և բազմապայծառ լուսատու անօթից վաղելոյթեամբ, որոք ջահանայր ըստ երկնային կամարին կաթողիկէն սուրբ...»⁸¹:

Կատրանիդե թագոմու շինարարական արձանագրությունը ամենագեղեցիկ երկաթագրով փորագրված է տաճարի հարավային պատի վրա: Կատրանիդեն հաղորդում է.

«...Ես՝ Կատրանիդե Հայոց թագոմի... շինեցի զսուրբ Կաթողիկէս, զոր էր հիմնադրեալ մեծից Սմբատա եւ կանգնեցաւ տուն Աստուծոյ նորոգ եւ կենդանի ծնունդ հոգեւոր եւ արձան մշտնջենաւոր, զարդարեցի եւ զարդիմք պատուականաւր նուէրք ինձ ի Քրիստոս եւ զարմից իմ եւ որդոց Սմբատա, Արստա եւ Աշոտ...»⁸²:

Ինչպես երևում է Ասողիկի պատմության մեջ քերված հատվածից և տաճարի շինարարական արձանագրությունից, Կատրանիդե թագոմին իր կառուցած եկեղեցուն թանկարժեք սարսքներ ու զարդեր է նվիրել:

Մայր տաճարը Անի մայրաքաղաքի ամենանշանավոր կառույցներից մեկն է, գտնվում է Ախուրյանի ձորից ոչ հեռու, գեղատեսիլ տարահարթում, Աշոտյան ու Սմբատյան պարիսպների միջև: Տաճարը երևում է քաղաքի բոլոր կողմերից և Միջնաբերդի հետ միասին իշխող դիրք ունի քաղաքի նկատմամբ: Պատմաբան Թադևոս Հակոբյանը վերջերս հրատարակած «Անիի պատմությունը» գրքում ճշտորեն Մայր տաճարը համարում է Անի քաղաքի խորհրդանիշը⁸³:

Անիի Մայր տաճարը 7-րդ դարի գմբե-

⁸¹ Ստեփանոս Տաթևեցի Ասողիկ, Պատմություն տիեզերական, Ա. Պետերբուրգ, 1885, էջ 256:

⁸² Հ. Ա. Օրբելի, Հայ վիճագրություն, պրակ 1, Անի քաղաք, Երևան, 1966, էջ 35:

⁸³ Թ. Խ. Հակոբյան, Անիի պատմությունը (նկագույն ժամանակներից մինչև 1045 թ.), Երևան, 1980, էջ 290:

թափոր բազիլիկ եկեղեցու հենքի վրա կառուցված կենտրոնազմբեթ եկեղեցի է: Մեծությամբ զիջում է միայն մայրաքաղաքի արքայական պալատի համալիրին: Մայր տաճարի մասին լրիվ պատկերացում կազմելու համար ասենք, որ այն էջմիածնի Մայր տաճարից ավելի մեծ ու ավելի ընդարձակ է: Տաճարի կառուցման համար օգտագործվել են դեղին, սև, կարմիր, գորշ գույնի ամբողջովին սրբատաշ քարեր: Գերակշռող գույնը դեղինն է: Պատերի շարվածքը աչքի է ընկնում ոսկերչական վարպետությամբ:

Անիի Մայր տաճարը մոնումենտալ կառույց է: Տաճարի կառուցման գործում կիրառված ճարտարապետական մոտիվները, շինության վեհությունը, կատարելությունը Մայր տաճարը դարձնում են հայկական ճարտարապետության գլուխգործոցներից մեկը: Մի շարք ճարտարապետների կարծիքով (Ստրժիգովսկի, Թ. Թորամանյան) Անիի Մայր տաճարի կառուցողական սկզբունքները հետագա զարգացում են գտել 12—14-րդ դարերում Եփրատյան ձևավորված գոթական ճարտարապետության մեջ:

Անիի Մայր տաճարը կառուցել է հռչակավոր ճարտարապետ Տրդատը, այն Տըրդատը, որ դրանից մեկուկես տասնամյակ առաջ մեծ վարպետությամբ վերականգնել էր Կոստանդնուպոլի Սուրբ Սոփիայի գրեթե, և որին Ստրժիգովսկին կոչում է «գոթական ոճը տանող ճանապարհի հայտնագործող»⁶⁶:

Չափազանց մեծ էր Մայր տաճարի համբավը: Հ. Ղևոնդ Ալիշանը Ծիրակ աշխարհին նվիրված հայտնի ուսումնասիրության մեջ կարծիք է հայտնել, որ Մայր տաճարում են ձեռնադրվել Հայոց կաթողիկոսներն ու թագադրվել Ծիրակի Բագրատունի թագավորները⁶⁷:

Կատրանիդե թագուհու հովանավորած ու Տրդատ ճարտարապետի կառուցած Մայր տաճարը մեզ է հասել կանգուն վիճակում (1319 թվականի երկրաշարժից միայն զրմբեթն է փլվել): 19-րդ դարի վերջերին տաճարի ներսը մաքրվել է, գմբեթի բեկորները հանվել են տաճարի միջից: 20-րդ դարի սկզբին, երբ Անիում սկսվեցին գիտական պեղումները, տաճարում տեղավորվեց Անիի հնագիտական թանգարանի մի բաժինը՝ հնադարաբան: Հնադարաբանում հավաքվում են պեղումների ժամանակ գտնված, ճարտա-

րապետական առումով հետաքրքրություններ կայացնող նյութերը:

19-րդ դարի վերջերին Ծիրակի դաշտում մեկ անգամ էլ կրկնվեց Անի քաղաքի հրաշալիքը՝ ավերակների թագուհին՝ Մայր տաճարը: Ալեքսանդրապոլ քաղաքում Տրդատ ճարտարապետի հաջորդները մեծ վարպետությամբ կառուցում են հռչակավոր Մայր տաճարի կրկնօրինակը՝ Սուրբ Խաչ եկեղեցին:

Անիի Մայր տաճարը գրավել է տաղանդավոր նկարիչ Գևորգ Բաշինջաղյանի ուշադրությունը: Տաղանդավոր նկարիչը ստեղծել է «Մայր եկեղեցին» ուշագրավ կտավը, որն այժմ ցուցադրվում է Էջմիածնի Մայր տաճարի թանգարանում:

Ծիանար թագուհի Կատրանիդեն դեռևս իր կենդանության օրոք համոզվեց իր ձեռակերտ տաճարի հավերժությանը և իր հիշատակն ամբողջությամբ կապեց նրան, մահից հետո էլ չբաժանվեց Մայր տաճարից: Նրա հանգստարանը գտնվում է Մայր տաճարի արևելյան կողմում, մի փոքրիկ մատուռի մոտ:

ԱՐԶՈՒ ԽԱԹՈՒՆ

Արգու խաթունը Կայենի և Մահկանաբերդի տեր, Թիֆլիսի ամիրա Բուրդ Արծրունու (Ամիր Բուրդ) դուստրն է: Ամուսնացել է Հաթերքի իշխան Հասանի ավագ որդի և հաջորդ Վախտանգ Խաչենցու հետ:

Վախտանգ Խաչենցու տանը որոշ ժամանակ ապրել է միջնադարի մեծ մտածող, իրավագետ Մխիթար Գոշ վարդապետը: Վախտանգի և նրա եղբայրների հովանավորությամբ ու օգնությամբ էլ Գոշը կառուցում է Նոր Գետիկի վանքը: Եկեղեցու օծման հանդիսությունների ժամանակ (1197 թ.) Արգու խաթունը վանքին է նվիրում իր գործած վարագույրը:

Մխիթար Գոշը իր հետագա գործունեության ընթացքում միշտ երախտագիտությամբ է հիշել Վախտանգին ու Արգու խաթունին: Գոշը երախտալից ընծադարձով նրանց է նվիրել իր Դատաստանագրքի մի օրինակ. «Յիսուս Բրիստոս, յորժամ գաս ի նորոգեալ զերկիրս, նորոգեա հոգւով և մարմնով զաստուածաւեր իշխանն իշխանաց զՎախտանգ և զամուսին իր զԱրգու խաթուն ի կեանս անմահս»:

1214 թվականին Վախտանգ իշխանը մահանում է: Արգու խաթունը, ամուսնու հիշատակին, Դադի վանական համալիրում կառուցում է մի եկեղեցի, որն այդ համալիրի ամենահռչակալ հուշարձանն է և անխաթար պահպանվել ու հասել է մեր օրերը:

⁶⁶ Հայկական սովետական հանրագիտարան, հ. 1, Երևան, 1974, էջ 413:

⁶⁷ Հ. Ղ. Ալիշան, Ծիրակ, Վենետիկ, 1881, էջ 67—78:

Եկեղեցու 19 տողանոց շինարարական արձանագրությունը փորագրված է հարավային պատի վրա: Արզու խաթունը գրել է.

«...ես՝ Արզու խաթուն, նուստ աղախին Քրիստոսի, դուստր մեծի իշխանաց իշխա-

նանելով, զի վասն մեղաց իմոց խրատեաց զիս Աստուած...»⁵⁵:

Արզու խաթունը իր ժամանակի լավագույն ձեռագործ գործողներից մեկն էր: Նա վարագույրներ է գործել Հաղբառի, Մա-



Դադի վանք. 1214 թ. Արզու խաթունի կողմից կառուցված եկեղեցու մի հատվածը

նին Քրդին և ամուսին Վախտանկայ Խաչենոյ, յուսով մեծաւ շինեցի զսուրբ կաթողիկէս ի տեղոջ հանգստարանի առն իմոյ և զաւակաց իմոց Հասանայ անդրանիկին իմոյ և Գրիգոր, որ Տէրն կեաւրեալ վախ-

կարավանքի, Դադի վանքերի համար: Նրա մասին սրտամիչ Կիրակոս Գանձակեցին գրել է. «Սա բազում ինչ օժանդակ եղև ա-

⁵⁵ Ստորագրութիւն կաթողիկէ, էջ 356:

բար և վարագոյր գեղեցիկ՝ դստերօք իւրովք՝ ծածկոյթ սուրբ խորանին, զարմանալի տեսողաց, ի մագոյ այծից կակղագունաց՝ ներկեալ պէսպէս և զանազան, զործ քանդակակերպ և նկարեալ պատկերօք, ճշգրտագոյն հանուածովք՝ տնօրինականօք Փրկչին և այլ սրբոց, որ հիացուցանէր զտեսողսն»⁸⁰:

Զ Ա Պ Ե Լ


Կիլիկիայի Լևոն Բ թագավորի և Սիպիլ թագուհու դուստրը՝ Զապելը, ծնվել է 1215 թվականին: Զապելը Լևոն Բ թագավորի միակ զավակն էր և 1218 թվականին հայտարարվեց Կիլիկիայի թագաժառանգ: Լևոն Բ-ը խոստանում է Զապելին ամուսնացնել Հունգարիայի Անդրեաս թագավորի Անդրեաս որդու հետ: Այդ ամուսնությունից հետո Անդրեասը դառնալու էր հայոց թագաժառանգ: Սակայն Լևոն Բ-ի մահից հետո (1219 թ.), ինչպես պատմիչ Սմբատ Սպարապետը հաղորդում է. «Ռեզոնաց թագավորին որդին ոչ եկն յորժամ լուսն զմահ թագավորին Լևոնի»: Այս պայմաններում հայոց ավագանին հարմար է գտնում Զապելին ամուսնացնել հարևան Անտիոքի իշխան Բոհեմունգի որդի Ֆիլիպի հետ: Սակայն Ֆիլիպը չարդարացրեց հայոց ավագանու հույսերը, վարում էր հայաստ քաղաքականություն, որի հետևանքով իշխանությունից հեռացվում է ու քանտում մահանում⁸¹: 1226 թվականին Զապելը, հայոց ավագանու որոշմամբ, ամուսնանում է Կոստանդին Պալիի որդի Հեթումի հետ⁸²:

Զապել թագուհին կատարել է շինարարական մեծ աշխատանքներ: Նա Սիս մայրաքաղաքում երկու եկեղեցի է կառուցել, իսկ 1241 թվականին դարձյալ Սսում կառուցել է հիվանդանոց: Հիվանդանոցի շենքըն ավերվել է: Բարեբախտաբար 1626 թվականին գտնվել ու ընդօրինակվել է հիվանդանոցի շինարարական արձանագրությունը:

«Կատարեցաւ յարմարումն շինուածոյ հիւանդանոցիս հրամանաւ մեծաւ փառաքրիստոսաւեր թագուհւոյ Զապելի. ի թվականութեան Հայոց Ու Դ (1241)»⁸³:

Զապել թագուհուն բարձր են գնահատել նրա ժամանակակիցներ Թորոս Ռուսիմն ու Վարդան վարդապետ Արևելցին: Մանրա-

նկարիչ Ռուսիմը Զապելին անվանում է «սրբափոգի, առաքինաջան և ողջախոհ թագուհի»:



Միսթար Գոշի ընծայագիրը՝ Վախտանգին և Արզու խաթունին նվիրած, Դատաստանագրքի վրա

Զապել թագուհին մահացել է 1252 թվականի հունվարին ու թաղվել Դրազարկի վանքում: Զապել թագուհու մահից հետո էլ Կիլիկյան դրամները կտրվել են Հեթում թագավորի և նրա պատկերով: 1257 թվականին Հեթում թագավորը Ասորիքի Քերեք քաղաքում եկեղեցի է կառուցել Զապելի հիշատակին:

Զապելի կերպարը հուզել է նաև մեր օրերի ականավոր նկարիչ Վառդգես Սուրենյանցին: Նա 1909 թվականին ստեղծել է «Զապել թագուհու վերադարձը գահին» իլյուստրացիան կտավը, որտեղ պատկերված է այն պահը, երբ դեռատի Զապելը եկել է պալատ որպես հայոց թագուհի, որպես Հեթում թագավորի կին:

ձեռքով 1626 թվականին գրված հիշատակարանում: (Տես Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ (1621—1640 թթ.), Բ. Բ. Կազմեցին Վ. Հակոբյանն ու Ա. Հովհաննիսյանը, Երևան, ԳԱ, 1978, էջ 207):

⁸⁰ Կիրակոս Գանձակեցի, Պատմություն հայոց, էջ 215:

⁸¹ Նույնը, էջ 189:

⁸² Նույնը:

⁸³ Արձանագրությունը մեջ է բերվել 1286 թվականին գրված Մաշոցի 475ր էջում Հակոբ Սսեցու

ՎԱՆԵՆԻ

Վանենին խաղրակյան իշխանական տան շատավիդներից է՝ Ջաջուտ Բ-ի դուստրը, խաղրակ Բ Պողոսյանի քույրը, ամուսինն էր Սևադյանց Արսա իշխանի որդի Կուկը:

Վանենին 1224 թվականին խորանաշատի վանքում Ավետարան է գրել տվել: Ավետարանը մանրանկարված է և չափազանց գեղեցիկ: Այդ է ակնարկում հետագայում ձեռագիրը փրկագնող Մելիք Հովսեփը իր հիշատակարանում՝ «Արդ զայս պատուական ակնա ազատեցի ես՝ Մելիք Յովատափա»: Ավետարանը Վանենին նվիրել էր խորանաշատի վանքին, տակայն փրկագնվելուց հետո այն հանգրվանում է Վանի Սուրբ Վարդան եկեղեցում:

Խորանաշատի Ավետարանի գրվելուց ութ տարի անց Վանենին մեկ այլ մանրանկար Ավետարան է պատվիրում Գեակա վանքում: Մագաղաթյա երկրորդ Ավետարանը գրում է Ստեփանոս գրիչը: Այս Ավետարանը ևս զարդարվում է մանրանկարներով: Վանենին Ավետարանը նվիրում է Արցախ գավառում գտնվող Հավապտուկի մենաստանին: Սակայն այս Ավետարանին ևս վիճակված էր առաջինի ճակատագիրը, այն ևս վանքին նվիրվելու տարում թաթարների ատապառակությունից հետո գերեզարվում է ու տարվում Մոտլան: 1236 թվականին գերեզարդող Ավետարանը քերում է Տիդիս և վաճառում: Զեռագիրը խմբովին փրկագնում են: Վանենու պատվիրած երկրորդ Ավետարանն այժմ գտնվում է Երևանի Մատենադարանում:

Ինքը՝ Ավետարանների պատվիրատուն՝ ուսումնասեր Վանենի իշխանունին, մահացել է 1269 թվականին ու թաղվել Սևանում⁶³:

ԿԵՌԱՆ

Կեռանը Լամբրոնի տեր Հեթում սեպաստուսի և Կեռանի դուստրն է:

1262 թվականին Կեռանը ամուսնանում է Կիլիկիայի թագավոր Հեթում Ա-ի որդու՝ Լևոնի (Լևոն Գ.) հետ: Հարսանիքի օրը Կոնստանդին Բարձրբերդցի կաթողիկոսը Կեռանին է նվիրում իր Ավետարանը, որ գրվել ու ծաղկազարդվել էր հարսանիքի նախօրյակին: Ավետարանի և՛ գրիչը, և՛ ծաղկողը հուշակավոր մարդիկ էին: Ավետիսն ու Թորոս Ռոսլինն էին աշխատել այդ Ավետարանի վրա: Ավետարանի վերջում

գետեղված էր նաև Լևոնին և Կեռանին պատկերող նկարը, որտեղ նորաստեղծները արքայական զգեստներով են: Նկարի ֆոնը ամբողջովին ոսկով է պատում: Այս եզակի նկարի նեղինակը Թորոս Ռոսլինն է:

1270 թվականին թագաժառանգ Լևոնը օծվում է Կիլիկիայի հայոց թագավոր, Կեռանը՝ թագուհի:

Հարսանիքից տասը տարի անց Կեռան թագուհին հուշակավոր գրիչ Ավետիսին առաջարկում է արտագրել նոր Ավետարան: Ավետիսը իրեն հատուկ վարպետությամբ կատարում է Կեռան թագուհու պատվերը: Ավետարանը պատկերազարդված է: Մանրանկարիչը, որի անունը ցավոք անհայտ է, պահպանել է պատկերագրության ընդունված կանոնները. մանրանկարներն աչքի են ընկնում նրբագեղությամբ, կատարողական մեծ վարպետությամբ, պարզ կառուցվածքով, գծանկարի հստակությամբ ու գունընտրության ներդաշնակությամբ: Ավետարանի աչքի ընկնող մանրանկարներից մեկը Լևոն Գ. թագավորին ու Կեռան թագուհուն ժառանգների հետ պատկերող մանրանկարն է, որը, բացի բարձրարվեստ աշխատանք լինելուց, միաժամանակ ունի պատմական արժեք: Իր պատկերաբանի անունով էլ այս ձեռագիրը մտել է մշակույթի պատմության գանձարանը: «Կեռան թագուհու Ավետարանը» այժմ պահվում է Երուսաղեմի Սուրբ Հակոբյանց վանքի ձեռագրաց Մատենադարանում: Պետք է խոստովանել, որ այս ձեռագիր մատյանը հայկական միջնադարյան արվեստի լավագույն գործերից մեկն է⁶⁴:

1274 թվականին Կեռան թագուհին Ստեփանոս Իրիցու որդի գրչին գրել է տվել Վարդանի գործերն ընդգրկող ժողովածու:

Հայոց արքայական զանգի նստած եզակի թագուհիներից մեկն է Կեռանը: Նա իր ամուսին թագավորին տասնհինգ զավակ է պարգևել: Վերջում նա լքել է ամեն ինչ՝ իշխանություն, հարստություն, ու մտել Լամբրոնին մոտիկ գտնվող Սկևռայի վանք՝ քույր Թեոֆանո անունով:

Երբեմնի թագուհին՝ քույր Թեոֆանոն, 1283 թվականին Սկևռայի վանքում Ստեփանոս քահանային պատվիրում է Ավետարան արտագրել: Այս Ավետարանը գրասեր թագուհու վերջին պատվերն է: Ավետարանի գրվելուց երկու տարի անց, 1285 թվականին, դեռևս քառասունը չըրորած, Կեռան թագուհին կնքում է իր մահկանա-

⁶³ Գաբրիել արքեպ. Յովսեփյան, խաղրակյանց կամ Պողոսյանց հայոց պատմության մեջ, հ. Ա, Վաղարշապատ, 1928, էջ 81:

⁶⁴ Հայկական սովետական հանրագիտարան, հ. 5, Երևան, 1979, էջ 385:

ցում⁹⁵։ Նրա մարմինն ամփոփվում է վանքի արքայական հանգստարանում։

ՖԱՐՄԱՆ

Ֆարման տիկինը Ուլուպակի և Տովլաթի դուստրն է, ամուսինն է դերձակ Սարգիսը։

1486 թվականի նոյեմբերի 15-ին Աստվածատուր Կաֆայեցի գրիչը Քալթայ քաղաքում գրում-ավարտում է սկսած Գանձարանը, որ պատվիրել էր տեր Զաքարիան։

Ֆարման տիկինը, լսելով Գանձարանի մասին, գալիս է Աստվածատուր գրչի մոտ և խնդրում Գանձարանը վաճառել իրեն։ Աստվածատուրը Գանձարանի գրված էջերը 130 արծաթով վաճառում է Ֆարման տիկնոջը։ Ֆարման տիկինը մանրանկարիչ ու կազմող է գտնում, ծաղկել ու կազմել տալիս Գանձարանը։ Ֆարման տիկինն իր հիշատակարանում գրում է, որ Գանձարանի վրա ինքը 182 արծաթ է ծախսել։

Ֆարման տիկինը Գանձարանը նվիրում է Սուրբ Աստվածածին եկեղեցուն և հետագա սերունդներից խնդրում. «Աղաչեմ զքեզ, որք եղանակեք քաղձրածայնի, յիշեսցիք յաղօթս ձեր զանաթան Ֆարմանս, ըզձնադնս իմ զՈւլուպակն և զՏովլաթն, և զիմ կողակիցն գդերձակ Սարգիսն։ Նայ, որ յիշե և ողորմիս ասե, նայ ինքն յիշեալ լիցի ի Քրիստոսէ Յիսուսէ»⁹⁶։

Ֆարման տիկնոջ Գանձարանն այժմ գտնվում է Երուսաղեմի Սուրբ Հակոբյանց վանքի ձեռագրաց Մատենադարանում։

ՄԱՐԻԱՄ

Հովասափի և Զանադի դուստր Մարիամն ապրել է 17-րդ դարի սկզբին, ամուսինն է Էնիաթը։

1617 թվականին Մարիամ մահդասին վան քաղաքում գրիչ Հովհաննեսին պատվիրում է մի Ավետարան արտագրել։ Իր հիշատակարանում Հովհաննեսը գրում է. «Արդ՝ գրեցաւ ս[ուր]բ Աւետարանս ձեռամբ մեղսամեծ Յովանիսիս, ի մայրաքաղաքն ի վան, ընդ հովանեաւ Ս. Տիրամայր Աստ-

ուածածնին և Ս. Հրեշտակապետին, ի յառաջնորդութիւն ս[ուր]բ ոյստիս Վարագայ ի Մարտիրոս վարդապետին, ի թվականիս Հայոց ՌԿԶ (1617), ի դառն և ի նորք ժամանակիս, քազում աշխատութեամբ և անընդունակ գ[ր]ով յարեաւ գրչութեան, և քազում մեղաց ցնորիք պաշարեալ, այլ անտ կարի մերում, զոր պարգևեաց մեզ մարդասէր Հոգին, անարժան ձեռօք իմովք ի ստոյգ և ընդիր օրինակէ, կենօք տառապեալ»⁹⁷։

Ավետարանն արտագրվել է Մարիամի որդիների՝ Կարապետի և Մկրտչի հիշատակին։

Ավետարանի 322բ էջում մնում է Մարիամ «մահդասու» անունից գրված հիշատակարանը, որով վերջինս հայտնում է, որ Ավետարանն ընծայում է Սուրբ Հովհաննես եկեղեցուն. «Ես՝ մահդասի Մարիամս ըստացայ ըզս[ուր]բ Աւետարանս վաստակաց իմոց, յիսֆ արի ի դուռն Ս. Յովանիսի և սքանչելագործ Ս. Աւետարանին անջինջ յիշատակ»։

Մարիամ մահդասու պատվիրած և Հովհաննես գրչի արտագրած Ավետարանն այժմ պահվում է Երևանի Մատենադարանում։

ԳՈԶԱԼ

Գոզալն ապրել է 17-րդ դարի սկզբներին Մոկաց երկրի Բոլենց գյուղում։ Ամիրի և Խանումադի դուստրն է։

1621 թվականին Բոլենց գյուղի եկեղեցում գրիչ և նկարիչ Հակոբն արտագրում ու ծաղկում է մի հիասքանչ Ավետարան։ Ավետարանի նկարազարդումն ավարտելուց անմիջապես հետո Հակոբը մահանում է։

Հակոբի արտագրած ու ծաղկած Ավետարանը հիացմունք է պատճառում տաճարների Սոլթանջի կնոջը՝ Գոզալին, և նա այն գնում է։

Ավետարանի 296ա էջում Գոզալի անունից գրված հիշատակարանում կարդում ենք. «Ես՝ աստուածասէր և բարեմիտ ծառայս Աստուծոյ, կինս Գօզալս, ստացայ զայս ս[ուր]բ Աւետարանս յիշատակ հոգոյ իմոյ և ծնօղաց իմոց։ ...Ես՝ ծառայս Աստուծոյ՝ Գօզալս, ըստացաւ զս[ուր]բ Աւետարանս և ետու ի դուռն Ս. Ստեփանոս Նախավկային և Ս. Մահակայ հայրապե-

⁹⁵ Կեռան թագուհու որդին՝ թագավոր, ապա կրոնավոր, ապա պատմիչ Հեթումը, գրում է. «21Դ (1285) փոխեցաւ ի Քրիստոս ամենագովելին հոգով և գեղեցկական տեսօք առաքինի մայր իմ Կեռան թագուհին հայոց յոգոստոսի իծ (29)»։ (Տե՛ս Մանր ժամանակագրություններ, 13—18-րդ դարեր, հ. 1, կազմեց Վ. Ա. Հակոբյան, Երևան, 1951, էջ 85)։

⁹⁶ ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն երրորդ (1481—1500), կազմեց Լ. Ս. Խաչիկյանը, Երևան, ԳԱ, 1967, էջ 468։

⁹⁷ Հայերեն ձեռագրերի ԺԵ դարի հիշատակարաններ (1601—1620 թթ.), հ. Ա, կազմեցին Վ. Հակոբյանը և Ա. Հովհաննիսյանը, Երևան, ԳԱ, 1974, էջ 610։

տին: Ով հեռացն է դրանք սորա' ... անհիճաճ կենա՞նք⁹⁸:

Ինչպես Գողաթի, այնպես էլ ձեռագրի մյուս հիշատակարանները գրել է Պարսամ քահանային: Իր հիշատակարանում Պարսամ գրիչը միաժամանակ հայտնում է, որ Ավետարանից բացի Գողաթը եկեղեցուն է նվիրել «լա զարբաֆ շուրջատ մի, լա շապիր մի, ուրար մի»:

Գրիչ ու նկարիչ Հակոբի արտագրած ու ծաղկած և Գողաթ տիկնոջ հովանավորությունը վայելած Ավետարանն այժմ գտնվում է Երևանի Մատենադարանում:

ՄԱՐԻԱՄ

Գրիչ Մարիամն ապրել ու ստեղծագործել է Երևան քաղաքում: Նրա կենսագրության մասին ոչինչ հայտնի չէ: Մարիամի անվան միակ հիշատակությունը գտնում ենք 17-րդ դարի սկզբներին սկսված մի Գանձարանում⁹⁹, որի վրա Մարիամն աշխատել ու ամբողջացրել է 1632 թվականին:

Մարիամի հիշատակարանը գրված է Գանձարան ժողովածուի 147ր էջում. «Գրեցաւ տաղս այս ի Երևան, ձեռամբ տրուպ Մարիամին, թիին ՌԶԱ (1632) ամի մարտի 4 (3) արն շաբաթի, որք եղանակէր յիշեղէք զմեզ, և դուք յիշեալ լիչիք ի նրման»¹⁰⁰:

Հովհաննես դարի սկսած ու Մարիամ գրչի ավարտած երգերի ժողովածուն՝ Գանձարանը, այժմ պահվում է Երևանի Մատենադարանում:

ՄԱՐԳԱՐԻՏ

Աղուրշի և Խանումի դուստր Մարգարիտ գրիչը ապրել է 17-րդ դարի առաջին կեսում:

Մարգարիտի մասին կենսագրական տեղեկություններ հայտնի չեն: Նրա անվան միակ հիշատակությունը գտնվում է 1640 թվականին Լաիանի շրջանի Ծեմներ գյու-

⁹⁸ Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ, հ. Բ, էջ 20—21:

⁹⁹ Ձեռագրի 63ա էջում պահպանվել է Գանձարանը սկսողի՝ Հովհաննես գրչի հիշատակարանը. «Գրեցալ թիին ՌԶԵ (1606)-ին մայիս ամսուն է (7)-ին, ձեռամբ անարժան և անպիտան ծառայ Յովանես դարին, ի հին արհեստին, որ կարդալ[ք] մի մեղայդիք, Աստուած ողորմի ասացէք»: (Տե՛ս Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ, հ. Ա, էջ 198):

¹⁰⁰ Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ, հ. Բ, էջ 471:

ղում արտագրված Ավետարանում: Ավետարանի 325ա էջում գրված է.

«Արդ՝ գրեցաւ տա ի մեծ բուսականութանս Հայոց Ռ եւ ԶԹ (1640) ամին... Աստուած ողորմի ասէք մեզ՝ Ղազար և Մարգարիտ գրչիս եւ ծնողացն՝ Կիրակոս քահանային եւ Թուրվանդին, Աղուրշին եւ Խանումին եւ մեր հոգևոր մայր՝ Խոսրով ապաշխարողին...»¹⁰¹:

Ավետարանն ունի 329 էջ, կանոնատախտակներ՝ ընտիր ծաղկումով, ավետարանիչների մանրանկարներ, քաղմաթիվ լուսանցազարդեր, գլխագրեր: Դժվար է ասել, Մարգարիտ գրիչը որքան է աշխատել Ավետարանի վրա, ո՞ր մասից, մանրանկարներ, լուսանցազարդեր, գլխագրեր արել է, թե ոչ: Բայց իրականացնել է, որ աշխատել է և այն էլ այնպես, որ հիշատակարան է թողել մյուս՝ մեր կարծիքով գրված գրչի՝ Ղազարի հետ:

Հայոց Ծեմներ գյուղում Ղազարի ու Մարգարիտի ձեռքով գրված այս մեկ հատիկ Ավետարանն էլ անցել է երկրե-երկիր և, ի վերջո, 1943 թվականին նյույորքաբնակ Հարություն Քյուրտյանն այն 100 դոլարով գնել է հայտնի հնավաճառ Գրիգոր Մինասյանից: Այժմ այս մեծարժեք Ավետարանը Քյուրտյանի ձեռագրական հավաքածուի մասն է կազմում:

ՄԱՄԱԽԱԽՈՒԹՈՒՆ


Մամախախունը Գորիսի շրջանի Խոտ գյուղի հին գերեզմանատանը Տարսայիճի, Զալիի հետ Մուրատի հիշատակին խաչքար է կանգնեցրել: Արձանագրությունն անթվակիր է, ահա այն.

Յ[խու]ս Բ[րիստո]ս, Ես՝ Մամախախուն, Տարսայիճս, Զարս կանկնեօհինը զհաչս ի փրկութիւն հոգո Մուրատին, իշեց[եք]¹⁰²:

Խաչքարի պատրաստման ոճը և շրջապատում գտնվող թվակիր խաչքարերը թույլ են տալիս ասելու, որ այս խիստ ուշագրավ խաչքարը պատրաստվել է 13—14, ամենաուշը 15-րդ դարում: Խաչքարն այժմ ընկած է պատվանդանի մոտ, որն իր նախնական տեղում է: Պատվանդանի առաջ, նույնպես նախնական վիճակում, գտնվում է մեծ գերեզմանաքար, որի երեսին փորագրված է. «Այս է հանգիստ Մուրատին»:

¹⁰¹ Հարություն Քյուրտյան, Համառոտ ցուցակ հայերեն գրչագիրներու Քյուրտյան հավաքածուի ի Ուիչիդս, Գանձաւ, ԱՄՆ: Բանբեր Մատենադարանի, 1971, № 10, էջ 422: Նաև Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ, հ. Բ, էջ 826:

¹⁰² Դիվան հայ վիճագրության, պրակ 2, էջ 62:



Թ Ե Մ Ա Կ Ա Ն Կ Յ Ա Ն Ք

ՀՅՈՒՄԻՍՏԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԹԵՄ

Վերջերս Ֆրեզնո (Կալիֆորնիա) քաղաքի նորակառույց ս. Պողոս եկեղեցում, գումարվում է ԱՄՆ-ի հայոց արևմտյան թեմի պատգամավորական ժողովը, նախագահությամբ թեմակալ առաջնորդ տ. Վաչե արքեպ. Հովսեփյանի:

Օրակարգի կարևոր հարցերից մեկն էր «Երթ» տարիներու (1982—1989) նոր շրջանի մը համար թեմակալ առաջնորդի» ընտրությունը:

Պատգամավորական ժողովում «գրեթե բացարձակ մեծամասնությամբ ու գաղտնի քվեարկությամբ որոշվեցավ հառաջիկա տարվան մայիսին սկսյալ, նոր շրջանի—1982—1989—մը համար առաջնորդ ունենալ տ. Վաչե արքեպ. Հովսեփյանը»:

Առաջնորդի մի նոր շրջանի ընտրությունից հետո, Կալիֆորնիայի զանազան եկեղեցիներում խանդավառությամբ նշվել են տ. Վաչե արքեպ. ի քահանայական ձեռնադրության երեսուն և առաջնորդական գործունեության տասնամյակները:

Կալիֆորնիայի հայոց թեմի «Հոգևորականաց տարեկան առանձնացում»ը այս տարի էլ տեղի է ունեցել ըստ նախապես կազմված ծրագրի՝ «խաղաղ միջավայրի մը մեջ, մեկուսացված մարդոցմե և առօրյա մտահոգություններե»:

Այս տարի էլ սույն շահեկան ու օգտակար միջոցառման հրավիրված է եղել տ. Տիրան արքեպ. Ներսիսյանը, որպես «հյուր և գլխավոր բանախոս»:

Հոգևորականաց «առանձնացում»-ի ընթացքում կարդացվել են մի շարք դասա-

խոսություններ, տեղի են ունեցել «կարևոր հարցերու մասին խոսակցություններ, գաղափարներու փոխանակություններ, աղոթք, հարց ու պատասխաններ և ընդհանուր եզրակացություններ»:

Տ. Տիրան արքեպ. Ներսիսյանը դասախոսել է «Հոգևորականներուն ուսումը» թեմայի շուրջ, շեշտելով, որ «եկեղեցականներ պետք է որ պատրաստվին տեղական պայմաններուն համաձայն»:

Առաջնորդ արքեպանը խոսել է «Հայ Եկեղեցվո ընդհանուր վիճակի մասին և հատկապես Արևմտյան թեմի հոգևոր, կրթական, ընկերային, մշակութային և այլ էական հարցերու շուրջ»:

«Հոգևորականության կենցաղը» նյութն է եղել տ. Տաթև քահանա Թաթույանի բանախոսության:

Տ. Գևորգ քահանա Առաքելյանը խոսել է «Հայ Եկեղեցին ու ժողովուրդը» թեմայի մասին: Տ. Լևոն վարդապետ Արելյանի դասախոսության նյութն էր «Տանջազուրկ մահ»-ը (եոթենեյժքիա): Հոգեշնորհ բանախոսը նշել է. «նկատի ունենալով որ այս հարցը գրեթե իր սկզբնական վիճակին մեջ է, ընդհանրապես եկեղեցիները տակավին պաշտոնապես որևէ դիրքորոշում մը չեն ունեցած այս հարցին առնչությամբ»:

Տ. Սիփան վարդապետը խոսել է «Իդյալ քահանայություն» թեմայի շուրջը: Նկատի է առնվել «իդյական քահանաներ ունենալու համար դաստիարակել իդյալ հավատացյալներ» հարցը:

Վերոհիշյալ շահեկան դասախոսությունների շարքը եզրափակում է Տ. Տիրան արքեպ. ը «Հայ Եկեղեցվո ներկա վիճակը

և բաղձալի ուղղություններ» իր բանախոսությամբ, շեշտելով, որ «Հայ եկեղեցվոց ներկա վիճակը բարեփոխման կկարոտի»։ Տ. Տիրան սրբազանը այդ մտածումով թելադրել է «կարգ մը բաղձալի և նոր ուղղություններ» հայոց. եկեղեցին հոգևոր, գորավոր հիմքերու վրա պահելու համար, ս. Էջմիածնի հովանավորությամբ և գերագահությամբ։

Դասախոսությունից հետո, «ստանձնացում»-ին մասնակից հոգևորականները մասնակցում են Կալիֆորնիայի թեմի ամատային ճամբարին, և իրենց «հոգևոր դասախոսություններով, քարոզներով և հորդորներով, հայրենասիրական, ազգային զգացումները գորացուցին 300 երիտասարդ,—երիտասարդուհիներու՝ որոնք եկած էին Կալիֆորնիայի զանազան շրջաններեն»։

Սույն միջոցառման առավել հաջողության համար տ. Արշակ ծայրագույն վարդապետ Խաչատուրյանը և Հովսեփ սարկավազ Մովսիսյանը, առաջնորդ սրբազանի թելադրությամբ պատրաստել էին ուղեցույց մի գրքույկ, «կրոնական, լեզվական, երաժշտական և այլ բազմաթիվ նյութերով հարուստ դասագիրք մը, որը չա-


փազանց օգտակար հանդիսացավ հայեցի դաստիարակության գործին մեջ»։


Սան Ֆրանցիսկոյի ս. Հովհաննես եկեղեցու հոգևոր հովիվ տ. Մուշեղ վարդապետ Թաշնյանի հոգևոր, մասնավոր պատրաստությունը ստացած չորս երիտասարդներ, սարկավազ են ձեռնադրվել առաջնորդ տ. Վաչե սրբազանի կողմից, Կալիֆորնիայի եկեղեցիներից ներս նվիրվելու հոգևոր ծառայության գործին։

Լոս-Անջելոսում վերջերս, հանդիսավոր իրադրության մեջ քացվել է առաջնորդարանին կից նորակառույց «Արշակ Տիգրանյան վարժարանը», նախագահությամբ առաջնորդ սրբազանի, ներկայությամբ եկեղեցական դասուն և ազգային բարերար տեր և տիկին Արշակ Տիգրանյանների։

Նոյեմբերի 14—15 օրերին կատարվելու է Սան-Դիեկոյի Հայոց նոր եկեղեցու օծման արարողությունը, նախագահությամբ առաջնորդ սրբազանի։

ԱՄՆ-ի հայոց արևմտյան թեմի մասին այս տեղեկությունները քաղել ենք տ. Սիփան վարդապետ Մխայանի խմբագրությանն ուղղված տեղեկություններից, որոնց համար հայտնում ենք մեր ջերմ շնորհակալությունները։





ԳՐԱԽՈՍԱԿԱՆ
«ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

Հեղինակ՝ Զավեն Ծ. վարդապետ
Արզումանյան

Վիմպուդի (Պենսիլվանիա, ԱՄՆ) հայոց Ս. Սահակ և Ս. Մեսրոպ եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Զավեն Ծ. վարդապետ Արզումանյանն անգլերեն լեզվով հրատարակել է երեք գրքուկներ միջնադարյան մեր մատենագրերի մասին:

Երրորդ գրքուկը (Studies in Armenian historiographs), որ լույս է տեսել 1981 թ. Ֆիլադելֆիայում, բաղկացած է երեք մասից: Այստեղ, առանձին գլուխներում, համառոտ կերպով խոսվում է վաղ միջնադարի Սեբեոս Եպիսկոպոսի և Ղևոնդ Երեցի պատմությունների ինչպես նաև միջնադարի Կիրակոս Գանձակեցու մասին, վերլուծելով նրանց արժեքավոր գրքերը:

Ուսումնասիրելով վերոհիշյալների գործերն և քննելով բազմաթիվ հայ և օտարազգի գիտնականների գրած ուսումնասիրությունները, հեղինակը հասել է որոշ եզրահանգումների, որոնք ամփոփել է գեղեցիկ տպագրությամբ լույս ընծայված այս գրքուկում:

Առաջին հոդվածը է դարի մատենագիր Սեբեոսի և նրա գրած Հերակլ կայսեր պատմության մասին է: Հեղինակն այն կարդացել է 1979 թ. նոյեմբերի 4—6 Պենսիլվանիայի համալսարանում գումարված է—Ը դարերի հայ դասական մշակույթին նվիրված համագումարներում:

Հեղինակն շատ իրավամբ գտնում է, որ է դարում կատարվել են քաղաքական բը-

նույթի մի շարք կարևոր իրադարձություններ, ինչպես «պարսկա-բյուզանդական պատերազմները, սասանյան Պարսկաստանի կողմից Երուսաղեմի գրավումը 642 թ., արաբների հզորացումը, նրանց կատարված արագ արշավանքները և արաբական խալիֆայի Օմայյան դինաստիայի ստեղծումը Դամասկոսում 661 թ.»:

Այս տարիներին Հայաստանը դառնում է ենթակա մեծ ավերածությունների: Այս բոլոր դեպքերի և քաղաքական անցուղարների մասին հարուստ տեղեկություններ է տվել Սեբեոսը, որով իր գիրքը ժամանակակից պատմիչի կողմից գրված ստույգ մի գործ է և շատ արժեքավոր, քանի որ, ինչպես Հայր Զավենն է գտնում, պարսկերեն, հունարեն և արաբերեն ոչ մի գիրք գրված չէ վերոհիշյալ կարևոր դեպքերի մասին: Սեբեոսի աշխատությունը լի-նելով միակը, տրված տեղեկություններն ունեն բացառիկ մեծ արժեք:

Սեբեոսի հաղորդած տեղեկությունները կանգ են առնում 661 թ.:

Երկրորդ հոդվածը է դարի մատենագիր Ղևոնդ Երեցի և նրա ակամատեսի վկայություններն են այդ դարաշրջանի քաղաքական դեպքերի մասին: Այս հոդվածը հեղինակը պատրաստել է 22—30 դեկտեմբերի 1980 թ. Վաշինգտոնում կայացած Ամերիկյան պատմաբանների ընկերակցության տարեկան հանդիպման ներկայացվելու հա-

մար: Այն կարդացվել և արժանացել է մեծ ուշադրության:

Ղևոնդի պատմությունը սկսվում է Իսլամի հիմնադրի մահից (632 թ.) և ընդգրկում է շուրջ 150 տարվա պատմություն, սինչն 780 թ. դեպքերը: Հեղինակը նկարագրում է «Արմենիայ» երկրամասում կատարված քաղաքական անցուղիները, ծանր հարկահանությունները, ինչպես նաև տիրապետող արաբների դեմ կատարված բռնկումներն ու ապստամբությունները: «Արմենիայ» աշխարհագրական հասկացողությունը հայաստանից ավելի լայն ընդգրկում ուներ արաբների համար այդ ժամանակաշրջանում Ը դարում: Նրա մեջ էին մտնում Հայաստանը, հարևան Վրաստանն ու Աղվանքը: Որով ականատես պատմիչի ճշգրիտ վկայությունները շատ մեծ արժեք ունեն նաև տվյալ ժամանակաշրջանի վրացիների և աղվանների պատմության համար:

Վերոհիշյալից բացի Ղևոնդ Երեցը կանգ է առնում նաև արաբական նվաճումների, արաբների դեմ հույների մղած կռիվների, Բյուզանդական կայսրության, խազարների, արաբների և արևելյան այլ ժողովուրդների մասին: Պատմիչը տալիս է նաև արժեքավոր տեղեկություններ այդ դարաշրջանի զանազան աղանդների, սովորությունների և ծեսերի մասին: Հեղինակի գործը ամենալստահելի աղբյուրն է արաբական խալիֆայի կողմից Հայաստանում կատարված քարքարոսությունների, մեծածավալ գերեվարությունների, բռնությունների, թալանի, կողոպուտի, ծանր հարկերի և զանազան տեսակի գազանությունների մասին:

Հայր Զավենի այս ուսումնասիրության արժեքն այն է, որ նա քաղդատելով Ղևոնդի գործը այլ պատմիչների թողած աշխատությունների հետ, վերաարժեկորում է Ը դարի մեր մատենագրի գիրքը և այն համեմատում այդ դարաշրջանի արաբական խալիֆայի ճշմարտապատում պատմությունն ուսումնասիրող ներկա պատմաբանների ուշադրությանը:

Երրորդ հոդվածը խոսում է Կիրակոս Գանձակեցու աշխատության մասին: Հայր Զավենն շատ իրավամբ գտնում է, որ Գանձակեցու գործը շատ արժեքավոր մի աղբյուր է ԺԳ դարի քաղաքական դեպքերի և քարքարոսական արարքների մասին, երբ Հայաստանն ու հարևան երկրները հեծում էին մոնղոլ բռնակալների ծանր լծի տակ:

Գանձակեցու աշխատությունը քաղկացած է 60 գլուխներից, սակայն այն ունի երկու գլխավոր մասեր: Առաջին մասը ըս-

կրում է Դ դարից և համառոտ կերպով տալիս է Ս. Գրիգոր Լուսավորչի և նրա հաջորդների եկեղեցաշեն ու ազգաշեն գործերը, ինչպես նաև քաղաքական անցուղիները: Այս բաժինը շարադրելու համար, ինչպես ինքն է գրում, օգտվել է այդ դեպքերի ժամանակակից պատմիչների՝ Ագաթանգեղոսի, Խորենացու, Եղիշևի, Ղազար Փարպեցու, Փավստոս Բյուզանդի, Ղևոնդ Երեցի, Մովսես Կաղանկատվացու և այլ մատենագիրների ձեռագիր աշխատություններից: Նա օգտվել է նաև Թովմա Արժրունու, Ծապուն Բագրատունու, Ուխտանեսի, Արիստակես Լաստիվերտցու և Վանական վարդապետի շատ արժեքավոր գործերից:

Studies in Armenian Historiography

Bishop Sebeos
Lewond the Priest
Krakos of Gandzak



Գանձակեցու գրքի երկրորդ մասը, որ ընդգրկում է ԺԳ դարի շուրջ 68 տարվա պատմությունը, խոսում է թաթար-մոնղոլական արշավանքների, մեր հայրենիքին հասցրած մեծ սպերների և նրանց ծանր լծի մասին:

Կիրակոս Գանձակեցին ԺԳ դարի հեղինակ է: Նա եղել է Վանական վարդապետի աշակերտն և նրա հետ էլ հայրենիքից գերվել թաթար-մոնղոլների կողմից, տեսել և

իր մորթի վրա է կրել նրանց բարբարոսությունները, սակայն հետագայում հաջողվել է փախնել գերությունից և վերադառնալ Հայաստան ու մագաղաթին հանձնել ակամատեսի իր ճշմարտապատում վկայություններն ու ժողովրդի կրած անպատում տառապանքները բարբարոս արշավանքների դաժան լծի տակ:

Կիրակոս Գանձակեցու գիրքը ոչ միայն արժեքավոր է Հայաստանի ԺԳ դարի, այլ նաև հենց նրանց՝ թաթար-մոնղոլների պատմության համար: Միջնադարյան մեր հեղինակը, ըստ հնարավորին, տալիս է բավականին լայն ու ճշգրիտ տեղեկություններ մոնղոլների ծագման, նրանց ավերիչ արշավանքների, կատարած բազում տեսակի ավերածությունների և սրածությունների մասին: Դրանցից բացի Գանձակեցին տալիս է նաև արժեքավոր տեղեկություններ մոնղոլների լեզվի, կրոնի, ապրելակերպի և այլ բնագավառների մասին, այն աստիճան, որ մոնղոլների միջնադարյան պատմությունն ուսումնասիրողի համար անկարելի է աննկատ անցնել Գանձակեցու աշխատության կողքով: Սա ևս միջազգային արժեք ունեցող մի գործ է, որ Հայր Զավենը արևմտա-եվրոպական պատմաբանների լուրջ ուշադրությանն է հանձնում:

Բացի այդ Գանձակեցին կանգ է առնում մոնղոլների և Կիլիկիայի հայոց թագավորության հարաբերությունների, մոնղոլների դեմ հալերի և վրացիների մղած համատեղ պայքարի, գյուղացիական դժգոհությունների և այլ հանգամանքների վրա: Այս գիրքը շատ արժեքավոր սկզբնաղբյուր է և Հայաստանի, և՛ հարևան երկրների ԺԳ դարի պատմության համար, քանի որ այն գրված է ականատես մի պատմիչի կողմից,

սակայն երբեմն էլ օգտվելով այլ ականատեսների պատմածից:

Տ. Զավեն ծ. վարդապետ Արզումանյանը այս գրքույկը պատրաստելու համար օգտվել է նախ մեր հայկական սկզբնաղբյուրներից և ապա օտարագրի և հայ պատմաբանների ու քանադեղների այն աշխատանքներից, որտեղ ուսումնասիրվել և հետազոտվել են մեր երեք պատմիչների՝ Սեբեոսի, Ղևոնդի և Կիրակոսի արժեքավոր գործերը:


Հայր Զավենը շատ կարևոր գործ է կատարել այս երեք աշխատանքների մասին նախ զեկուցելով օտար գիտական համաժողովներում, հապա իր ուսումնասիրությունները հրատարակելով անգլերեն լեզվով, որով այն դյուրամատչելի է դարձրել անգլիախոս գիտական լայն հրատարակության: Այսպիսով իր այս գործով նա լուրջ հետաքրքրություն է առաջացրել օտար գիտական շրջաններում:


Այստեղ պետք է գնահատանքի խոսք ասել նաև սույն գրքույկի մեկենաս Պրն. Բյուզանդ Մերյանին, որի նյութական օժանդակության շնորհիվ հնարավոր է եղել այս արժեքավոր գործի հրատարակությունը:

Ի վերջո մեր մաղթանքն է, որ, Հայր Զավենի բաղի օրինակով, մեր արդի հոգևորականությունը ուսումնասիրի մեր անցյալի պատմիչների և գրիչների գրական ու պատմա-ֆանասիրական արժեքավոր աշխատանքները և օտար լեզուներով հրատարակի նույնանման գիտական աշխատանքներ, նրանց վրա հրավիրելով օտարագրի գիտնականների ուշադրությունն ու հետաքրքրությունը:

Ն. ՏԵՐ-ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ս. Էջմիածին





ՀԱՆԳԻՍԱՎՈՐ ՀՈԳԵՀԱՆԳԻՍ



Մի պահ հոգեհանգստյան արարողությունից

Վրահայոց թեմի եկեղեցական խորհրդի և առաջնորդ Տ. Գևորգ եպիսկոպոս Սերալ-դարյանի ջանքերով վերջին տարիներս Թբիլիսիի նախկին վանքի Մալր տաճարի բակից, ներկայիս առաջնորդանիստ կաթո-

ղիկն Ս. Աստվածածին—Մեղրանի Ս. Գևորգ եկեղեցու բակ տեղափոխվեցին հանգուցյալ Գաբրիել արքեպիսկոպոս Այվազյանի (1812—1880), Խորեն եպիսկոպոս Ստեփաննի (1840—1900), հայտնի հայ հասա-




Փոխադրված աճյունների վրա դրված
մոր տապանաքարը


րակական գործիչներ՝ «Մեղու Հայաստանի»-ի խմբագիր Պետրոս Սիմոնյանի (1830—1911) և «Փորձ»-ի ու «Արձագանք»-ի խմբագիր Արզար Հովհաննիսյանի (1849—1904) աճյունները և ամփոփվեցին հիշյալ եկեղեցու հյուսիսային պատի տակ: Փոխադրված աճյունների վրա դրվեց սև մարմարե տապանաքար՝ համապատասխան գրությամբ:

Գերեզմանը ցանկապատվեց ճակատաքիտ երկաթե ճաղերով:

1981 թվականի հուլիսի 12-ին, կիրակի օրը, ս. պատարագից հետո, Ս. Գևորգ եպս. Սերադյարյանի գլխավորությամբ, Ս. Տաթև Հարությունյան և օրվա պատարագիչ Ս. Դավիթ Զելվեյան քահանա հայրերի մասնակցությամբ ու խորուն հավատացյալների մերկայությամբ տեղի ունեցավ հանդիսավոր հոգեհանգիստ՝ Ս. Գևորգ եկեղեցու բակում հանգչող հայ հոգևորական և աշխարհական կարկառուն դեմքերի հիշատակին: Հոգեհանգստյան հանդիսավոր արարողությունից հետո հուզիչ դամբանական ճառով հանդես եկավ վրահայոց թեմի եկեղեցական խորհրդի նախկին նախագահ, հայտնի գրող Սուրեն Ավչյանը:

Տեքստը և լուսանկարները
ՍԱՐԳԻՍ ԴԱՐՉԻՆՑԱՆԻ





ԷԿՈՒՄԵՆԻԿ

ԿՅԱՆՔ

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԳՈՒՄԱՐՈՒՄԸ
ՍԱՆ-ՖՐԱՆՑԻՍԿՈՅՈՒՄ

Օգոստոսի 11—12 օրերին Սան-Ֆրանցիսկո քաղաքում (ԱՄՆ) գումարվել է Ռեյանոյների Միջազգային Բրիտոնեական ժողովը, որին մասնակցել են աշխարհի 76 երկրներից շուրջ 200 ներկայացուցիչներ:

Հայոց Հայրապետի կարգադրությամբ, սույն համագումարին Սովետական Միության մեջ գործող եկեղեցիների ներկայացուցիչների հետ մասնակցել է նաև Նոր-Նախիջևանի և Ռուսաստանի թեմի առաջնորդական տեղապահ և Մայր Աթոռի միաբան Ս. Տիրան վարդապետ Կյուրեղյանը:

Մայր Աթոռը առաջին անգամն էր որ մասնակցում էր նման համագումարին՝ իր ներկայացուցչի միջոցով, որպես դիտորդ: Երիտասարդական Միջազգային վերոհիշյալ կազմակերպությունը հիմնադրվել է 1895 թվականին: Չորս տարին մեկ անգամ է որ գումարվում է սույն կազմակերպության հերթական համագումարը:

Համագումարի ընթացքում կարդացվել են հինգ զեկուցումներ, որոնք քննարկվել են խմբակային միությունում, ապա դրվել լիազումար հիստին, որ ընդունվել են համապատասխան որոշումներ:

Համագումարի օրակարգի վրա դրվել էին նաև Մերձավոր Արևելքի կացությունը,


Լատինական Ամերիկայի և Աֆրիկայի որոշ երկրների քաղաքական անհանգիստ վիճակը և կանանց հավասարության և իրավունքի հարցերը:

Օգոստոսի 22-ին համագումարը ավարտում է իր աշխատանքները եկեղեցական Էկումենիկ արարողություններով: Համագումարի անունից նամակներ են ուղարկվում եկեղեցիների Համաշխարհային Խորհրդին, Միացյալ Ազգերի կազմակերպության և ԱՄՆ-ի նախագահին:

Ս. Տիրան վարդապետը, Սան-Ֆրանցիսկո գտնված օրերին, հետաքրքրվում է նաև տեղի հայ համայնքի կյանքով:

Օգոստոսի 16-ին, կիրակի օրը, Ս. Աստվածածնի տոնին Ս. Տիրան վարդապետը, Կալիֆորնիայի հայոց թեմի առաջնորդ Ս. Վաչե արքեպ. Հովսեփյանի հրավերով, պատարագում է տեղի հայոց Ս. Հովհաննես եկեղեցում՝ հաղորդելով ներկաներին Հայոց Հայրապետի ողջույններն ու օրհնությունները: Ս. պատարագից հետո Ս. Տիրան վարդապետը եկեղեցում աղբյրներ սրահում հանդիպում է ունենում հավատացյալների հետ:

Օգոստոսի 26-ին, Ս. Տիրան վարդապետը վերադառնում է Մոսկվա՝ ի գլուխ իր պաշտոնին:



ՄԱՀ
ՕՆՆԻԿ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԱՍԼԱՆՅԱՆԻ
(1897—1981)


Հուլիսի 29-ին, կարճատև հիվանդությունից հետո, 83 տարեկան հասակում վախճանվում է Բուլղարահայ թեմական խորհրդի երկարամյա ատենապետ Օննիկ Ասլանյանը:

Հանգուցյալը ծնվել էր 1897 թվականին Բուլղարիայի Ռուսե քաղաքում: Սովորել և ավարտել էր Սոֆիայի պետական համալսարանը՝ հետևելով իրավաբանության և տնտեսագիտության: Մի որոշ ժամանակ զբաղվել է փաստաբանությամբ, կատարելով նաև պետական պատասխանատու պաշտոններ, որպես երկրի Միմիստրների խորհրդին առընթեր Տնտեսական խորհրդի և պատվիրակությունների անդամ:

1965 թվականից սկսած Օննիկ Ասլանյանը Բուլղարիայի թեմի թեմական խորհրդի ատենապետի պատասխանատու պաշտոնն է վարել տե՛ծ արդյունավորությամբ և ձեռնահասությամբ՝ հոգուտ Բուլղարիայի Հայոց եկեղեցուն և թեմին:

Հանգուցյալը որպես ճշմարիտ, հայրենասեր մարդ եղել է ջերմ ջատագով, պաշտպանը հայ և բուլղար եկեղեցիների համագործակցության և երկու եղբայր ժողովուրդների դարավոր բարեկամության:

Օննիկ Ասլանյանի մահվան առթիվ Հա-



յոց Հայրապետը հետևյալ ցավակցական հեռագիրն է ուղղում Սոֆիա՝ Բուդապեշտի Հայոց թեմական խորհրդին.

ԲՈՒԼՂԱՐԱՀԱՅ ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՍՈՖԻԱ

Խորին վշտով կարդացինք ձեր տխուր հեռագիրը Խորհուրդիդ երկարամյա ատենապետ Օճճիկ Ասլանյանի մահվան մասին: Երկար տարիներ հավատարմությամբ և մեծ ոգեշնչումով նա ծառայեց Բուդապեշտի Հայ թեմին ու եկեղեցիին, հայրենասիրական ջերմ զգացումներով ու Բուդապեշտի Հայ ժողովուրդների դարավոր բարեկամության պայծառ գիտակցությամբ:

Թող Աստված նրա բարի հոգին հավետ լուսավոր պահի իր հավիտենական խա-

ղաղության աշխարհում և երկնային մխրթանություն պարգևի սգակիր ընտանիքին և թեմական Խորհրդիդ բոլոր անդամներին: Հիշատակն արդարոց օրհնությամբ և դիցի:

ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Հուլիսի 30-ին տեղի է ունենում հանգուցյալի թաղման կարգը Սոֆիայի Հայոց եկեղեցում:

Դամբանականներ են խուսվում հանգուցյալի դագաղի վրա, վեր հանելով նրա եկեղեցանվեր և հայրենասիրական գործունեության կարևորությունը:

Հարգա՜նք Օճճիկ Ասլանյանի պայծառ հիշատակին:





«ЭЧМИАДЗИН»
ОФИЦИАЛЬНЫЙ ЖУРНАЛ ЭЧМИАДЗИНСКОГО КАТОЛИКОСАТА
(АВГУСТ 1981 г.)

1. Пребывании в Первопрестольном Эчмиадзине Иерусалимского армянского патриарха Егише Тертеряна, Патриаршего представителя по Западной Европе архиепископа Серовбе Манукяна и управделами Иерусалимского армянского патриархата архиепископа Шаз Аджемяна за время с 22 июля по 5 августа с. г. (стр. 3—4).
2. Церковная трибуна (хроника): Совершенные литургии и произнесенные проповеди в Кафедральном соборе за август 1981 г. (стр. 5—7).
3. Архиепископ Торгом Гушакян: Праздник Преображения св. Богородицы (стр. 8—10).
4. Епископ Згон Тер-Акопян: Грядя малая; в святых отцах-переводчиках армян в V—XI веках (стр. 11—14).
5. Освящение вновь открытой церкви св. Богородицы в селе Атарбемян Разданского района 16 августа с. г. (стр. 15—17).
6. Пребывание в Грузии греческого патриарха Александрийского и Всея Африки Николая за время с 20—30 июля 1981 г. (стр. 18—20).
7. Архимандрит Акоп Гылынчян: Вопросы связанные с сотворением человека (стр. 21—24).
8. Аргун Атитян: Великие патриархи Александрийской церкви во II—V веках Клементий Александрийский (150—215 гг.), Дионисий Александрийский (190—265 гг.), их историко-филологическое наследие, а также переводы и издания на армянском языке; взаимоотношение армянской и Александрийской церкви во II—V веках (научные исследование) (стр. 25—33).
9. Г. Памбукчян: К 275-летию со дня рождения Константинопольского армянского патриарха Акопа Налаяна (1706—1764) (стр. 34—37).
10. Священник Гевонд Арутюнян: Монастырь св. Шохаката или Марине в Эчмиадзине (стр. 38—41).
11. Кончина епископа Никола, верного друга армянского народа (стр. 42—43).
12. Виктор Мнацаканович Петросянц: Женщины защитницы отечественной культуры в X—XVII веках (стр. 46—50).
13. Жизнь в епархиях: Годовое собрание духовенства Западно-американской (Калифорния, США) армянской епархии; доклады и лекции (стр. 51—52).
14. Нубар Тер-Микаэлян: Рецензия о книге Верховного архимандрита Завена Арзуманяна (США) «Исследования об армянской историографии», изданное в 1981 г. на английском языке посвященная трудам историков Гевонда Ереца, Себеоса и Киракоса Гандзакецы (стр. 53—55).
15. Торжественная поминальная служба в Тбилисской армянской церкви св. Богородицы от 12 июля 1981 года по случаю перенесения останков усопших архиепископа Габреля Айвазяна, епископа Хорена Степане, а так же публицистов Петроса Симоняна и Абгара Ованнесяна (стр. 56—57).
16. Международный Христианский съезд студентов в Сан-Франциско (стр. 58).
17. Некролог по случаю смерти председателя Болгарского армянского епархиального управления Онника Асланяна, имевшие место 19 июля с. г. (стр. 59—60).



„ETCHMIADZIN“
OFFICIAL JOURNAL OF HOLY ETCHMIADZIN
(AUGUST 1981)

1. His Beatitude Eglise Derderian, the Patriarch of the Armenians of Jerusalem, Archbishop Serovbe, the Pontifical delegate of the Armenians of Western Europe, and Archbishop Shahe, the chancellor of the Armenian Patriarchate of Jerusalem, in the Holy See, from the 22-nd of July until the 5-th August (pages 3-4).

2. Divine liturgy services, Holy Masses delivered in the Holy Cathedral and sermons given during the month of August (pages 5-7).

3. Archbishop Torcom Kushagian—The celebration of the Assumption of the Holy Mother of God (pages 8-10).

4. Bishop Zgon Ter-Hagopian—Study devoted to the famous doctors and translators of the Armenian Church of V-XII centuries (pages 11-14).

5. The consecration of the newly opened church of the Holy Mother of God in the village Atarbekian, region of Hrazdan, on the 16-th of August (pages 15-17).

6. His Holiness Nicolaos, the Orthodox Patriarch of Alexandria and All of Africa, in Georgia, during the days of 20-30-th July (pages 18-20).

7. Reverend Hakob Kelenjian—Problems in relative to the creation of man (Pages 21-24).

8. Arthoon Hadidian—The great Patriarchs of the Church of Alexandria in the II-V centuries: Clement of Alexandria (150-215), Dionysius of Alexandria (190-265), their literary heritage and their Armenian translations and printings. The relations between the Armenian and the Alexandrian churches. Study (pages 25-33).

9. G. Pambukjian—The 275-th anniversary of

the birth of Hagop Nalyan, the Patriarch of the Armenians of Constantinople (pages 34-37).

10. Father Ghevont Harutyunian—The monastery of Holy Shoghagat or virgin Mariane in Etchmiadzin (pages 38-41).

11. The noble friend of the Armenian people. The death of the Bulgarian Bishop Nicola, the friend of the Armenian people (pages 42-43).

12. Victor Mnatzakan Petrosiantz—Armenian ladies who have been defenders of the Armenian culture in the X-XVII centuries (pages 46-50).


13. Diocesan life. The annual assembly of the Armenian clergymen of the U. S. A.'s Western diocese. The lectures read (Pages 51-52).

14. Nubar Ter-Mikaelian, Literary critique upon the book of the Rt. Rev. Zaven Arzumanyan (U.S.A.) „Studies in Armenian Historiography“, published in English language during 1981, and offered to the works of Bishop Sebeos, Lewond the Priest and Kirakos of Gandzak historians (pages 53-55).

15. Solemn requiem in the Armenian church of Holy Mother of God at Tbilisi (Georgia) on the 12-th of July 1981, offered on the occasion of the transferring of the ashes of late Archbishop Gabriel Ayvazian, Bishop Khoren Stepanian and the publicists Petros Simonian and Abgar Hovhannisian (pages 56-57).

16. The convocation of the international Christian students' meeting in San Francisco (page 58).

17. Necrology offered on the occasion of the death of Onnig Aslanian, the chairman of the Diocesan Council of the Armenian church in Bulgaria, on the 19-th of July (pages 59-60).



„ETCHMIADZINE“
ORGANE OFFICIEL DU SAINT-SIEGE D'ETCHMIADZINE
(AOUT 1981)

1. Visite au Saint-Siège d'Etchmiadzine de Sa Béatitude Yéghiché Tertérian, Patriarche des Arméniens de Jérusalem, de Mgr. l'archevêque Sérovpé Manoukian, délégué apostolique pour l'Europe Occidentale, de Mgr. l'archevêque Chahé Adjémian, chancelier du patriarcat arménien de Jérusalem, du 22 juillet au 5 août (pages 3—4.)

2. Brèves informations concernant la célébration des saintes messes, les sermons prononcés à cette occasion et d'autres cérémonies religieuses qui ont eu lieu dans la cathédrale de Saint Etchmiadzine au cours du mois d'août (pages 5—7).

3. Archevêque Torgom Gouchakian—„La fête de l'Assomption“ (pages 8—10).

4. Evêque Zgon Ter-Hakobian—„Les oeuvres des célèbres docteurs et traducteurs de l'Eglise arménienne“ (Ve-XIIe siècles) (pages 11—14).

5. La consécration de l'église de la Sainte Vierge à Atarbékian (région de Herazdan), le 16 août 1981 (pages 15—17).

6. Sa Sainteté Nicolaos VI en Géorgie. Visite officielle du Patriarche grec orthodoxe d'Alexandrie et de toute l'Afrique à l'église orthodoxe géorgienne, du 20 au 30 juillet 1981 (pages 18—20).

7. Père Hakob Kelendjian—„Problèmes concernant la création de l'homme“ (pages 21—24).

8. Artoun Hatitjan—„Clément d'Alexandrie (190—265) et Dionysius d'Alexandrie (190—265).“ Dans son étude l'auteur présente la vie, l'héritage littéraire, ainsi que les traductions et publications en arménien des oeuvres des célèbres Pères de l'Eglise. L'article est suivi d'un bref aperçu sur les relations entre l'Eglise arménienne et l'Eglise d'Alexandrie aux IIe-Ve siècles (pages 25—33).

9. G. Bamboukdjian—„Le 275^e anniversaire de la naissance de l'archevêque Hakob Nalian

(1706—1764), Patriarche des Arméniens de Constantinople“ (pages 34—37).

10. Père Ghévonde Haroutiounian—„Le monastère de Saint-Choghakath (dédié à la mémoire de la vierge Mariane) à Etchmiadzine“ (pages 38—41).

11. Le décès de l'évêque Nicolas, ami du peuple arménien (de l'Eglise orthodoxe bulgare) (pages 42—43).

12. Victor Pétrossians—„Les femmes arméniennes connues en Arménie aux Xe-XVIIe siècles sous le nom de „défenseurs du patrimoine culturel des Arméniens“ (pages 46—50).

13. Information sur la vie ecclésiastique du diocèse des Arméniens des Etats-Unis d'Amérique (région occidentale) (pages 51—52).

14. Nubar Ter-Mikaéljan—Compte rendu de l'ouvrage du Père Zaven Arzoumanian publié en 1981 aux U. S. A. sous le titre „Studies in Armenian Historiography“ et consacré aux oeuvres des historiens arméniens Ghévonde Yérets, Sébéos et Kirokos Gandzakétsi (pages 53—55).

15. Messe de requiem célébrée le 12 juillet 1981 à Tbilissi, dans l'église arménienne de la Sainte Vierge, à l'occasion du transfert des cendres de l'archevêque Gabriel Ayvazian, de l'évêque Khoren Stépanian et des publicistes Pétros Simonian et Abgar Hovhannissian (pages 55—57).

16. Information sur la Conférence internationale chrétienne des étudiants tenue du 11 au 12 août à San Francisco (pages 58).

17. Nécrologie de M. Onnik Aslanian, président du conseil diocésain de l'église arménienne de Bulgarie, décédé le 19 juillet 1981 (pages 59—60).



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երուսաղեմի հայոց ամենազատիվ տ. Եղիշե սրբազան պատրիարքը, Արևմտյան Եվրոպայի Հայրապետական պատվիրակ տ. Սերավրե սրբեայր, Մանուկյանը և Երուսաղեմի հայոց պատրիարքարանի ղեկավարներ տ. Շահն արքեպ. Աճեմյանը Մայր Աթոռում	3
Եկեղեցական բեմ. լուրեր	5
ԹՈՐԳՈՄ ԱՐՁԵՊՍ. ԳՈՒՇԱԿՅԱՆ—ՏՕՆՔ Ս. Աստուածածնի	8
ԶԳՈՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐ-ՀԱԿՈԲՅԱՆ—Աձու փոքր	11
Հրազդանի շրջանի Աթարբեկյան գյուղի նորարար սուրբ Աստվածածին եկեղեցու նախակառույցն ու օծման արարողությունը	15
Ալեքսանդրիայի և համայն Աֆրիկայի հունաց պապ և պատրիարք Նորին Սրբություն տ. Նիկողայոս Վեցերորդը Վրաստանում	18
ՀԱԿՈԲ ՎԱՐԳԱՊԵՏ ԳԸԼՆԺՅԱՆ—Մարդու ստեղծման հետ առնչվող հարցեր	21
ԱՐԹՈՒՆ ՀԱՏԻՏՅԱՆ—Ալեքսանդրիայի եկեղեցու մեծ Հայրապետները Բ—Ե դարերում	25
Գ. ԲԱՄԲՈՒՐՃՅԱՆ—Հակոբ պատրիարք Նալբանի (1706—1764) ծննդյան 275-ամյակի առթիվ	34
ՂԵՎՈՆԴ ԲԱԶԱՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ—Սուրբ Շողակաթի կամ Մարիամն կույսի վանքը	38
Հայ ժողովրդի ազնիվ բարեկամը	42
ՎԻԿՏՈՐ ՄՆԱՅԱԿԱՆԻ ՊԵՏՐՈՍՅԱՆՑ—Հայրենական մշակույթի պաշտպան հայ կամայր	46
ՆՈՒԲԱՐ ՏԵՐ-ՄԻՐԱՅԵԼՅԱՆ—Գրախոսություն «Հայկական պատմագրության ուսումնասիրություններ»	53
Հանդիսավոր հոգևորանցիստ	56
Ուսանողների միջազգային ժողովի գումարումը Սան-Ֆրանցիսկոյում	58
Մահ Օննիկ Հովհաննիսի Ապանյանի (1897—1981)	60
«Эчмнадзин» официальный журнал Эчмнадзинского Католикобата	61
„Etchmiadzin“ official journal of Holy Etchmiadzin	62
„Etchmiadzine“ organe officiel du Saint-Siege d'Etchmiadzine	63

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷՋՄԻԱՄԵՆ

«ԷՋՄԻԱՄԵՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмнадзин, Редакция журнала «Эчмнадзин».
Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine. Arménie, URSS

Հանձնված է արտադրության 3.09.1981 թ.: Ստորագրված է տպագրության 2.10.1981 թ.:
Տպագրական 4 մամուլ, թուղթ 60×84¹/₈, պատվեր 671

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան, 1981 թ.